# ՈՐԵՍ ԱՐԱՐԱՏԻ

Թիվ 4 (10), հունիս-հուլիս, 2006 թ.

Քանդակագործ Ռուբեն Նալբանդյանի հետ
հարցազրույցը տե՛ս էջ 18-19

Հայը...
«Թիւով գրեթէ ամենափոքրն է,
տառապանքով՝ ամենամեծը.
ժամանակով՝ ամենահինն է,
վիճակով՝ ամէնից անփոփոխը:
Ամէնից անապասկը իր երկրի դիրքն է,
Ինքը՝ ամէնից յամառ կառչած նրան...»:

Գերենիկ Դեմիրճյան




## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | |
|---|---|---|
| Խմբագրականի փոխարեն | էջ1-4 | |
| Հասարակական համախմբման գործընթացների շուրջ | էջ 5 | Թամարա Վարդանյան |
| «Նոր կայսրություն» Մոսկվա-Թեհրան առանցքի շրջանակներում և Հայաստանի դերը | էջ 6 | Վարդան Հովհաննիսյան |
| Ռուսաստանի միջուկային ուժերը կուժեղացվեն “Тополь-М” և “Булава-30” հրթիռներով | էջ 6-7 | Հայկ Գաբրիելյան |
| Ադրբեջանի ներքին կյանքը | էջ 8-9 | Հայկ Մարտիրոսյան |
| «Թուրքիան և Ղարաբաղյան հակամարտությունը» | էջ 10 | Հայկ Դեմոյան |
| Արցախյան ազատամարտ - 15 | էջ 10-11 | Լիլիթ Հարությունյան |
| Արամ Երկանյան. Հայ ցեղի վրիժառու բազուկը | էջ 12 | Հակոբ Մանջյան |
| Անձնվեր հայորդին. Աբրահամ Բեջանյան | էջ 13 | Լիլիթ Մնացականյան |
| Սիլվա Կապուտիկյան | էջ 15 | |
| Կամիլա | էջ 15 | |
| Գիտական ներուժի վերականգնում, մտավորականության՝ վերադարձ | էջ 16-17 | Վիկտորյա Բուռնազյան |
| Բարոյապե՛ս է պետք կիրթ լինել | էջ 18-19 | Զեմմա Բաղդադյան |
| Հոգու և գույների սիմֆոնիա | էջ 21 | Նվարդ Բորյան |
| Ջավախքում նոր պոետներ կծնվեն | էջ 23 | Լիլիթ Մակարյան |
| Մի քիչ պղպեղ՝ մայրական սիրո մեջ | էջ 24-25 | Նարինե Աբրահամյան |
| «Հայ քաղաքացիության փորձադաշտը» | էջ 26-27 | Սերգեյ Գալոյան |
| Հովհաննես Լեփսիուս. «Ճշմարտության ջատագովը» | էջ 27 | Արփինե Ալավերդյան |
| Խաչատուր Աբովյան. Արարատ | էջ 28 | Արա Զոհրաբյան |
| Արմենականութեան գիտակցումը կարավանապետի ճանաչմամբ | էջ 29 | Վարդան Նիկողոսյան |
| Հայ մտքի բարեկամների ակումբ | էջ 30 | |
| Ազատության գլխիվայր շրջումն ու խեղաբեկումը մեր օրերի «պոեզիայում» | էջ 31 | Սիրուշ Բաղդասարյան |
| «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի պատմական արմատները | էջ 32-33 | Էդմոն Խուրշուդյան |
| Պատմական ակնարկ | էջ 34 | Արժանիկ Հովհաննիսյան |
| Տարօն-Մուշ | էջ 35-36 | Հովիկ Մկրտչյան |



Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է տպագրության՝ 21.08. 2006

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of “Oukht Ararati” LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue: Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ



**«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:**

**Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:**

# Redrawing the Middle East map

**Redrawing the Middle East map** - Միջին Արևելքի Վերագծված Քարտեզ, **Free Kurdistan** - Ազատագրված Քուրդիստան, **Greater Lebanon** - Մեծ Լիբանան, **West Bank (Status undetermined)** - Արևմտյան Բանկ (անորոշ կարգավիճակ), **Greater Jordan** - Մեծ Հորդանան, **Suni Iraq** – Սյունի Իրաք, **Baghdad (city-state)** - Բաղդադ (քաղաք-նահանգ),
**Arab Shia State** - Շիա Արաբական Նահանգ, **Saudi Homelands Independent Territories** - Սաուդյան Հայրենիքի

# ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ «ԴԵՄՈԿՐԱՏԱՑՄԱՆ» ՆԱԽԱԳԻԾԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներկայացնում ենք ինտերնետ կայքում տեղադրված Մերձավոր Արևելքի առկա իրողությունն ու Արևմուտքի կողմից այն առաջիկայում վերածևելու քարտեզը /տե՛ս, **Ralph Peters, "Blood borders", Armed Forces Journal, 2006 /"Never Quit the Fight" and 'his' new chopped off 'Middle East Map'/** (Մայր օրինակները տե՛ս, կից գունավոր էջում: Հոդվածի թարգմանությունը լույս է տեսել «Ազգ» օրաթերթի 25.08.2006-ի համարում): Քարտեզը, որպես Մերձավոր Արևելքի նկատմամբ Արևմուտքի կողմից ծրագրված և հետևողականորեն իրականացվող, այսպես կոչված՝ աշխարհի գլոբալացման ընդհանուր ծրագրի բացահայտված պատկեր, ըստ էության, ներկայացնում է միջանկյալ, անցումային այն իրողությունը, որի ստեղծման հիմքի վրա, հաջորդ փուլում պետք է (ամերիկանացման սկզբունքով) ձևավորեն «Մերձավոր Արևելքի Միացյալ Նահանգներ» անվանում ունեցող ընդհանուր պետություն: Այնտեղ, ըստ ներկայացված քարտեզի, ներառվելու են՝ 1. Հայաստանի Հանրապետությունը (առանց Արցախի), 2. Թուրքիան (երկփուլ մասնատումով, առայժմ ներկայացված է Թուրքիայի մասնատման առաջին փուլը), 3. Սիրիան (մասնատումով), 4. Լիբանանը (ընդարձակումով), 5. Հորդանանը (ընդարձակումով), 6. Սաուդյան Արաբիան (մասնատումով), 7. Իրաքը (մասնատումով), 8. Իրանը (արևմուտքից և հարավ-արևելքից մասնատումով, իսկ հյուսիս-արևելքից ընդարձակումով), 9. Աֆղանստանը (արևմուտքից մասնատումով, իսկ արևելքից ընդարձակումով), 10. Պակիստանը (մասնատման արդյունքում մնալու է 1/3-ի չափով): Ուշագրավ է, որ Ադրբեջանը երկրորդ քարտեզում է ի հայտ գալիս Մերձավոր Արևելքի ընդհանուր տարածքում: Դա պայմանավորված է նրանով, որ ներկայիս Բաքուն սպառել է Արևմուտքի կողմից՝ 1918-ից, իր վրա դրված առաքելությունը: Հիմա այն հանձնվելու է հիմնական դերակատարին՝ Իրանի հյուսիսային շրջանի Ադրբեջանին, որի անունով էլ այն ժամանակ կնքել էին իրենց կողմից ստեղծված այդ պետությունը: Ասել է թե՝ քարտեզում նշված Ադրբեջանի ընդարձակումը ընթանալու է ոչ թե հյուսիսից հարավ (ինչպես թյուրիմացաբար կարծում է պաշտոնական Բաքուն), այլ լրիվ հակառակ տրամաբանությամբ՝ հարավից հյուսիս: Այսինքն, Իրանի հյուսիսային շրջանը պատերազմական ճանապարհով ոչ միայն անջատվելու է Իրանից, այլև զավթելու, իրեն է միացնելու հյուսիսը՝ ներկայիս Ադրբեջանը (ենթադրվում է՝ Նախիջևանը և Արցախը միասին): Ի դեպ, երկրորդ՝ Սևծովյան ընդհանուր պետության ստեղծման փուլում, Թուրքիայի մասնատումը՝ ի շարունակություն քարտեզում նշվածի, հիմնականում ընթանալու է Սայքս - Պիկոյի պայմանագրի հայտնի տրամաբանությամբ, նաև հանցագործ «գործիքի» վերացման՝ ավելի քան հայտնի սկզբունքով: Ըստ այդմ, Թուրքիայից անջատվելու և Բուլղարիային է տրվելու Բոսֆոր - Դարդանել նեղուցներից արևմուտք գտնվող ամբողջ հատվածը՝ նեղուցներից կրկին հեռու պահելով Հունաստանին: Իսկ Փոքր Ասիա թերակզու արևմտյան մասում (մոտ 1/3-ի տարածքում) ստեղծվելու են նոր, երկու առանձին պետություններ, մեկը՝ Սև ծով-նեղուցներ, մյուսը՝ Միջերկրական ծով-նեղուցներ սահմաններով:

Ներկայացված քարտեզում մնացած Թուրքիան էլ սեղմվելու է հյուսիս-կենտրոնական մասում՝ ելք ունենալով միայն դեպի Սև ծով: Իսկ հարավային կեսում՝ Միջերկրական ծովի ելքով, ստեղծվելու է Միջերկրյա-ծովյան ընդհանուր պետության կազմում ներառվող մեկ այլ, նոր պետություն:

Հասկանալի է, որ «ընդարձակում» նշանակում է տվյալ երկրի կողմից զավթում հետապնդող պատերազմ, իսկ «մասնատումը» ներառելու է ինչպես ներքին՝ անջատողական - քաղաքացիական, նույնպես և արտաքին՝ պաշտպանողական պատերազմներ: Պատկերը սարսափազդու է: Հսկայական մի տարածք միանգամից վերածվելու է տարաբնույթ և տարաշերտ լո-

**Մերձավոր Արևելքի առկա իրողության և Արևմուտքի կողմից այն առաջիկայում վերածևելու համեմատական քարտեզ, որը կարող եք համեմատել կից քարտեզների հետ:**



կալ պատերազմների ընդհանուր մի թատերաբեմի: Ճիշտ այնպիսին, ինչպիսին Առաջին համաշխարհային պատերազմն էր, երբ երկրներն ու ժողովուրդները այդպես էլ չհասկացան, թե ո՞վ, ո՞ւմ դեմ և ինչո՞ւ է պատերազմում:

Քարտեզում առկա աշխարհաքաղաքական տրամաբանությունը գործնականորեն բացահայտում է նաև վերջին մի քանի տասնամյակներում կատարվածի իրական պատկերը. Աֆղանստանի, Իրանի և Իրաքի նախկին պատերազմների, Իրանի ներկայիս ատոմային էներգետիկայի հիմնախնդրի, նաև ԱՄՆ - Իրաք զավթողական և ներկայիս Իրաքի կրոնա - քաղաքացիական պատերազմների բուն դրդապատճառներն ու հեռահար նպատակները: Այն նաև քողազերծում է Հյուսիսային Կովկասի ահաբեկչական գործողությունների, ինչպես և կովկասյան, այսպես կոչված՝ լոկալ հակամարտությունների, այդ թվում՝ Չեչնիայի, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի, Աջարիայի և Արցախի հիմնախնդիրների 15-ամյա «անլուծելիության» բուն պատճառներն ու դրանց «լուծման» արևմտյան ակնկալիքները:

Առաջին իսկ հայացքից քարտեզը համահունչ է Արևմուտքի (հիմնականում ԱՄՆ - Անգլիա - Իսրայել եռյակի) կողմից վերջին տարիներին հաճախակի արծարծվող, այսպես կոչված՝ «Մեծ Մերձավոր Արևեք» ստեղծելու ծրագրին: Այն, ինչպես հայտնի է, համարվում է աշխարհի գլոբալացման («Աշխարհի Միացյալ Նահանգների» ստեղծման, դեռ 1890-1908թթ. նախագծված) ծրագրի երկրորդ փուլի գործընթաց: Առաջին՝ հիմնադիր փուլը, ինչպես հայտնի է, այսպես կոչված՝ «Եվրոպայի Միացյալ Նահանգներ» կոչվող ընդհանուր պետության ստեղծումը պետք է լիներ, որի առաջին քայլը՝ Եվրոմիության ստեղծումը, գործնական առումով՝ 2005-ին, գրեթե ավարտուն վիճակի էր բերվել: Խանգարեցին Ֆրանսիան ու Հոլանդիան՝ հանրաքվեով մերժելով Եվրոմիության Սահմանադրությունը: Ի դեպ, ներկայիս, որպես ուժերի վերադասավորման և նոր գրոհի նախապատրաստման մարտավարական քայլ, սառեցված են ինչպես ԵՄ Սահմանադրության ընդունումը, այնպես էլ ԵՄ բյուջեի ձևավորումը:

Ըստ ծրագված հաջորդականության, աշխարհի գլոբալացման երկրորդ փուլում «Մերձավոր Արևելքի Միացյալ Նահանգների» ստեղծման գործընթացին պետք է նախորդի Մերձավոր Արևելքի քարտեզի ամբողջական վերաձևումը («Բաժանիր, որ տիրես» սկզբունքով), այսինքն այն, ինչ պատկերված է ներկայացված քարտեզում: Ինչպես ակնհայտ է, այն ներկայացնում է բազմաշերտ և բազմաբովանդակ հակամարտություններ խթանող և մեծ լարվածություն կուտակող ներքին սահմաններով ամբողջացող մի հսկայական՝ պայթունավտանգ տարածք, որի զսպման, ասել է թե՝ խաղաղ համակեցության ընթացքի կարգավորման, ինչպես և ներքին «պայթյունների» խթանման բոլոր լծակներն ու մեխանիզմները դուրս են բերվել ընդհանուր տարածքից:

Այսինքն՝ ընդհանուր այս տարածքում ներառված բոլոր երկրների ու ժողովուրդների կյանքը, կենսագործընթացները, նրանց ներկան և ապագան լիովին կախվածության մեջ են դրվում արտաքին ազդեցության կառույցների կամային ցանկություններից: Դրան զուգահեռ պետք է խթանվի, նաև, այսպես կոչված՝ «Սևծովյան Ընդհանուր Պետության» ստեղծման գործընթացը, որի սկզբնառու քայլը պետք է լիներ «Կովկասյան Ընդհանուր Պետության» ստեղծումը (դեռ 2003-2005թթ.): Ինչպես հայտնի է, այն տապալվեց ժամանակացույցից հետ ընկնելու պատճառով: Ներկայումս, արևմտյան - քաղաքական ժամանակացույցի մեջ չտեղավորվելու պատճառով, Եվրոմիության նախաձեռնությամբ փորձ է արվում երկու՝ հաջորդական (Կովկասյան և Սևծովյան) քայլերը իրագործման տանել մեկ ընդհանուր, այսպես կոչված՝ «Սևծովյան Միության» ստեղծմանը հանգեցնող «Նոր հարևաններ» գործընթացով: Դրանով է պայմանավորված վերջերս վրաց - աբխազական և վրաց - օսեթական հակամարտությունների՝ ռազմական գործողությունների խթանման փորձերը: Դրանց կիսաջորդի «Սևծովյան Միացյալ Նահանգներ» կոչվող ընդհանուր (Եվրոմիության համար առժամանակ բուֆերային տարածքի դեր ունեցող) պետության ստեղծումը: Վերջինիս էլ, ըստ նախատեսվածի, կիսաջորդի պայմանականորեն «Միջերկրյածովյան Միացյալ Նահանգեր» կոչվող ընդհանուր պետության ստեղծումը: Որտեղ, ինչպես երևում է ներկայացված քարտեզից, Իսրայելի գլխավորությամբ, ի շարս Աֆրիկա մայրցամաքի հյուսիսային մի շարք երկրների, կներառվեն **1. Կիպրոսը, 2. Եգիպտոսը, 3. Էրիտրան, 4. Եվթոպիան, 5. Ջիբուտին, 6. Սոմալին (ամբողջությամբ, կամ միայն հյուսիսային մասը), 7. Օմանը, 8. Միացյալ Արաբական Էմիրությունները, 9. Կատարը և 10. Քուվեյթը**:

Եվրոպական երկրների կողմից 2005-ին Եվրոմիության Սահմանադրության մերժումը լուրջ հարված էր աշխարհի գլոբալացմանը: Քանզի կրկին (ինչպես նախորդ դարասկզբին) հառնում է «Եվրոպայի Միացյալ Նահանգների» ստեղծումը տապալող հեռանկարը: Խոչընդոտը վերացնելու, ասել է թե՝ եվրոպական երկրներին ԵՄ Սահմանադրությունը ընդունել հարկադրելու, ինչպես և երկրորդ փուլով դրան հաջորդող գործողություններն իրագործելու համար (ըստ Եվրոմիության և աշխարհի գլոբալացման «կոնստրուկտորների»), նպաստավոր է համարվում Եվրոպայի շրջակայքում՝ մոտիկ և հեռու հարևանությամբ հրահրվող պատերազմները: Նրանց կարծիքով, Կովկասում և Մերձավոր Արևելքում լոկալ - անջատողական, նաև զավթողական պատերազմները ոչ միայն կնպաստեն Մերձավոր Արևելքի քարտեզի վերաձևմանը, այլև կհանդիսանան գործուն միջոց եվրոպական երկրներին Եվրոմիության Սահմանադրությունն ընդունել հարկադրելու համար. իբրև թե՝ կանխարգելելու համար արևելյան պատերազմները Եվրոպա ներթափանցելու սպառնալիքը, ինչպես և իսլամական աշխարհից իբրև թե՝ ընդհանուր՝ համաեվրոպական պաշտպանվածություն ստեղծելու անհրաժեշտությունը:

Այդ, երիցս մարդատյաց և ամբողջ աշխարհին լրջորեն սպառնացող խնդրին էր, որ ծառայեցրին տարիներ առաջ Թալիբանին, Ալ Ղաիդային վերացնելու պատրվակով, Աֆղանստանն ու Իրաքը զավթելու, ավերելու և քարուքանդ անելու պատերազմները: Հիմա էլ, Հզբալլահի (թարգմանելիս՝ Աստծո կուսակցություն) պատրվակով, նույն հանցագործության թիրախը դարձրել են Լիբանանը, ուր Իսրայելը (կանոնավոր բանակը) պատերազմում է հենց միայն Լիբանանի ժողովրդի դեմ՝ նպատակայնորեն քարուքանդ անելով ամբողջ Լիբանանը:

Աշխարհին տիրելու արևմտյան հիվանդագին մտածողության ու նպատակային հանցագործ գործողությունների այս ծրագրված շարքում հաջորդ թիրախները, ինչպես երևում է քարտեզից, Իրանը, Սիրիան, Սաուդյան Արաբիան ու Պակիստանն են:

**Ինչպես հետևում է ստորև ներկայացված քարտեզից.**

1. Հյուսիսային Կովկասի և Ղազախստանի հարավային մասերը չեն նշվել որպես **Ռուսաստան և Ղազախստան**. պարզապես չեն ցանկացել դրանց ճակատագիրը կանխավ բացահայտել: Սակայն, հենվելով սույն քարտեզի տրամաբանությանն ու 1987-88թթ. առ այսօր Կովկասի և Միջին Ասիայի տարածաշրջաններում ընթացող ԽՍՀՄ՝ հետագայում նաև արտաքին ազդեցության աշխարհաքաղաքական գործընթացներին, ամենևին էլ դժվար չէ պատկերացնել թե ինչպես են վերագծելու Հյուսիսային Կովկասի, Ղազախստանի և Միջինասիական մյուս երկրների քարտեզները:

**2. Վրաստանին** ձեռք չեն տվել, քանզի այն ընդգրկվելու է Սևծովյան ընդհանուր պետության կազմում: Սակայն ուշագրավ է, որ չի նշված **Թբիլիսին**: Իրականում պատճառն այն է, որ Վրաստանը մասնատվելու է, ուստի, հարկ չեն համարել կանխավ բացահայտել նոր ձևավորման կարգավիճակն ու մայրաքաղաքը: Չի նշված նաև **Երևանը,** դրա փոխարեն օղակը ցույց է տալիս Արարատ լեռը: Այլ է **Բաքուն**, այն լրիվ նոր՝ հարավից ընդլանվող, Ադրբեջանի մայրաքաղաքն է լինելու:

3. Ըստ ձևափոխության, **Հայաստանին** է միանալու **Արևելյան Հայաստանի**, ինչպես մինչ այդ, նույնպես և 1918-20թթ. ՀՀ-ն մաս կազմող **Արդահան - Կարս - Իգդիր հատվածը՝ ներառյալ Արարատ լեռը**, որը 1921թ. մարտի 16-ի Ռուս

- թուրքական բարեկամության պայմանագրով, բոլշևիկյան Ռուսաստանը (25 տարով) «նվիրել է» Թուրքիային: Ի դեպ, 1991թ. մարտի 12-ին, Գորբաչովն այդ պայմանագիրը կրկին երկարաձգել է ևս 20 տարով, որը պետք է վերանայվի 2011թ.: Չենք կարծում, որ Արևելյան Հայաստանի այդ հատվածը ՀՀ-ին միացնելը ունի միջազգային դիվանագիտության պատմության մեջ նախադեպը չունեցող այդ հանցագործության հետևանքները վերացնելու, պատմական արդարությունը վերականգնելու միտում: Այն, ավելի շուտ, հետապնդում է մեկ այլ նպատակ: Պայմանավորվող երկրներից մեկի կողմից պայմանագիրն այլևս անվավեր ճանաչելու միջոցով Ռուսաստանին զրկել Հարավային Կովկասի երեք երկրների (առաջնահերթորեն Հայաստանի) նկատմամբ ունեցած պայմանագրային պարտավորություններից, այդ թվում, Թուրքիայի ներկայիս սահմանները Հայաստանին ճանաչել հարկադրելու պարտավորությունից (քանզի 1990-ից՝ Հայաստանի Անկախության Հռչակագրից հետո, ՀՀ-ի համար ուժը կորցրած Կարսի պայմագիրն առկախ է դարձրել Թուրքիայի պետական սահմանների հարցը):

Պայմանագրի անվավեր ճանաչումը լուրջ հիմք է հանդիսանալու Թուրքիայի քարտեզի լրիվ վերաձևման համար: Քանզի Թուրքիայի ներկայիս սահմանները Խորհրդային Ռուսաստանի կողմից, այդ պայմանագրով, առաջինը ճանաչված լինելու փաստացի հենքի վրա էր, որ տարիներ հետո, Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած միջազգային հանրությունը դեֆակտո ճանաչեց Խորհրդային Ռուսաստանի՝ հետագայում նաև ԽՍՀՄ-ի կողմից, 1921թ. Ռուս - թուրքական պայմանագրով որոշված սահմանները, որպես Թուրքիայի պետական սահման:

4. Ինչ վերաբերում է հայկական **Նախիջևանին**, որը նույն պայմանագրով՝ երրորդ կողմին (նկատի ունենալով Իրանին) չզիջելու պայմանով, որպես ինքնավար հանրապետություն, դրվել էր Ադրբեջանի խնամակալության տակ, կրկին դուրս է մնում Հայաստանի մաս կազմելուց: Այս անգամ այն թողնում են լրիվ նոր ձևավորվող Ադրբեջանի կազմում: Այդ նոր Ադրբեջանի ստեղծումով նաև վերացնում են Մեղրիի ռազմավարական խնդիրը:

5. Ներկայացված քարտեզում ընդհանրապես բացակայում է **Արցախը**: Ասել է թե՝ Արևմուտքը ընդլայնվող Ադրբեջանի կազմի մեջ է թողնում ոչ միայն Նախիջևանը, այլև 15 տարի հաղթականորեն կանգուն Արցախը, մեզ՝ համայն հայությանը, պարտադրված ազգային ազատագրական պատերազմով իսկ ազատագրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այն ընդամենը որպես տարածք միացված է Ադրբեջանին: Ասես՝ Արցախը ոչ կա, ոչ էլ եղել է: Այնպես որ, նույնիսկ ամենաթունդ «եվրոհավատացյալին» իսկ հիմա արդեն հասկանալի պետք է դառնա, թե ինչո՞ւ էր Մինսկի հանձնախբի շրջանակներում Արևմուտքի կողմից 14 տարի շարունակ «խաղաղ կարգավորման» տարվող Արցախի խնդիրը դարձել «անլուծելի»: Պարզ է, դեռ ժամանակը չի եկել: Իսկ ժամանակը, ոչ միայն հայանպաստ չէ, այլև ավելի քան վտանգավոր՝ ՀՀ-ի, ԼՂՀ-ի և հայության համար: Քանզի այն կգա, երբ ընթացքի մեջ կլինի **Մերձավորարևելյան ռազմաքաղաքական մեծ խառնաշփոթը**, և կմասնատվեն Իրանը, Իրաքը և Սիրիան:

6. Քարտեզի վրա **Արցախի** բացակայությունը չի կարելի դիտել որպես Մինսկի խմբի կողմից առաջարկելիք փոխզիջումային տարբերակ: Ասել է թե՝ Արցախը հանձնելու դիմաց **Արդահանը, Կարսը, Իգդիրն ու Մասիսները** ՀՀ-ին վերադարձնելու «փոխզիջում»: Խնդիրն ավելի խորքային է և շատ ավելի դավադիր: Քանզի պլանավորել են Արցախը, որպես տարածք կրկին Ադրբեջանին բռնակցել կամ հանրաքվեի, կամ պատերազմի, կամ էլ, այսպես կոչված՝ «ինքնալուծարման» ճանապարհով: Հասկանալու համար Արցախյան խնդրով եվրոարևմտյան այսօրինակ մերժողական համառությունը, հարկ է հիշել, որ 1921թ.՝ Արևմտյան Հայաստանում դեռևս ընթացող (1915-23թթ.) ցեղասպանության իրողությունում, կնքված Ռուս - թուրքական բարեկամության պայմանագիրը առաջնահերթորեն հետապնդում էր հայերի ցեղասպանությունը Արևելյան Հայաստանում՝ միջնորդված ձևով, ավարտին հասցնելու նպատակ: Միջնորդվածության տարբերակի ընտրության պատճառը Թուրքիայի կողմից ցեղասպանությունը Արևելյան Հայաստանում ուղղակի կերպով ավարտին հասցնելու անկարողությունն էր: Քանզի 1918-20թթ., չնայած բոլշևիկյան Ռուսաստանի բազմակողմանի աջակցությանն ու ջանքերին, Թուրքիային չէր հաջողվում ցեղասպանությունը ուղղակիորեն ավարտելու համար զավթել քառակողմ պատերազմի մեջ գտնվող Հայաստանի Հանրապետությունը: Ըստ միջնորդված տարրերի, ակնկալվում էր խորհրդայնացվող՝ լրիվ զինաթափված, սովի ու անպաշտպանվածության մատնված Հայաստանը առաջիկայում ստեղծվելիք Թուրքիա - Ադրբեջան - Վրաստան ֆեդերատիվ հանրապետության մեջ հարկադրաբար ներառելու ճանապարհով, մի քանի տարվա ընթացքում (հայաթափելու և բռնագաղթի ենթարկելու արդյունքում) որպես պետություն լուծարել, իսկ տարածքն էլ բռնակցել Ադրբեջանին ու Վրաստանին:

Ի դեպ, ինչպես վկայում են վերջի 15 տարիների դեպքերի զարգացումները, Հայաստանը՝ որպես պետություն վերացնելու արևմտյան ծրագրերը չեն փոխվել: Փոխվել է ձեռագիրը, նաև ավելացել են հաջորդ փուլում Վրաստանի և Ադրբեջանի մասնատման, լուծարման խնդիրները: Մեր հոգսը չէ, ուստի, այստեղ չենք քննարկում այդ երկրների ճակատագրերի հետագա ընթացքի մանրամասները: Ինչ վերաբերում է Հայաստանը, նաև շատ այլ երկրներ, որպես պետություն վերացնելու արևմտյան նոր ծրագրերին, հարկ է նշել, որ ընտրել են այնպիսի ձեռագիր, որպեսզի վաղը ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից, որևէ եվրոպական կամ այլ երկիր պատասխանատվության չենթարկվի մարդկության դեմ կատարած հանցագործության համար: Այդ խնդիրն ապահովելու համար է, որ 2001-ից առ այսօր **Եվրոմիությունը ՀՀ-ի, հիմա նաև ԼՂՀ-ի նկատմամբ իրագործում է Սահմանադրական - օրենսդրական դիվերսիոն ներխուժումներ**: Ասել է թե՝ ծրագրում են առաջիկայում հայկական մեր երկու երկրների իշխանավորների ձեռքերով իրագործել ՀՀ-ի և ԼՂՀ-ի «ինքնալուծարման» գործընթացը:

7. ԱՄՆ-ը, Անգլիայի և Իսրայելի հետ միասին՝ **Իրաքի** տարբերակով, **Իրանին** պատերազմի մեջ ներքաշելով, նաև Իրաքում ավելի մեծ ծավալների հասցնելով շիաների և սյունիների միջև, իրենց՝ արևմուտքի կողմից (միջնորդված ձևերով) հրահրված ու թափ առնող քաղաքացիական պատերազմը, ինչպես և ռազմաքաղաքական ընդհանուր այդ խառնաշփոթի մեջ ներքաշելով **Սիրիային, Թուրքիային ու քրդական շարժումը**, փորձելու են ստեղծել նոր **«Ազատագրված Քուրդիստան»** պետություն: Այն, ինչպես պատկերված է քարտեզում, տեղավորելու են. **ա)** ներկայիս Թուրքիայից անջատվող, ըստ էության, Արևմտյան Հայաստանի արևելյան կեսի, **բ)** Սիրիայի հյուսիսարևելյան մասից (3) անջատվող, **գ)** ներկայիս Իրաքի հյուսիսից անջատվող՝ Քիրկուկն ու Մոսուլը ընդգրկող (4) մասի և **դ)** Իրանի հյուսիսարևելյան մասից անջատվող՝ Թավրիզը ներառող (5) մասի տարածքներով ձևավորվող ընդհանուր տարածքում:

Ուշագրավ է, որ 1985-ից սկսած միջազգային հարաբերություններում Ազգերի ինքնորոշման սկզբունքին հենված, և ազգային ազատագրականն ու ազատագրումը իբր թե չճանաչող Արևմուտքը, հանձինս իր կողմից ստեղծելիք **Քուրդիստանի և Բելուջիստանի**, կրկին հիշել է ոչ միայն ազգերի ազատագրական պայքարն ու ազատության ձեռքբերումը, այլև Հայրենիք հասկացությունը: Այն, ինչը 1988-ից առ այսօր հակացուցված է հիշել Արցախին, որին թույլատրված է միայն կողմորոշվել ինքնորոշման իրավունքով, անտեսելով անշուշտ, որ հազարամյակների պատմություն ունեցող ազգերը գաղութային կախվածությունից միայն ազատագրվում են և ոչ թե ինքնորոշվում:

8. **Իրաքը** բաժանվում է երկու առանձին՝ «Սյունի Իրաք» (8) և «Արաբական Շիա Նահանգ» (8) կոչվող երկրների: Իսկ Բաղդադը, որպես քաղաք - նահանգ, դրվում այդ երկու պետությունների սահմանի վրա: Ասել է թե՝ պատկանելով և չպատկանելով նրանց, այն հանդիսանալու է նաև ինքնու-

րույն քաղաք - պետություն, որի միջոցով Արևմուտքը՝ դրսից, հսկողություն կհաստատի այդ երկու երկրների վրա, միգուցե նաև ամբողջ «Մերձավոր Արևելքի Նահանգներ» կոչվող ընդհանուր պետության վրա:

9. Բացի Քուրդիստանին միացող մասից, Իրանից անջատելու են նաև նրա հյուսիսային (6) հատվածն ու Թավրիզը և միացնելու են ընդարձակվող **Ադրբեջանին**: Անջատվելու է նաև Իրանի հարավարևելյան (9) մասը, որն էլ միացնելու են «Արաբական Շիա Նահանգ» կոչվող պետությանը:

10. Պարզվում է, «ոչ այնքան դաժան» է լինելու ներկայումս՝ շուրջ մեկ ամիս, պատերազմի թատերաբեմ դարձած **Լիբանանի** հետագա ճակատագիրը: Քանզի քարուքանդ արվող և հիմնազուրկ ավերվող, խաղաղ բնակչությանը սպանելու, նաև արտագաղթի հարկադրելու ճանապարհով մեծամասամբ լքված Լիբանանը հետո արդեն ընդարձակվելու է Սիրիայի հաշվին՝ վերածվելով «Մեծ Լիբանանի»: Ակնհայտ է. վաղը՝ Լիբանանում ընթացող պատերազմը միջազգային խաղապահների միջոցով զսպելու պարագայում, մեկ էլ հանկարծ կպարզվի, որ Հզբալլահը հիմա էլ տեղավորվել է Սիրիայում՝ Միջերկրական ծովի ամբողջ եզերքով մեկ և կրկին ահաբեկում է Իսրայելին: Ուստի, հիմա էլ «ստիպված» են լինելու Իսրայելի անվտանգությունը ապահովելու համար Հզբալլահից, կամ Ալ Ղահիդայից «ազատագրել» Սիրիայի ամբողջ ծովափնյա գոտին և այն միացնել «Մեծ Լիբանանին»: Այդպես Սիրիային կզրկեն ծով դուրս գալու հնարավորությունից, նաև այդ սահմանով նույնպես հսկողություն կհաստատեն Միջերկրական ծովում: Քանզի ակնկալում են, որ նորացված «Մեծ Լիբանանի» բնակչությունը նույնպես՝ մեծամասամբ, նորացված կլինի:

11. **Իսրայելը**, որը (ըստ քարտեզի) չի մտնելու «Մերձավոր Արևելքի Միացյալ Նահանգներ» կոչվելիք ընդհանուր պետության մեջ, տարածքային առումով մնալու է 1967-ի սահմաններում: Ուշագրավ է սակայն, որ քարտեզի վրա բացակայում է Պաղեստին անունն անգամ: **Պաղեստինի** գոյության մասին է հիշեցնում քարտեզում Հորդանան գետի Արևմտյան ափի տարածքի նշումը, որի տակ առկա է, սակայն, «Արևմտյան բանկ (Անորոշ կարգավիճակ)» մակագրությունը:

12. Ոչ պակաս լուրջ ձևափոխություն է կրելու **Սաուդյան Արաբիան**: Այն, որպես պետություն, արևմտյան այս մկրատումների արդյունքում, վերանվանվելու է «Սաուդյան Հայրենիքի Անկախ Տարածք»: Նախատեսել են Սաուդյան Արաբիայից անջատել. 1. հյուսիսային (13) և հյուսիսարևմտյան (14) հատվածները՝ դրանք միացնելով Հորդանանին, այն էլ վերանվանելով «Մեծ Հորդանան»: 2. Արևելյան՝ Մեքքա քաղաքը ներառող (13) մասը, ուր ստեղծելու են «Իսլամական Սուրբ Նահանգ» կոչվող լրիվ նոր պետություն: 3. Արևելյան՝ Քուվեյթի և Կատարի միջև ընկած (10) տարածքն էլ միացնելու են «Արաբական Շիա Նահանգին», այդպես վաղվա «միջերկրյածովյան» ընդհանուր պետությանը պատկանող Քուվեյթն ու Կատարը դարձնում են անկլավ «Մերձավորարևելյան» ընդհանուր պետության մեջ: 4. Իսկ հարավային (16) հատվածը կտրելով՝ միացնում են Եմենին ընդարձակելով Եմենի Կարմիր ծովով ունեցած սահմանը, նաև լրջորեն փոքրացնելով Սաուդյան Արաբիայի տարածքը:

13. Ակնհայտ է, որ **Սաուդյան Արաբիայի** սույն մկրատումը, նաև Իրանի հաշվին նորաստեղծ «Արաբական Շիա Նահանգ» կոչվող պետության ամբողջ արևելյան սահմանի այսօրինակ ձևավորումը ընդամենը պայմանավորված է Արևմուտքի կողմից Կարմիր ծովի և Պարսից ծոցի նկատմամբ կատարյալ՝ բազմաշերտ և բազմալծակ, հսկողություն սահմանելու խնդրով: Այսպես, **Կարմիր ծովի** համար. 1. Եգիպտոսի ափամերձ սահմանին դեմ դիմաց ի հայտ է գալիս ընդարձկվող «Մեծ Հորդանան» պետության սահմանը: 2. **Սուդանի** դիմացը՝ մասամբ Սաուդյան Արաբիայի մկրատումից մնացած «Սաուդյան Հայրենիքի Անկախ Տարածք» պետության սահմանը և մասամբ էլ ընդարձակված Եմենը: **Պարսից ծոցի** նկատմամբ լիակատար հսկողություն սահմանելու համար է, որ. 1. Պարսից ծոցի ամբողջ հյուսիսը, հյուսիս-արևելքն ու հյուսիս-արևմուտքը աքցանի պես ներառված են նորաստեղծ «Արաբական Շիա Նահանգ» կոչվող պետության տարածքում. իր մեջ որպես անկլավ ներառելով մեկ այլ՝ միջերկրածովյան ընդհանուր պետությանը պատկանող **Քուվեյթը**: Ծոցի հարավարևմտյան հատվածը հսկվելու է երեք մասով՝ Կատարի, Արաբական Միացյալ Էմիրությունների և նորաստեղծ «Սաուդյան Հայրենիքի Անկախ Տարածք» պետության միջոցով: Որոնց հակակշիռ է լինելու, Իրանը՝ իր հարավային սահմանի միջոցով:

14. Չնայած նրան, որ **Իրանին** լրիվ կտրում են կովկասյան աշխարհաքաղաքական՝ (ճանապարհակոմունիկացիոն) խաչմերուկի հարավային թև լինելուց, փոխարենը՝ Աֆղանստանի հյուսիսարևելյան (17) հատվածը միացնելով Իրանին, իբր թե փորձում են սիրաշահել նրան, սակայն իրականում նոր հակամարտությունների լուրջ լարվածություն են ստեղծում Իրանի և Աֆղանստանի միջև: Միաժամանակ, նույն սկզբունքով լարվածություն են ստեղծում նորաստեղծվող **«Ազատագրված Բելուջիստանի»** համար՝ Իրանից օտարելով նաև նրա հարավարևելյան (18) հատվածը (ի դեպ՝ օրեր առաջ Բելուջիստանի նահանգում իրականացվեց առաջին ահաբեկչություններից մեկը):

15. Ըստ սույն ծրագրի, Արևմուտքի կողմից հրահրվող և ղեկավարվող քաղաքացիական պատերազմի լուրջ փորձություն է սպասվում նաև միջուկային սպառազինություն ունեցող ներկայիս **Պակիստանին**: Որոշել են Պակիստանը մկրատել երեք մասի, ընդ որում, Պակիստանի ամբողջ հյուսիսը և երկրի արևմտյան կեսը (19) պետք է միացնեն Աֆղանստանին: Իսկ Պակիստանի հարավարևմտյան (20) կեսի և Իրանից անջատվող հարավարևելյան (18) հատվածի ընդհանուր տարածքում, Իրանի և Պակիստանի դեմ պատերազմող բելուջիները կազատագրեն և կհռչակեն իրենց «Ազատագրված Բելուջիստան» պետությունը:

Սույն քարտեզը և, ըստ այդմ, Արևմուտքի դիվային ծրագրերի ձեռագիրը հիշեցնում են Առաջին համաշխարհային պատերազմն ու 1916-ի Անտանտի երկրների միջև գաղտնի համաձայնության բերված Սայքս - Պիկոյի պայմանագրի պատմությունը: Որի տրամաբանությամբ էլ 1918-ին արևմտյան գերտերությունների կողմից մասնատվեց և իրար մեջ բաժանվեց **Օսմանյան կայսրությունը**՝ անմասն թողնելով միայն **Ռուսաստանին** և պարտության կրած **Գերմանիային**: Ներկա իրողությունը տարբերվում է նրանով, որ այս անգամ մասնատման մկրատի տակ է առնված ոչ միայն Թուրքիան, այլև գրեթե ամբողջ Մերձավոր և Կենտրոնական Արևելքը: Ասել է թե՝ նախատեսել են առաջիկայում, մոտ կես միլիարդ մարդ ներքաշել պատերազմական գործողությունների թատերաբեմ, դրան հետևող բոլոր արհավիրքներով, զանգվածային կորուստներով և ողբերգություններով:

Հարց է, ինչո՞վ սա սկիզբը չէ կանխավ ծրագրված երրորդ համաշխարհային պատերազմի, այն տարբերությամբ միայն, որ Հերցոգ Ֆրանց Ֆերդինանտի սպանության փոխարեն հիմա ընտրված է Հզբալլահի կողմից Իսրայելի երկու զինվորների առևանգումը:

Նկարում՝ դրվագ, Լիբանանի «դեմոկրատացման» գործընթացից:

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ներկայումս հայ մտավոր մտքի առջև ծառացած խնդիրներից թերևս առաջնայինն ու հրատապը մեր հասարակության արժեքային վերափոխումների բազմակողմանի ուսումնասիրությունն է: Այն հնարավորություն է ընձեռում, հաշվարկելով հասարակությանն ու նրա հոգևոր-հոգեբանական անվտանգությանը սպառնացող վտանգները, ճիշտ գնահատել նրա ներքին համախմբման միջոցներն ու հնարավորությունները:

Արժեհամակարգային և գաղափարական վերափոխումներն առաջին հայացքից աննկատ ընթացող գործընթացներ են: Այդ պատճառով շատ հաճախ այդ փոփոխությունների արդյունք հանդիսացող քաղաքական և այլ կարևոր իրադարձություններն առավել արագ են զարգանում, քան քաղաքական ընտրանին կամ վերլուծական հանրությունը, ինչպես նաև լայն հասարակական զանգվածները կարողանում են հետևել դրանց, վերլուծել կամ առավել ևս կառավարել: Փաստորեն, իրավիճակի վերլուծության գործընթացը նկատելիորեն զիջում է բուն գործընթացների շարժմանը:

Հայտնի է, որ գաղափարական դաշտում վերափոխումները, որոնք ընթանում են հասարակության ներսում՝ քաղաքական և գաղափարական միասնության բացակայության պայմաններում, հանգեցնում են հասարակության ապաինտեգրացմանն ու ատոմացմանը[1]: Դրանց զուգահեռ այդ հասարակություններում նկատվում է հասարակական վստահության, փոխօգնության և հանդուրժողականության անկում, հասարակագիտական տերմիններով ասած՝ սոցիալական կապիտալի ցածր աստիճան:

Հասարակական նշված գործընթացների տեղափոխումը ընտանեկան հարաբերությունների հարթություն, ըստ Ֆ. Ֆուկույամայի, հանգեցնում է հետագա սերունդների համար մարդկային կապիտալի նվազմանը[2] (որի չափորոշիչներն են՝ ամուսնությունների նվազում, ամուսնալուծությունների աճ, մեկ ծնողի (որպես կանոն՝ տղամարդու) բացակայության պայմաններում դաստիարակվող երեխաների և արտաամուսնական ծնունդների քանակական բարձր ցուցանիշներ և այլն):

Ուշագրավ հետևությունների են հանգել արևմտյան տեսաբանները, ուսումնասիրելով արևմտյան, հատկապես՝ ամերիկյան, հասարակությունների միջանձնային հարաբերություններում ակնհայտորեն նվազող վստահությունը, ինչը զուգորդվում է քաղաքացիական հասարակության[3] կայացմամբ և արմատավորմամբ: Ժամանակակից անհատը, տուրք տալով անհատակենտրոն արժեքներին և ինքնադրսևորման նեղ անձնական ձգտումներին, մեծ խանդավառությամբ անդամակցում է բազմաթիվ մանր հանրույթների և առավել քիչ՝ մեծ ու հզոր միավորների: Ֆ. Ֆուկույաման նշում է. «Խոշոր կազմակերպությունների հեղինակությունը նվազել է, դրա փոխարեն մարդկանց կյանքում աճել են բազմաթիվ փոքր միությունների դերն ու նշանակությունը: Փոխանակ հպարտանալու հզոր արհմիությանն անդամակցությամբ, խոշոր ձեռնարկությունում աշխատելով կամ բանակում ծառայելով, մարդիկ բավարարվում են աերոբիկայով զբաղվելով կամ ինչ-որ աղանդի անդամակցելով, փոխօգնության խմբում միավորվելով կամ Ինտերնետում միմյանց հետ ուղղակի զրույցի բռնվելով»[4]: Տեղի է ունենում «հանրության մանրացում»[5]:

***Այսպիսով, արևմուտքի երկրների փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակության հետագա կայացումն ինքնին արդեն ենթադրում է բազմաթիվ մանր կազմակերպությունների, տարբեր միությունների հաղթանակներն ի հաշիվ խոշոր ու հզոր միավորումների: Այս երևույթը բնորոշ է անհատակենտրոն հասարակություններին: Այն իր մեջ լուրջ վտանգներ է պարունակում:***

Վերադառնալով մեր խնդիրներին՝ նշենք, որ «հասարակության մանրացման» միտումներ նկատելի են նաև հայ հասարակական կյանքում: Մեզանում փոքր չէ քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին կարևոր գրավական՝ հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) թիվը, պաշտոնապես՝ 4 հազար (համեմատության համար նշենք, որ 2002թ. տվյալների համաձայն, ՀԿ-ների թիվը բնակչության 1000 անձի դիմաց Հայաստանում կազմում էր 0,8 միավոր, Վրաստանում՝ 0,7, իսկ Ադրբեջանում՝ 0,17)[6]:

Անշուշտ, նշված ոչ-կառավարական կազմակերպությունները, մասնագիտական բազմաթիվ միություններն ու միավորումները դրական դերակատարում ունեն հասարակական կյանքի կազմակերպման խնդրում: Պետք է նշել, որ երկրում գործող բազմաթիվ հասարակական կազմակերպություններ ոչ միայն ի զորու են նկատել, ահազանգել, իշխանությունների անհանգստության առարկա դարձնել հասարակությանը հուզող տարբեր խնդիրները, այլև շատ հաճախ օպերատիվ լուծելու կամ լուծման մեխանիզմներ առաջադրելու հարցում նույնպես բավական արդյունավետ են գործում:

Այնուամենայնիվ, «հասարակության մանրացումը» իր հերթին նվազեցնում է հասարակության ներքին համախմբան աստիճանը՝ լուրջ դժվարություններ առաջացնելով երկրին սպառնացող վտանգներին դիմակայելու անհրաժեշտության պարագայում:

Ներկա փուլում հայ մտավոր ներուժի առջև ծառացած խնդիրներից է հնարավորինս ապահովել հայության քաղաքական և գաղափարական միասնության բարձր մակարդակը: Այն հնարավոր է խթանել մի կողմից ընտրանու տարբեր շերտերի, մյուս կողմից՝ ընտրանու և լայն հասարակության միջև լարված շփումների և փոխազդեցությունների արդյունքում:

Այսպիսով, այսպես կոչված՝ «հասարակության մանրացումից» բխող հնարավոր վտանգների չեզոքացումը ոչ թե մանր հասարակական միավորումների բացառության մեջ է, այլ՝ զուգահեռ առավել խոշոր միավորումների ստեղծման, դրանց զարգացման, դերի ու հեղինակության բարձրացման:

**ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
**Պատմական գիտությունների թեկնածու**

1. Հասարակական ատոմիզմ, ատոմիզացիա նշանակում է «հասարակության պատկեր, որի շրջանակներում անհատները հանդես են գալիս որպես իրարից մեկուսացված ատոմներ», տե՛ս Панарин А.С., Политология. О мире политики на Востоке и на Западе, М., 1999, с. 308.

2. Фукуяма Ф., Великий разрыв, М., 2003, с. 161.

3. Քաղաքացիական հասարակությունը քաղաքացիների և նրանց միավորումների ոչ քաղաքական (տնտեսական, բարոյահոգեբանական, կրոնական, մշակութային) հարաբերությունների ամբողջությունն է՝ հիմնված պետության հանդեպ ինքնագործունեության, ինքնավարության սկզբունքների վրա, տե՛ս Панарин А. С., Политология. О мире политики на Востоке и на Западе, М., 1999.

4. Фукуяма Ф., Великий разрыв, М., 2003, с. 128.

5. Տե՛ս նույն տեղը, էջ 126:

6. Погосян Г. А., Армянское общество в трансформации. Ер., 2003. с. 223.

# «ՆՈՐ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ» ՄՈՍԿՎԱ-ԹԵՀՐԱՆ ԱՌԱՆՑՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ

«Նոր կայսության» քաղաքականությունը հարավային ուղղությամբ նույնպես պետք է միտված լինի ամուր մայրցամաքային դաշինքի ստեղծմանը այն ուժի հետ, որը բավարարում է և՛ ռազմավարապես, և՛ գաղափարապես հակամերիկյան ընդհանուր միտմանը: «Ընդհանուր թշնամու գործոնը» այստեղ ևս պետք է որոշիչ դեր ունենա:

Եվրասիայի հարավում գոյություն ունեն մի քանի աշխահաքաղաքական կազմավորումներ, որոնք կարող են հանդես գալ որպես «նոր կայսրության» հարավային բևեռ: Հնդկաստանը և Չինաստանը պետք է ներառել Արևելքում, մնում է միայն իսլամական աշխարհը՝ ձգվող Ֆիլիպիններից և Պակիստանից մինչև Մաղրիբ՝ Արևմտյան Աֆրիկա:

Աշխարհաքաղաքականության սկզբունքների տեսանկյունից, անկասկած, Իրանը բավարարում է մայրցամաքային հզոր տերության չափանիշները, որը սերտորեն կապված է Միջին Ասիայի հետ, ունի հակամերիկյան կողմնորոշում և այլն: Բացի այդ, Իրանը մայրցամաքի քարտեզի վրա այնպիսի դիրք է զբաղեցնում, որ Մոսկվա-Թեհրան առանցքի ստեղծումը բազմաթիվ խնդիրներ կլուծի: Իրանին ներառելով «նոր կայսրության» հարավային առանցքի մեջ՝ Ռուսաստանը միանգամից կհասնի այն ռազմավարական նպատակին, որին նա ձգտում է արդեն մի քանի հարյուրամյակ. ելք տաք ծովեր: Միայն Իրանն է, որ անմիջական ելք ունենալով դեպի Հնդկական օվկիանոս, կարող է իրական լուծում տալ Ռուսաստանի համար նման կարևոր աշխարհաքաղաքական խնդրին:

Մոսկվա-Թեհրան առանցքի շրջանակներում կարևոր տեղ է զբաղեցնում հայկական գործոնը, քանզի Անդրկովկասում այն հանդիսանում է որպես անկայունության կենտրոն: Պետք է նկատել, որ հայերը արիական ազգ են, որոնք լավ են գիտակցում իրենց հաբեթական ծագումը և ազգակցությունը հնդեվրոպական ազգերի՝ հատկապես իրանցիների հետ: Հայերը քրիստոնյա ժողովուրդ են, և իրենց եկեղեցու միաբնիկ ավանդույթը տեղավորվում է Արևելյան եկեղեցու ընդհանրության մեջ, իսկ աշխարհաքաղաքական կապը Ռուսաստանի հետ հայերի համար մեծ կարևորություն ունի: Հայերը մեծ կարևորության ռազմավարական տարածք են զբաղեցնում, քանզի Հայաստանի և Արցախի տարածքով է ընկած այն ճանապարհը, որը կապում է Թուրքիան Ադրբեջանի, այնուհետ էլ Միջին Ասիայի հետ: Մոսկվա-Թեհրան առանցքում Երևանը ակամայից դառնում է կարևոր ռազմավարական օղակ, որը կապում է Ռուսաստանը Իրանի հետ և բաժանում Թուրքիան միջմայրցամաքային տարածքներից: Իսկ Բաքվի կողմնորոշման հնարավոր փոփոխությունը Անկարայից դեպի Թեհրան Մոսկվա-Թեհրան ընդհանուր նախագծում կլուծի նաև Ղարաբաղյան հիմնահարցը, քանի որ բոլոր չորս կողմերն էլ կենսականորեն շահագրգռված կլինեն կայունության հաստատմանը նման կարևոր ռազմավարական տարածաշրջանում, իսկ հակառակ դեպքում, այսինքն՝ հակաթուրքական կողմնորոշման պահպանման պարագայում, Ադրբեջանը դատապարտված կլինի մասնատման Ռուսաստանի, Իրանի և Հայաստանի միջև: Գրեթե նույնը վերաբերվում է նաև Կովկասի մյուս շրջաններին՝ Չեչնիային, Աբխազիային, Դաղստանին և այլն, որոնք Թուրքիայի և Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի բախման դեպքում կշարունակեն մնալ հակամարտությունների և անկայունության գոտիներ:

**ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
**ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանող**

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՈՒԺԵՐԸ ԿՈՒԺԵՂԱՑՎԵՆ “ТОПОЛЬ-М” ԵՎ “БУЛАВА-30” ՀՐԹԻՌՆԵՐՈՎ

«Սառը պատերազմի» ավարտից հետո սկսվեց Ռուսաստանի ստրատեգիական միջուկային ուժերի կրճատման գործընթացը: Այժմ Ռուսաստանում ստրատեգիական ռմբակոծիչները նվազել են 39%-ով, միջմայրցամաքային բալիստիկ հրթիռները՝ 58%-ով, բալիստիկ հրթիռներով սուզանավերը՝ 80%-ով:

«Ռուսաստանի ստրատեգիական միջուկային սպառազինություն» կայքի տվյալներով, ռուսական միջուկային ուժերի հիմքը կազմում են ցամաքային բազավորման մայրցամաքային բալիստիկ հրթիռները, որոնց մեծամասնությունը հորային է (542 հրթիռային կոմպլեքս, որոնք ի վիճակի են կրել 3451 միջուկային մարտական լիցք, որոնցից 291-ը՝ մոբիլ): Ռազմածովային նավատորմի կազմում կա երկու տիպի 12 ստրատեգիական հրթիռակիր: Դրանք զինված են ծովային բազավորման բալիստիկ հրթիռների 192 արձակման սարքեր ունեցող հրթիռային կոմպլեքսներով, որոնք ի վիճակի են կրել 672 միջուկային մարտական լիցք: Իսկ ստրատեգիական ավիացիան ունի երկու տիպի 78 ռմբակոծիչ (14 - “Ту-160” , 64 - “Ту-95”), որոնք ի վիճակի են կրել մեծ հեռահարություն ունեցող մինչև 872 թևավոր հրթիռ:

Մոսկովյան ջերմատեխնիկայի ինստիտուտի տնօրեն և գլխավոր կոնստրուկտոր Յուրի Սոլոմոնովը հայտարարել է, որ մինչև 2015թ. Ռուսաստանի ստրատեգիական միջուկային ուժերի հեռանկարային խմբավորումն ունենալու է 2000-ից ոչ պակաս միջուկային մարտական բլոկ: Ստրատեգիական միջուկային ուժերի հրթիռային խմբավորման հիմքը կազմելու են ցամաքային բազավորման “Тополь-М” և ծովային բազավորման “Булава-30” հրթիռային կոմպլեքսները:

Մասնագետների գնահատմամբ, “Тополь-М” մոբիլ կոմպլեքսն աշխարհում չունի իր համանմանը: Նրա մարտական հանդերձանքը հարմարեցված է Հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) հեռանկարային համակարգերին: Հրթիռի ստարտային քաշը 47.2 տոննա է, մարտական բեռնվածությունը՝ 1200 կգ, թռիչքի հեռավորությունը՝ 10.000 կմ: “Тополь-М” ստեղծողները հավաստում են, որ այն ամբողջովին անվարակունակ է էլեկտրամագնիսային իմպուլսի ազդեցությունից:

“Тополь-М” հրթիռային կոմպլեքսների համար ՀՀՊ-ի համակարգը եղած կամ չեղած միևնույն է, քանի որ դրանք աշխատում են գերձայնով, փոխում են իրենց ուղղության ու բարձրության հետագիծը: Իսկ ՀՀՊ-ի համակարգը նախատեսված է բալիստիկ հրթիռների համար, որոնք կարող են հարված հասցնել՝ շարժվելով բալիստիկ հետագծով: “Тополь-М” հրթիռային կոմպլեքսի կրակոցի դիպուկությունը “Тополь”

հրթիռային կոմպլեքսի համեմատ, զգալիորեն բարելավվել է: “Тополь-М”-ի կարծր վառելանյութով աշխատող երեք երթային շարժիչները նրան հնարավորություն են տալիս հենց սկզբնական փուլից զարգացնել այնպիսի արագություն, որը գերազանցում է նախկին միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների արագությունը: Դա կտրուկ կերպով նվազեցնում է նրա խոցելիությունը: Մի քանի տասնյակ օժանդակ շարժիչները և ժամանակակից ղեկավարման թվային համակարգը “Тополь-М”-ին հնարավորություն են տալիս և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական հարթություններում մանևր կատարել, ինչն ապահովում է հակառակորդի համար անկանխատեսելի թռիչքը՝ սկսած հենց ելընթացից: “Тополь-М”-ի ևս մեկ «հաղթաթուղթ» է հանդիսանում նրա գերձայնային, մանևրային միջուկային բլոկը: Ըստ էության, այն թևավոր հրթիռ է՝ ուղղահոս օդա-ռեակտիվ շարժիչով, ինչը նրան հասցնում է մինչև գերձայնային արագության: Անհրաժեշտ է նաև նշել, որ “Тополь-М”-ի մեկ բլոկանի մարտագլխիկը, ի տարբերություն այլ ստրատեգիական միջմայրցամքային բալիստիկ հրթիռների, կարող է կարճ ժամանակահատվածում վերահանդերձավորվել բաժանվող գլխային մասով, որը կարող է կրել մինչև 3 լիցք: Դրանք ի վիճակի են բաժանման կետից 100 կմ հեռավորության վրա ոչնչացնել թիրախները: Ընդ որում, մարտագլխիկների բաժանումը տեղի է ունենում յուրաքանչյուր 30-40 վայրկյանը մեկ՝ կապված գլխային մասի շարժման փոփոխության հետ: Այդ ժամանակահատվածում ոչ մի ինֆորմացիոն-հետախուզական համակարգ պարզապես չի հասցնի արձանագրել բաժանման պահը: Փաստորեն, այս հրթիռի՝ հակառակորդի ՀՀՊ-ն հաղթահարելու ունակություններն աշխարհում ոչ մի հրթիռ չունի և դեռ մի քանի տասնյակ տարի չի ունենա:

Ռուսաստանի ստրատեգիական միջուկային ուժերի համար ևս մեկ հույս են հանդիսանում ծովային բազավորման “Булава-30” միջմայրցամաքային բալիստիկ հրթիռները, որոնք սպառազինության մեջ, նախատեսված 2007-ի փոխարեն, կհայտնվեն 2008-ին: 2006-08թթ. սպասվում են “Булава-30” ստրատեգիական ծովային հրթիռի մի քանի փորձարկումներ, ինչից հետո էլ այն կտեղադրվի «Յուրի Դոլգորուկի» (955 նախագիծ («Բորեյ»)) ստրատեգիական նշանակության հրթիռային ստորջրյա հածանավի վրա, որը ջուրը կիջեցվի 2006-ի վերջին, և ամբողջովին այդ տիպի հրթիռներով սպառազինված Ռուսաստանի ռազմածովային ուժերի կազմը կհամալրի 2008-ին:

“Булава-30” հրթիռի առաջին փորձնական «ոստյունային» թռիչքը տեղի է ունեցել 2004-ի սեպտեմբերի 23-ին Հյուսիսային նավատորմի ատոմային ստորջրյա հածանավ «Դմիտրի Դոնսկոյի» (941 նախագիծ («Ակուլա»)) նավակողից: Իսկ դրա առաջին ստորջրյա փորձնական թռիչքը տեղի է ունեցել 2005-ի դեկտեմբերի 21-ին: Այդ ժամանակ այն նույնպես մեկնարկել է Սպիտակ ծովում գտնվող ատոմային ստորջրյա հածանավ «Դմիտրի Դոնսկոյի» նավակողից: Վերջինս գտնվում էր ստորջրյա իրավիճակում: Արդյունքում հրթիռը Կամչատկայի «Կուրա» հրաձգարանում ճշգրիտ կերպով ոչնչացրել է պայմանական թիրախը:

“Булава-30” հրթիռային կոմպլեքսը կարող են կիրառել և՛ ծովային, և՛ ցամաքային ստրատեգիական միջուկային ուժերը: “Булава-30” հրթիռը մի շարք լրացուցիչ մշակումներից ու փորձարկումներից հետո կարող է դառնալ նաև ցամաքային հրթիռ: Այժմ “Булава-30” հրթիռի ցամաքային բազավորման մասին չի խոսվում. այդ նախագիծը մոտակա երկու տասնյակ տարիների գործ է: Այս կոմպլեքսները երկրի մարտական ծառայության մեջ կմնան նվազագույնը մինչև 2040-45 թվականները:

Հետաքրքիր է, որ “Булава-30” հրթիռը 11 տոննայով թեթև է և՛ հորային, և՛ գրունտային բազավորման “Тополь-М” հրթիռից և կշռում է 36 տոննա: Չնայած դրան՝ այն պարունակում է ավելի շատ մարտական բլոկ (10 մարտագլխիկ): Իսկ “Булава-30”-ի թռիչքի հեռավորությունը կազմում է 8.000 կմ:

Իր հերթին գրունտային բազավորման “Тополь-М” հրթիռն առավելություն ունի հորային բազավորման “Тополь-М” հրթիռի նկատմամբ. ստրատեգիական հրթիռներով հորերի կոորդինատները հայտնի են Պենտագոնին: Համաձայն ստրատեգիական հարձակողական սպառազինության մասին առաջին պայմանագրի՝ Ռուսաստանը և ԱՄՆ-ը միմյանց տրամադրում են այդպիսի «զգայուն» տեղեկություն: Իսկ ահա գրունտային (շարժական) հրթիռային կոմպլեքսների կոորդինատների մասին տեղեկություն տրամադրել ոչ մի կողմն էլ պարտավոր չէ: Կանխիչ հարվածի ժամանակ դա 10 անգամ ավելացնում է շարժական հրթիռների կենսունակությունը: Դա նշանակում է, որ ստեղծվում է երաշխավորված պատասխան հարվածի հնարավորություն: Յուրի Սոլոմոնովը նշում է, որ “Тополь-М” և “Булава-30” հրթիռային կոմպլեքսներն ի վիճակի են հաղթահարել յուրաքանչյուր հակառակորդի ՀՀՊ-ը: ՀՀՊ-ի հաղթահարման համակարգը ստեղծելու համար կոնստրուկտորները ստիպված են եղել նվազեցնել օգտակար բեռնվածության քաշը (20 %): Երկու հրթիռներն էլ հետագծի ակտիվ հատվածն անցնում են 2-3 անգամ ավելի արագ, քան մյուս «ստրատեգները» և կարող են զարգացնել գերձայնային արագություն, ինչի համար էլ Արևմուտքում դրանց անվանում են «կեղծ բալիստիկ հրթիռներ»: Այս ամենի պատճառով էլ դրանց դժվար է նկատել հրթիռային հարձակման մասին նախազգուշացնող միջոցներով և դրանց դեմ որևէ պաշտպանություն ձեռնարկել:

**Ընդհանրացումներ**. Փաստորեն “Тополь-М” և “Булава-30” հրթիռների ստեղծումը համարվում է կարևոր գիտական, կոնստրուկտորային և տեխնոլոգիական նվաճում: Կարելի է անվանել գիտական ճեղքում: Այստեղ Ռուսաստանը մոտակա հետապնդողներից առաջ է անցել 15-20 տարով: Ժամանակին ԱՄՆ-ում այդպիսի հրթիռների ստեղծումը համարել են թանկ հաճույք և սահմանափակվել են մինչձայնային մեքենաներով:

Ռուսաստանի կողմից նոր տիպի հրթիռների փորձարկումը հանդիսանում է պատասխան քայլ՝ 1972-ին կնքված հակահրթիռային պաշտպանության Պայմանագրից ԱՄՆ-ի միակողմանիորեն դուրս գալուն: ԱՄՆ-ի կողմից ՀՀՊ-ի Պայմանագրից դուրս գալը Ռուսաստանին ստիպեց զարգացնել ՀՀՊ-ն հաղթահարելու միջոցները և կատարելագործել ստրատեգիական հրթիռների մարտական հանդերձանքը:

Հայտնի է, որ սպառազինությունների միջուկային մրցավազքում խորհրդային ռազմական մասնագետները հիմնական շեշտը դնում էին հրթիռակիր միջուկային սուզանավերի վրա և ամբողջ ուժով ծավալում էին դրանց արտադրությունը: Այժմ Ռուսաստանում պատկերն այլ է, և նա իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է ցամաքային ստրատեգիական միջուկային ուժերի վրա:

**ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

# ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

«Մեր համբերությունն անսահման չէ, և մենք չենք պատրաստվում տարածքային զիջումների գնալ: Մենք ռազմական և ցանկացած այլ բնագավառում ուժեղ ենք Հայաստանից, որն այլևս չի կարող մրցակցել մեզ հետ: Ճգնաժամի լուծման երկու ճանապարհ կա՝ խաղաղ և ռազմական: Ի վերջո մենք խնդրի լուծման համար կընտրենք այն ճանապարհը, որն ավելի խելամիտ կլինի: Բանակցությունները ագրեսորի հետ արդեն 12 տարի քիչ զիջում չէ: Ոչ 5, ոչ 10 և ոչ էլ 100 տարի հետո ԼՂՀ-ն Ադրբեջանից բաժանված չի լինի: Դա առնվազն տեղի չի ունենա իմ նախագահության օրոք»: Սրանք Ի. Ալիևի բարձրագոչ հայտարարությունների մի մասն են: Գուցե այս հայտարարությունները նախատեսված են ներքին կիրառման համար, սակայն մեծապես նպաստում են իրավիճակի ռազմականացմանը: Հատկապես վերջինը օգտագործվել է նաև սեփական հեղինակությունը բարձրացնելու նպատակով. պարզ է դառնում, որ Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորում առաջիկա 7-8 տարիներին հնարավոր չէ, քանի որ Ի. Ալիևը կընտրվի նաև երկրորդ անգամ՝ թեկուզ մեծ խախտումներով:

Ադրբեջանի իշխանություններն անհանգստացած են նաև Կոսովոյի հիմնախնդրով: Սա կարող էր տարօրինակ թվալ, եթե չլիներ արտգործնախարար Մամեդյարովի հետևյալ միտքը. «Կոսովոն օրինակ չէ Ղարաբաղի համար: Կոսովոյի կարգավիճակի հստակեցումը, անկախ արդյունքից, չպետք է որևէ նախադեպ ստեղծի: Այսինքն՝ Կոսովոյի հիմնախնդրի լուծման դեպքում Ադրբեջանը կարող է զրկվել իր հիմնական հաղթաթղթից…»:

Գրեթե համոզված լինելով, որ բանակցային գործընթացը չի կարող ապահովել բոլոր սպասելիքների իրականացումը, Ադրբեջանը դիմում է սադրանքների. եթե Ադրբեջանը գտնի, որ բանակցային գործընթացը կրում է ձևական բնույթ, ապա կհրաժարվի բանակցություններից: Սա առաջին ակնարկներից է բանակցություններից հրաժարվելու մասին, քանի որ այն ձևաչափով, որը պնդում է Հայաստանը, այն է՝ փաստացի Ղարաբաղի, Քելբաջարի և Լաչինի շրջանների օտարում, խոսել հնարավոր չէ: Ադրբեջանը չի պատրաստվում հաշտվել առկա իրավիճակի հետ: Սրա հետ մեկտեղ ԼՂՀ-ին ամրացվում է աշխարհի ամենառազմականացված տարածքի պիտակ:

Ադրբեջանի ռազմական բյուջեն կազմում է 600 մլն դոլար: Իսկ Ի. Ալիևը հպարտանում է, որ այն շուտով հասնելու է Հայաստանի ամբողջ բյուջեին, այսինքն՝ անցնելու է միլիարդի սահմանը: Այս ենթատեքստում ուշադրության է արժանի ադրբեջանցի քաղաքագետներից մեկի համոզմունքն առ այն, որ այսօր պատերազմական գործողությունների սկսումը, երբ Ադրբեջանը դեռևս չունի ճնշող գերակշռություն, ինչ-որ առումով ձեռնտու է Հայաստանին: Պայմանականորեն այս մտքի հավելում կարելի է համարել Մեջլիսի պաշտպանության և ազգային անվտանգության հանձնաժողովի անդամ Զահիդ Օրուջի այն միտքը, որ Ադրբեջանի զինված ուժերը սահմանի վրա մշտապես գտնվում են հարձակման պատրաստ վիճակում, այսինքն՝ յուրաքանչյուր պահի նրանք պատրաստ են ճակատային գիծը 50 մ առաջ տանել: Նման մտքեր արտահայտում են նաև առանձին կուսակցություններ:

Այդ ենթատեքստում է նաև բանակին վերջերս հատկացվող առանձնակի ուշադրությունը: Այժմ արմատական փոփոխությունների ժամանակաշրջան է թևակոխել այստեղ: Իրականացվում են բարեփոխումներ, որոնք միտված են բանակի հզորացմանը, կոռուպցիայի նվազմանը կամ վերացմանը, ռազմական ոգու բարձրացմանը և այլն: Փոխվել է զորակոչի կարգը: Միտում կա զորակոչային տարիքը 18-ից հասցնել 20-ի, և 35-ից իջեցնել 27-ի, ինչպես նաև զորակոչն իրականացնել տարեկան 2 անգամ (և ոչ թե 4): Այս ամենի շնորհիվ կբացառվի առկա 36-ամյա գեներալների ու գնդապետների գոյությունը, այսինքն՝ այդ կոչումներին կհասնեն միայն արժանիները (գնդապետ լեյտենանտի կոչման հասնելու համար անհրաժեշտ կլինի առնվազն 18 տարի): Այս բարեփոխումները դեռ հեռու են պտուղներ տալուց: Դրա վառ ապացույցն է կորպուսի հրամանատարի նախկին տեղակալ, գնդապետ Էլնուր Մամեդովի հայտարարած հացադուլը՝ բանակի շարքերը լքելու թույլտվություն ստանալու նպատակով: Բանակի մասին հայտնի ադրբեջանցի քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն հայտարարել է. «Մեր բանակը ուղղակի հաստատություն է՝ նման հանդիսությունների տան, ռեստորանի, սուպերմարկետի»: Ադրբեջանական բանակի խնդիրներն էլ ավելի ծանր են անդրադառնում շարքային զինծառայողների վրա: Հատկապես լուրջ է իրավիճակը՝ կապված «դեդովշինայի» երևույթի և ոչ կանոնադրական հարաբերությունների հետ:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ Ադրբեջանը վերջերս ավելի ջանասիրաբար է շփվում այլ պետությունների պաշտպանական գերատեսչությունների հետ: Այդ են վկայում Գաբալայի ռադիոլոկացիոն կայանի 10 տարով վարձակալության տալու պայմանագիրը Ռուսաստանի հետ, Թեհրանի և Բուխարեստի հետ կնքված պայմանագրերը և այլն:

Ռազմական ոլորտում իրականացվող բարեփոխումներին զուգահեռ փորձ է արվում ոգեշնչել սահմանամերձ շրջանների բնակչությանը՝ առաջ քաշելով «ամենասուրբ» փաստարկը. վերջերս Ի. Ալիևը Աղդամի, Բարդայի և Թերթերի շրջաններ կատարած այցի ընթացքում մասնակցել է Հ. Ալիևի հուշարձանների բացմանը Թերթերի և Բարդայի շրջանում, Հ. Ալիևի թանգարանի բացմանը Բարդայի շրջանում, ծաղիկներ դրել հոր հուշարձանին՝ Աղդամի շրջանում:

Տպավորություն է ստեղծվում, որ տնտեսական և շատ այլ ոլորտներում Ադրբեջանը աշխատում է «խփել» Հայաստանի հաղթաթղթերին: Օրինակ՝ Ռուսաստանի ադրբեջանական սփյուռքի հետ հարաբերությունների կտրուկ լավացումը: 2005թ. Ադրբեջանի և Ռուսաստանի միջև առևտրային շրջանառությունը անցել է 1 մլրդ-ի սահմանը՝ աճելով 40%-ով: Ավելի քան 40%-ի աճ է գրանցվել նաև ադրբեջանա-ուկրաինական և ադրբեջանա-ճապոնական առևտրային հարաբերություններում: Աշխարհի ադրբեջանցիների 2-րդ համագումարը նպատակ ուներ համակարգել ադրբեջանական լոբբինգն աշխարհում, համախմբել հայրենիքի գաղափարի շուրջ և ավելի արդյունավետ օգտագործել ադրբեջանական սփյուռքի ներուժը: Առավել ևս, որ աշխարհում կա մոտ 50 մլն ադրբեջանցի: Նաև նրանց օգնությամբ կտրուկ աճում են բացված աշխատատեղերի թիվը. 2005թ. այն կազմել է 169 հազար (ըստ պաշտոնական տվյալների), իսկ 2003-ից ի վեր՝ 346 հազար: Եռանդուն փորձեր են արվում նպաստելու ԱՄՆ-ի կառավարության կողմից ամեն տարի Ադրբեջանին տրվող օգնության ավելացմանը: Ամեն դեպքում այս տարի նրանք ակնկալում են 100 մլն դոլարից ավելի օգնություն: Փաստ է, որ տարեցտարի աճում է այդ օգնության չափը:

Բավականին լարված է իրավիճակը Ադրբեջանի քաղաքական կյանքում: Այս պահին Ադրբեջանի քաղաքական դաշտը պայմանականորեն ներկայացնում են 3 ուժեր. իշխող «Ենի Ազերբեյջան» կուսակցությունը և իր համախոհները, որը 2005թ. սկզ-

# ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

«Այս գերեզմանին առջեւ մեր հոգիի եւ մտքի աչքերով կը տեսնենք վեցին հարիւր տարիներու ընթացքին մեր ժողովուրդի մղած անհավասար պայքարը իր արժանապատուութեան, իր գոյութեան եւ ազատութեան համար: Այդ կը կոչուի, ինչպէս գիտէք, հայ ազատագրական շարժում, որուն արիւնոտ ճանապարհին վրայ կը բարձրանայ հերոսական կերպարը Զօրավար Անդրանիկի:

Սփիւռքի տրածքին վրայ, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ, ամենասիրելի եւ ամենաժողովրդականացած երգերէն մէկն է «Իբրեւ արծիւ սաւառնում ես» երգը: Այդ երգի երաժշտութեան եւ մոգական ուժ ունեցող բառերու իմաստին ընդմէջէն, հայ ժողովուրդը ոչ միայն կը յիշէ իր հերոսական անցեալը, այլեւ տեսիլքը կ'ապրի իր ապագայ ընելիքին: Կարեւորը այն չէ, թէ ինչպէ՞ս մենք ազգովին, ներկայ պայմաններու մէջ, պիտի կարենանք շարունակել Անդրանիկի կէս թողած գործը, այլ կարեւորը այն է, որ սրբութեամբ պահենք գիտակցութիւնը, անսասան հաւատքը, թէ կու գայ օրը արդարութեան: Այս գիտակցութեամբ կ'ապրինք մենք այսօր եւ պիտի ապրինք, թէ Հայաստանի եւ թէ Սփիւռքի տարածքին վրայ: Եւ այս գիտակցութիւնն ու հաւատքը պէտք է ներշնչէք դուք ձեր զաւակներուն: Այսպէս է, որ լաւագոյն ձեւով մեր յարգանքը մատուցած պիտի ըլլանք մեր հերոսներու, նաեւ Զօրավար Անդրանիկի յիշատակին:

Թող Աստուած խաղաղութեան եւ յաւէտ լոյսի մէջ պահէ Անդրանիկի եւ բոլոր Անդրանիկներու հոգիները, որոնք զոհուեցան ազատութեան արիւնոտ ճանապարհին վրայ: Թող Աստուած մշտանորոգ ուժ եւ եռանդ պարգեւէ հայ ժողովուրդին, որպէսզի ան տակաւ զօրանայ, աճի եւ միշտ հաւատարիմ մնայ մեր հերոսներու ուխտին եւ միշտ պատրաստ շարունակելու անոնց գործը: Այս հաւատքով է, որ կու գամ Հայաստանէն, եւ այս հոգիով է, որ աղօթք կը կարդամ այսօր այստեղ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: Ամէն»:

**Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վազգէն Ա**
**1979թ., Փեր լա Շէզ**

## ԱՄՆ-Ը ՉԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԻ ԿԱՐՍ-ԹԲԻԼԻՍԻ-ԲԱՔՈՒ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը հաստատել է Կարս-Թբիլիսի-Բաքու երկաթուղու շինարարության ֆինանսավորումն արգելող փաստաթուղթը, որում նշված է, որ Արտահանման և ներկրման բանկը չպետք է մասնակցի, երաշխավորի և ապահովի այդ երկաթուղու շինարարությունը: Պատճառն այն է, որ երկաթուղին շրջանցում է Հայաստանը: Փաստաթուղթը, կոնգրեսմեն Ջոզեֆ Քրոուլիի համոզմամբ, նպաստելու է տարածաշրջանում կայունության հաստատմանը և երկարատև հակամարտությունների լուծմանը: Բացի դրանից, կոնգրեսմենը գտնում է, որ ԱՄՆ-ի հարկատուները, պարզապես, կազատվեն Կարս-Թբիլիսի-Բաքու երկաթուղու ֆինանսավորման պատասխանատվությունից: Հայաստանի շրջանցմամբ նշված երկաթուղագիծը 98 կմ է, որի շինարարությունը ծրագրված էր սկսել ընթացիկ տարվա երկրորդ կեսին: «Ռեգնում» գործակալության տեղեկացմամբ, ըստ որոշ հաշվարկների՝ ծրագիրը 500 մլն դոլար արժե **(«ԱԶԳ», 27, 07, 2006թ.)**:

բին ուներ 360 հազար անդամ: Այս ուժին է պատկանում խորհրդարանական մեծամասնությունը:

Ընդդիմությունը բաղկացած է 2 մասից: «Ազադլըք» դաշինքի (որը ստեղծել է Ա. Էլչիբեյը) մեջ մտնում են Ադրբեջանի ժողովրդական Ճակատ, Ադրբեջանի ազգային անկախություն և Ադրբեջանի դեմոկրատական կուսակցությունները, «Բիրլիք» շարժումը: «Ազադլըք»-ի ներկայացուցիչների խորհուրդը սկիզբ է դրել դաշինքի հանձնաժողովի, ինչպես նաև կազմակերպչական, քարոզչական բաժինների ստեղծմանը: Նախատեսվում է միավորել դաշինքի մեջ մտնող բոլոր կուսակցությունների կազմակերպչական մարմինները: Նման ուժեղացմանը զուգահեռ նախատեսվում է ստեղծել վերկուսակցական հանձնաժողով՝ բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից բաղկացած: Այս ամենը նպատակ ունի հզոր ու միասնական ընդդիմություն ձևավորել, որը կարող է արժանի դիմադրություն ցույց տալ իշխող կուսակցությանը: Քաղաքական դաշտի 3-րդ ուժը ընդդիմության մնացած մասն է՝ «Մուսավաթի» գլխավորությամբ:

Քննարկվում են քաղաքական կուսակցություններին պետբյուջեից միջոցներ հատկացնելու խնդիրը: Դրվում են հետևյալ 4 չափանիշները՝ պետական գրանցում, ակտիվիստների թվաքանակ, ընտրությունների ժամանակ հավաքած ձայների անհրաժեշտ քանակ և խորհրդարանում ներկայացուցիչ: Այս չափանիշներին ընդդիմությունից համապատասխանում է միայն «Մուսավաթը»: Այս 4 չափորոշիչների պատճառով ընդդիմությունը կրկին հայտնվում է բարդ իրավիճակում՝ ստիպված լինելով հույսը դնել դրսի օգնության վրա:

Ամեն ինչ հարթ չէ նաև մյուս ոլորտներում: Անցկացված հարցումների համաձայն՝ կոռուպցիան հատկապես մեծ չափերի է հասնում դատական համակարգում, ոստիկանությունում, գործադիր իշխանությունում: Մեկ տարի առաջ ընդունված «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքն առանձնապես էական բարեփոխումներ չի մտցրել այս ոլորտում: Բացի կոռուպցիայից Ադրբեջանի ներքին կյանքում կան շատ այլ արատավոր երևույթներ ևս, որոնք տեղ են գտել նույնիսկ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի հաշվետվությունում. կտտանքներ, որոնց ենթակրվում են ձերբակալվածները, ձերբակալություններ քաղաքական շարժառիթներով, ձերբակալվածների ծանր պայմանները (վերջին մեկ տարում զոհերի թիվը դատապարտյալների շրջանում հասել է 107-ի), ոստիկանների անպատժելիությունը, կոռուպցիան դատական համակարգում, ցույցերի ժամանակ անընդունելի մեծ քանակությամբ ոստիկանների առկայությունը, կանանց սոցիալական խտրականության փաստերը և այլն: Իրավիճակը երկրում սպառնում է նոր քաղաքական ձերբակալություններով: Լուրջ հիմնախնդիր է նաև խոսքի ազատությունը: Այնուամենայնիվ, եթե տպագիր մամուլում այն ինչ-որ չափով առկա է, ապա նույնը հնարավոր չի ասել էլեկտրոնային մամուլի վերաբերյալ:

Այսպիսով, Ադրբեջանի ներքին կյանքում բավականին խառնաշփոթ է տիրում, և հստակեցումներ սպասվում են ոչ մոտակա ապագայում:

**ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# «ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ»

**(Երևան, 2006թ.)**

Ղարաբաղյան հակամարտությունը, ինչպես իր պատմական, այնպես էլ ներկա դրսևորմամբ, իրենից ներկայացնում է հակամարտող քաղաքակրթությունների ակնհայտ բախում, ուր երկու կողմից հանդես են գալիս անհամատեղելի քաղաքակրթական տարրեր կրող էթնիկ հանրություններ: Այս կանխադրույթը բոլորովին էլ չափազանցված չէ:

Թյուրքական քոչվոր ցեղերի ներխուժումը Մերձավոր Արևելք և Կովկասյան տարածաշրջան առաջ բերեց գեոէթնիկական նշանակալի տեղաշարժեր, որոնք այս տարածաշրջաններում հանգեցրին էթնիկական և քաղաքական դիմագծերի անշրջելի ձևափոխությունների: Այս նոր մեգաէթնիկ տարրը, զբաղեցնելով Ադրիատիկից մինչև Կասպից ծովն ընկած տարածքը, ժամանակի ընթացքում տարածեց իր գերիշխանությունը քրիստոնյա Արևմուտքի ժողովուրդների վրա, այդ թվում նաև՝ հայերի:

Լեռնային Ղարաբաղը, լինելով պատմականորեն հայաբնակ տարածք, հայկական քաղաքակրթությանը բնորոշ իր պատմամշակութային ժառանգությունով, պահպանեց իր կիսաանկախ վիճակը և հաջողությամբ պայքարեց այն արտաքին ուժերի դեմ, որոնք ձգտում էին իրենց գերիշխանությունը հաստատել այս տարածքում:

Ինչպես 20-րդ դարի սկզբում, այնպես էլ նոր հազարամյակի նախաշեմին Հայաստանը և Արցախը թուրք և ադրբեջանցի պանթուրքիստների կողմից դիտվեցին որպես




պանթուրքական ծրագրերի կյանքի կոչմանը խոչընդոտող հիմնական գործոններ: Ակնհայտ է, որ Թուրքիայի Ղարաբաղյան հիմնահարցում Ադրբեջանին սատարելու բոլոր փորձերը բխում էին հենց այս մտավախությունից, ուստի, Հայաստանի հանդեպ ուժի դիրքերից քաղաքականություն վարելը ոչ այլ ինչ է եթե ոչ երիտթուրքերի քաղաքականություն և նրանց դավանած գաղափարախոսության տրամաբանական շարունակություն:

Այլ կերպ ասած՝ Ղարաբաղի հայության պայքարը ադրբեջանական գաղութային քաղաքականության դեմ հանդիսանում է նաև հակադիր ինքնությունների բախում, որտեղ մի կողմից հանդես է գալիս էթնոսը՝ իր վաղուց ձևավորված ազգային ինքնագիտակցությամբ, մշակույթով, պատմական անցյալով և հիշողությամբ, իսկ մյուս կողմից՝ արհեստականորեն ձևավորված պետություն և էթնոս,՝ որը հանդիսանում է թուրքական և սովետական ռազմագետների աշխարհաքաղաքական փորձարկումների արդյունք:

Այս մենագրության մեջ փորձել ենք վերլուծել և գնահատել Թուրքիայի դերը Ղարաբաղյան հակամարտությունում, դիտելով այն Անկարայի նեոպանթուրքական քաղաքականության ծիրում, որը գերիշխում էր թուրքական արտաքին քաղաքականության մեջ՝ սկսած 1990-ականների սկզբից: Բազմալեզու և հարուստ փաստագրական նյութերի և աղբյուրների հիման վրա մենագրության մեջ ներկայացվում են նաև Թուրքիայի և Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտման կոնկրետ փաստեր: Մասնավորապես, խոսքը վերաբերվում է Ղարաբաղյան պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից Ադրբեջանին ռազմական օգնություն տրամադրելուն, ինչպես նաև Ադրբեջանի և Թուրքիայի տարածքները միջազգային ահաբեկչական ցանցի կողմից օգտագործելու փաստերին:

**ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ**
**Պատմական գիտությունների թեկնածու**

# ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏ - 15

Արկադի Տեր-Թադևոսյանի, Ալբերտ Մուսինյանի, Գալուստ Գալստյանի, Լեոնիդ Ազգալդյանի, Արա Մուրադյանի, Վարդան Ավետիսյանի, Մարկոս Մելքոնյանի, Ռուբիկ Գալստյանի, Լեոնիդ Գրիգորյանի, Ռաֆայել Շահմուրադյանի և մի շարք այլ հրամանատարների, ազատամարտիկների, սպաների և զինվորների անունները, ովքեր մասնակցեցին Արցախյան պատերազմին, դարերով կմնան հայ ժողովրդի պատմության մեջ, միշտ հիշեցնելով, թե ինչ քաջ հերոսներ ունի մեր ազգը, ովքեր մարտական հզոր ոգու և պատրաստվածության շնորհիվ հաջողությամբ պայքարեցին և ցույց տվեցին թուրք ոսոխին, որ հային է պատկանում Արցախի հողը: Արցախյան պայքարի մասին խոսելիս՝ հաճախ կարող ենք մանկական չարաճճի ժպիտ տեսնել այդ հզոր մարդկանց դեմքերին և հասկանալ, որ նրանք նույնիսկ հաճույքով են հիշում, թե ինչպես են թշնամու ջարդը տվել կատաղի պայքարում՝ անտեսելով բոլոր դժվարություններն ու վտանգները: Ոչ միայն նրանք, մենք նույնպես հպարտությամբ ու գոհունակությամբ ենք վերհիշում ու ընթերցում պատմական փաստերը, որոնք ներկայացնում են Հադրութի, Մարտու-

նու, Ասկերանի, Մարտակերտի շրջանների գյուղերի ազատագրական մարտերը, ինչպես նաև՝ սրտի կսկիծով ու ափսոսանքով հիշում ու փառաբանում այդ կատաղի մարտերում զոհված նվիրյալ ազատամարտիկներին:

Պետք է առանձին-առանձին անդրադառնալ Արցախյան ազատամարտի հերոսական էջերին, որպեսզի խորապես և ճիշտ հասկանանք դրանց իմաստն ու նշանակությունը:

## 1991թ. Հադրութի ինքնապաշտպանությունը

Խորհրդային բարձունքը կարծես հզոր լեռնածալքերի սկիզբը լիներ: Գեղատեսիլ անտառները, իրենց գիրկն առնելով Հադրութը, իրարից բաժանում են Տող և Ցոր գյուղերը: Լեռներին թիկնած Հադրութ շրջկենտրոնը խաղաղ ու հպարտ նայում է հարավ՝ Արաքսի ջրերին, որոնք գնում-լցվում են Կասպից ծովը... Գեղեցիկ պատկեր է...: Սակայն ի հակառակ այս աստվածային գեղեցկության, 1991-ին դժոխային լարվածություն էր կախված օդում:

Տող գյուղի հազար յոթ հարյուր բնակիչներից ութ հարյուրն ապրում էր հայկական, իսկ մնացածը՝ ադրբեջանական թաղամասերում:

Օգտվելով պատեհ առիթից՝ թուրքերը հարձակվում են հայերի վրա, և սկսվում է թալանը, կոտորածն ու տեղահանությունը:

Տողի բնակիչ Միսաք Դանիելյանի ամբողջ ընտանիքը հրապարակավ կոտորում են, պատռում հղի հարսի որովայնը, արգանդից հանում յոթ ամսական երեխային և ոտքերի տակ տրորելով՝ հպարտությամբ բացականչում՝ արու զավակ էր: Ահա այսպես ահ ու սարսափի մեջ պահելով տեղացիներին՝ փորձում են հեշտությամբ գրավել Հադրութը, որի բնակիչները շուտով սկսում են պատրաստվել ինքնապաշտպանության: Ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Արթուր Աղաբեկյանը ծանր մտորումների մեջ էր. վտանգված էր հայրենի հողի ու ժողովրդի ճակատագիրը:

1991թ. մայիսի 13-16-ը թշնամուն հաջողվեց բռնությամբ տեղահանել մեկ տասնյակից ավելի գյուղերի բնակիչների: Հոկտեբերի 31-ին ռմբակոծվեցին Տող, Դրախտիկ և Ազոխ գյուղերը: Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս) հեռախոսով կապվում է օմոնական հրամանատարի հետ և խոսակցությունից պարզում, որ Տող և Յալ գյուղերի վրա հարձակում է սպասվում: Ձևակերպումն այսպիսին էր. «Թուրքերին հայերի ձեռքից ազատելու նպատակով»: Նա շտապ խորհրդակցություն է հրավիրում՝ խափանելու այդ նենգ ծրագիրը: Բայց ոչ ոք չգիտեր, թե ինչպես դա անել: Երբ երեք օր հետո սկսվում է թուրքերի հարձակումը, Կոմանդոսը ժամանակ շահելու համար հագնում է խորհրդային բանակի գնդապետի զինվորական համազգեստ և թշնամուն ներկայանում որպես Մոսկվայի ու Բաքվի կողմից բանակցություններ վարելու համար լիազորված հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ: Նրան ուղեկցում էին Աշոտն ու Անդրանիկը: Մինչ այդ Աշոտը զգուշացրել էր Կոմանդոսին, որ այդպիսի քայլը մեծ վտանգի հետ է կապված, կենդանի վերադառնալը՝ գրեթե անհնար: Կոմանդոսն էլ պատասխանել էր. «Ես նրանց հետ շախմատ, շաշկի շատ եմ խաղացել, նրանց լավ եմ ճանաչում»:

Երեքով նստում են մեքենան և մեկնում: Տեղ հասնելուն պես Կոմանդոսը թուրքերի հետ խորհրդակցություն է անցկացնում և իրեն հատուկ զինվորական խիստ տոնով նախատում նրանց, պահանջում դադարեցնել գործողությունները և Բաքվից սպասել լրացուցիչ հրահանգների, քանի որ Տող գյուղի թուրքերի հարցն իբր լուծել է, որ թուրք ազգաբնակչության անվտանգությունն ապահովված է և անհանգստանալու պատճառ չկա:

Մինչ թուրքերը ուշքի կգային, Կոմանդոսը վերադառնում է շտաբ և ջոկատների հրամանատարների հետ կազմակերպում Հադրութի ինքնապաշտպանությունը: Մեր ջոկատները 1991թ. սեպտեմբերի 13-ին հայկական, իսկ 30-ին ադրբեջանական թաղամասերից վռնդում են թուրքերին: Սեպտեմբերի 30-ին ազատագրվում են ռազմավարական նշանակություն ունեցող Տող և Յալ գյուղերը, պաշարման վտանգից փրկվում է Հադրութը:

Այդ մարտերում բազմաթիվ նվիրյալ ազատամարտիկների մեջ իրենց խիզախությամբ հատկապես աչքի ընկան Դավիթ Սրապյանը (Դև), Տող գյուղի ջոկատի հրամանատար Արմեն Գասպարյանը (Արմենչո), Հադրութի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արթուր Աղաբեկյանը, Արմեն Աբրահամյանը և ուրիշներ: Հադրութի շրջանի Ցոր և Տող գյուղերի, Խորհրդային ազատագրումից հետո ջոկատը մեկ ամիս հանգստանալու հնարավորություն ստացավ: Հադրութի ողջ բնակչությունը մեծ ջերմությամբ տուն ճանապարհեց իր ազատամարտիկներին: Շատերը լալիս էին...

Մարտում զոհվել էր միայն մեկը՝ Շուրիկը (Ալեքսանդր Խաչատրյան): Կային նաև վիրավորներ՝ Մակիչը, Կոլյան և Ցոր գյուղից՝ Արմենը:

Հադրութի ինքնապաշտպանությունը Արցախի ազատագրական պայքարի այն հերոսական էջերից մեկն է, որով հայ ժողովուրդը միշտ կարող է հպարտանալ ու պարծենալ:

**ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*«Մեր մեռելները հեռու-հեռու անապատների մեջ են և նրանք մեզանից ծաղիկ չեն սպասում, այլ ոճրապարտ գանգերի արյունը»:*
*Արամ Երկանյան*

# ԱՐԱՄ ԵՐԿԱՆՅԱՆ. ՀԱՅ ՖԵՂԻ ՎՐԻԺԱՌՈՒ ԲԱԶՈՒԿԸ

Ո՞վ է Արամ Երկանյանը: Բոլորից լավ նրան բնութագրել է իր ուսուցիչը՝ թուրք դահիճներին պատժելու գործողության՝ «Նեմեսիսի» ղեկավար Շահան Նաթալին. «Դիտեցեք իր պատկերը: Եվ անոր ճակատը, աչքերը, դեմքը պիտի պատասխանեն՝ Հայ Նեմեսիս մը...: Զինքը ճանչցայ Պոլիս: Չէի հանդիպած իրեն: Հոգիներու ճանաչողութիւնը ժամանակով չի չափուիր: Բաց գիրք մը, որ ինձ թուեցաւ, թէ ծնած օրէս կարդացած էի: Պարզունակ անխաթար, սիրտն ու հոգին շրթունքին, բաց ճակատին վրայ եւ հայու աչքերուն մէջ: Կարնեցի տղան ուրիշ բան էր, վկայեց իմ հոգին»:

Հայ ազատագրական պայքարի մեջ քիչ են այն ընտրյալները, որոնց շատ բանով պարտական է մեր ժողովուրդը՝ թուրք դահիճներին պատժելու սրբազան գործում...

Նրա Սամվել անունով քաջակորով նախնին շատ տարիներ առաջ եկել է Խարբերդի վիլայեթի Փշատիկ գյուղից ու բնակվել Էրզրումի Վիլայեթի գեղատեսիլ մի վայրում, որը հետագայում կոչվել է Երկան: Բարձր հասակի համար Սամվելին կոչում էին Էրգան (Երկան): Հետագայում Երկանյանների մի ճյուղը տեղափոխվել է Էրզրում, ուր և 1900-ին ծնվել է Արամը: 1911-ին պատանի Արամը ձեռքն է վերցնում Վենետիկի Մխիթարյանների հրատարակած պատկերազարդ գիրքը՝ 1894-96թթ. և 1909-ի Ադանայի հայկական ջարդերի մասին: Դիտելով ջարդերի սահմռկեցուցիչ պատկերները՝ նա երդվում է. «Ես կդառնամ վրիժառու»: Ու երդումը պահեց սրբությամբ:

Միայն համառոտ թվարկումը, նրա կողմից պատժված հայակեր դահիճների, բավական է, որ սերունդներն իրենց առջև ունենան ցեղակրոն մարտիկի կերպարը. Բաքվի հայության ջարդարարներ՝ Ղասիմ-բեկովը, Խաս-Մահմեդովը, Սարաֆովը գնդակահարվեցին Թիֆլիսում: Բայց առավել տպավորիչը Ադրբեջանի մուսավաթական կառավարության նախկին վարչապետ Խան-Խոյսկու ահաբեկումն էր: Նորից խոսքը տանք Շ. Նաթալուն. «Ո՛վ Խան-Խոյսկին կը ճանչայ, անոր պատմության ծանոթ է, ան միայն կրնայ ըմբռնել, թե դիւցազնը, Արամին մեջ, ինչի կրնար նմանիլ:

Չէ որ փորձերը, որ կատարուած էին իր ոճիրները քավել տալու, կրցած էր քանի անգամներ ձախողեցնել... Գիտակ ու փորձ, գազան, որ գիտե, թե օրուան որեւէ մեկ ժամուն իր դէմ կրնայ կանգնիլ հայ վրեժխնդիրը: Եվ կարհամարհե դարձեալ...»:

Այո, բոլոր երեք մահափորձերը Խան-Խոյսկու դեմ անհաջող էին, և դրանից ավելի ինքնավստահ էր դարձել նախկին վարչապետը՝ Բաքվի և Շուշիի հայության ջարդերի կազմակերպիչը: Սակայն Արամը ապացուցեց, որ ոչ մի դահիճ չի կարող փրկվել ցեղակրոն վրիժառուի գնդակից...

1920թ. հունիսի 19: Թիֆլիսի Գոլովինսկու (հիմա՝ Ռուսթավելու պողոտա) փողոցում անշուք արտաքինով բակապանի վրա ոչ ոք ուշադրություն չդարձրեց: Ծուլորեն հորանջող բակապանը հանկարծ կերպարանափոխվեց, երբ երևաց Խան-Խոյսկին՝ իր «ղոչիներով»: Մի պահ միայն թուրք դահիճը տեսավ ահեղ վրիժառուին ու այլևս... ոչինչ չտեսավ: Պայթեց Արամի «Մաուզերը», և հայակեր դահիճը ընկավ ջախջախված գանգով: Եվս երկու կրակոց, ու էլի երկու ղոչիներ հետևեցին իրենց առաջնորդի օրինակին: Արամը ինքն էլ վիրավորվեց, սակայն կարողացավ խուսափել հետապնդումից՝ ապացուցելով, որ որքան՝ քաջ, նույնքան էլ հնարամիտ է:

Վերադառնալով Կ. Պոլիս՝ Արամը ձեռնամուխ եղավ հայանուն դավաճանների ահաբեկմանը: Վահե Քիսա և Արթին Քեհյա... այդ նրանք էին, որ կազմել էին Կ. Պոլսի հայ մտավորականության ցուցակը, որոնց 1915թ. ապրիլի 24-ի ձերբակալումով սկիզբ դրվեց ցեղասպանությանը: Չինակցելով զենքի և գաղափարի իր ընկերոջը՝ Սողոմոն Թեհլիրյանին, Արամը Բերա թաղամասում գնդակահարեց այս երկու դավաճաններին:

Առջևում Բեռլինն էր: Այստեղ էին թաքնվում թուրքական դատարանի կողմից ձևականորեն մահվան դատապարտված թուրք դահիճները: Արդեն գնդակահարված էր Թալեաթ փաշան: Իսկ Արամին բաժին էր ընկել Բեհաէտդին Շաքիրը: Եվրոպական կրթություն ստացած, բժշկի դիպլոմով մարդակերը Թալեաթի աջ ձեռքն էր և Իթթիհատի անթագադիր արքան: Այդ նա էր, որ հազարավոր երեխաների թունավորեց ու կուրացրեց: Նա էր, որ հայ մանուկներին Սև ծովում խեղդելու ոճիրը հղացավ, որը ամենայն բծախնդրությամբ իրագործեց Տրապիզոնի նահանգապետ Քեմալ Ազմին:

1922թ. մարտին գալով Բեռլին, Արամը եղավ Հայդենբերգ փողոցում, որտեղ մեկ տարի առաջ գնդակահարվել էր արնախում Թալեաթը: Մինչ այդ նա եղել էր Կ. Պոլսի Պթի Շան կոչվող փողոցում, ուր վրիժառու Միսաք Թոռլաքյանը գնդակահարել էր մուսավաթական դահիճ Ջիվանշիրին: Հիմա Արամը կանգնած էր ճիշտ այն տեղում, ուր թափվել էր ոճրագործ Թալեաթի արյունը:

«...Սրբազան դատարան մըն է Հայդենբերգը, ուր ես կըմբոխշնեմ դատաստանի մը երանութիւնը... Ինծի կը թուեր, թե Թալեաթի դիակը դեռ այդտեղ էր՝ տարածուած իր արիւնին ու ցրեխ տուած ուղեղին մէջ: Ոտքերուս տակ կը զգայի իր լեշը եւ կը կարծեի կոշիկներս տեսնել արիւնով ներկուած: Այս երանութիւնը ցեղին նահատակութեան պարտադրանքն էր եւ ես անոր յավերժութիւնը կը բաղձայի»:

1922թ. ապրիլի 17: Բեռլինի Ուլանդշտրասե փողոցի վրա, կեսգիշերին Թալեաթի կնոջ աչքերի առջև գնդակահարվեցին Բեհաէտդին Շաքիրը և Ջեմալ Ազմին: Երկու վրիժառուներն էլ՝ և՛ Արամը, և՛ Արշավիր Շիրակյանը, հաջողությամբ խույս տվեցին հետապնդումից:

Քրիստոնեական մեռելոցի այդ գիշերը Գերմանիայի թուրք հասարակության ընտրյալները հավաքվել էին խնջույքի Ազմիի բեյի տանը, ուր անպատճառ պետք է հպարտանային ոչ հեռավոր 1915-ի արյունոտ ապրիլով ու... զվարճանային: Վրիժառությունը կատարվեց Ազմիի տան մոտ՝ խնջույքավորների սարսափար աչքերի առջև:

Իսկ ի՞նչ էր զգում Արամը ահաբեկումից հետո. «Հազիվ անկողին մտած այնպիսի երանավետ մի քնով քնեցի այդ գիշեր, որ հազիվ թե այդքան անուշ քնած լինեի կյանքումս: Քնել էի, կարծես անհոգ մանկիկ, որ գլուխը բարձին դրած՝ աչքերն է փակում քաղցրորեն: Ոչ մի հոգնություն, ոչ մի կասկած կամ երկյուղ... Չէի մտածում անգամ, թե ոստիկանություն կա և հետապնդումներ: Կարծես վերադարձել էի մի հաճելի քեֆից և գինին քաղցր թմրությունով էր գրկել ինձ:

Միլիոնների արյան վրեժխնդրի համար ավելի գինովցնող ի՞նչ գինի կա, քան ոճրագործների արյունը: Եվ երբ կշարունակվեր ականջիս մեջ «բաբա՜, բաբա՜» կոչը, ինձ թվում էր մայրիկս է, որ օրոր էր երգում՝ օրորոցս օրորելով»:

Մեծանուն վրիժառուն նաև կամավորական շարժման գործուն մասնակից էր:

1917-ին նա եղել է Կովկասյան ռազմաճակատի էրզրում-Մամախաթուն հատվածի հաղորդակցության ճանապարհների ձիավոր խմբի պետ: 1918-ի Բաշ-Ապարանի հաղթական ճակատամարտում՝ հայտնի ֆիդայի Զեմլյակի ձիավոր խմբի հետ իբրև գնդացրային դասակի պետ:

1918-ի դեկտեմբերին, դառնալով Հայաստանի Հանրապետության բանակի հատուկ հանձնարարությունների զինվոր, Արամը կարճ ժամանակում լիկվիդացրել է Լոռվա շրջանի, մասնավորապես՝ Ղարաքիլիսայի շրջակայքում գործող թուրքական ավազակախմբերը (ի դեպ, նրա հարազատները գաղթելով հայրենի էրզրումից, ապրում էին Ղարաքիլիսայում):

1922-27թթ. Արամը ապրել է Ռումինիայում, հետո՝ անցել Արգենտինա: Բուենոս-Այրեսում, Կորդովայում նա մասնակցել է Գ. Նժդեհի Ցեղակրոն ուսմունքի տարածմանը, եկեղեցիների և դպրոցների բացմանը, կազմակերպել տպագրության գործը՝ հիմնադրելով առ այսօր հրատարակվող «Արմենիա» թերթը: Այս ասպարեզում էլ մեծանուն վրիժառուն իրեն դրսևորեց որպես նվիրյալ: Ընթերցելով նրա «Այսպես սպանեցինք» հուշագրությունը՝ ակամա հիշում ես Նիկոլ Աղբալյանի հայտնի խոսքերը. «Սուրս չթողեց, որ գրող դառնամ, գրիչս չթողեց, որ զինվոր դառնամ»: Սակայն Արամ Երկանյանը ճակատագրի այն ընտրյալն էր, որ հավասար նվիրվածությամբ ծառայեց և՛ զենքին, և՛ գրչին:

Ընդամենը 34 տարի ապրեց Արամը, սակայն իր ազգի համար հասցրեց անել ավելին, քան՝ հազարավոր մահկանացուներ: Հեռավոր Կորդովայում գտնվող ցեղակրոն հայորդու գերեզմանը սրբավայր է, իսկ անունը՝ սրբություն մեր ժողովրդի համար:

**ՀԱԿՈԲ ՄԱՆՉՅԱՆ**

# ԱՆՁՆՎԵՐ ՀԱՅՈՐԴԻՆ. ԱԲՐԱՀԱՄ ԲԵՋԱՆՅԱՆ

Աբրահամ Լենիկի Բեջանյանը ծնվել է 1959-ին, Նոյեմբերյան շրջանի Կոթի գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, որից հետո՝ 1978-ին, ընդունվել է Երևանի Ժողտնտեսության ինստիտուտ: 1982-ին ավարտել է ուսումը և զորակոչվել՝ բանակ, զինվորական ծառայությունը անցկացրել է Սախալինում: 1983-ին վերադարձել է Հայրենիք և աշխատանքի է ընդունվել Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Լուսատեխնիկական գործարանում՝ որպես պլան-տնտեսագիտական բաժնի պետ: Այնուհետև աշխատել է գլխավոր հաշվապահի տեղակալ, հետո՝ գլխավոր հաշվապահի պաշտոնակատար:

Երբ սկսվեց Արցախյան ազատամարտը, խախտվեց նաև Հայաստանի սահմանամերձ շրջանների անդորրը: Ռազմական բախման առաջին իսկ օրերից նա, իր համագյուղացիների նման, թողած ընտանիք, աշխատանք, Կոթիի ինքնապաշտպանության ջոկատի շարքերը համալրեց՝ անձնվիրաբար պաշտպանելով հայրենի գյուղի սահմանները: 1992-ին ռազմական ուսումնական կենտրոնում վերապատրաստվելուց հետո Աբրահամ Բեջանյանը մեկնեց Արցախ՝ մասնակցելու Մարտակերտի ինքնապաշտպանական մարտերին:

Մարտադաշտի դեպքերից պատմում է Աբրահամի մարտընկեր Ապեր Մանգասարյանը. «Աբրահամը առաջին տանկը խփեց Աղդամ-Մարտակերտ ճանապարհին՝ քարհանքի մոտերքում: Ճիշտ է տանկը մեր դիրքերի վրա էր կրակում, սակայն մենք ապահով տեղ էինք ընտրել: Ռազմական գործողությունների այդ հատվածը Մարտակերտից երկու-երեք կիլոմետր էր հետու: Մեր հրամանատարը Վալերիկ Հարյանն էր:

Մեր ջոկատի տղաները, այդ թվում նաև հրամանատարն ու շտաբի պետը, հաշվի առնելով Աբրահամի և՛ տարիքը, և՛ ծանրակշիռ լրջությունը, առանձնահատուկ հարգանքով էին վերաբերվում նրան, իսկ շատ դեպքերում էլ նրա հետ էին խորհրդակցում: Մի քանի անգամ մեզ Աբրահամի հետ ուղարկել են Լիսագոր, նրա հետ եղել ենք Ճարտարի, Մալիբեյլիի դիրքերում: Աբրահամը շատ չէր խոսում, ավել շատ լուռ էր՝ իր մտքերի հետ: Երբ իր առաջարկի կամ որոշման մասին էր սկսում խոսել, մենք ուշադիր լսում էինք, որովհետև նրա խոսքը կշռադատված էր...:

...Վաղուհասի սարերից մեզ այս անգամ ոչ թե հետ կանչեցին, այլ կարգադրեցին տեղափոխվել Ղազարահողի բարձունքները: Մենք չորս հոգով Չլդրանի անտառներով հասանք նշված տեղը՝ Չլդրանի դուզ կոչվող վայրը: Այդ ժամանակ Դրմբոնը ազերիների ձեռքում էր և նրանք էլ վերահսկում

էին Սարսանգի ջրամբարը և Աղդամ-Մարտակերտ տանող ճանապարհը: Թշնամին այդ հատվածներում ահռելի քանակությամբ տեխնիկա էր կուտակել...

Վերջին մարտում Աբրահամը դիպուկ նշանառությամբ խփեց թշնամու 4 տակ և 30 ազերի զինվոր տեղափոխող մի ավտոբուս: Մի քանի ժամ անց մեզ հաղորդեցին, որ Վաղուհասի երկայնքով մարտերը սկսվել են: Մենք հարձակվելու էինք Ղազարահողի և Դրմբոնի ուղղությամբ: Երբ Ղազարահողից մոտ 1 կմ հեռավորության վրա էինք, փորձեցինք ձորից դուրս գալ ու մտնել անտառ: Բլրի հետևից մեզ հետևող թշնամին սկսեց կրակել: Չորը լցվել էր ահռելի դղրդոցով ու շառաչով: Թշնամին մի քանի դիրքերից էր կրակում: Հանկարծ մեր թիկունքում մի արկ պայթեց, բոլորս պառկեցինք գետնին: Այդ դղրդոցի մեջ մեկ-մեկու ձայն տվեցինք, բոլորն արձագանքեցին, բացի Աբրահամից. նա կիսանստած էր, աջ ձեռքից արյուն էր հոսում: Շտապ սկսեցի վիրակապել և միաժամանակ հարցնել, թե ուրիշ տեղից էլ չի՞ վիրավորվել:

«Ոնց որ սրտիցս էլ եմ վիրավորվել»,- նրա վերջին բառերն էին:

Ես, Արմիկն ու Ռոմանը նրան վերցրեցինք ու սկսեցինք հետ գնալ՝ դեպի ձոր, որ այնտեղով հասնեինք մեր նախկին դիրքերը: Օգնություն կանչեցինք: Մեքենա եկավ, նրան տարանք Ցեխ ձորի դաշտային հոսպիտալ: Ցավոք այլևս ոչինչ անել հնարավոր չէր...»:

Մարտակերտի շրջանում չկար ռազմական շատ թե քիչ հայտնի մի գործողություն, որին մասնակցած չլիներ Աբրահամը: Նա՝ հակատանկային շարասյան հրամանատարը, մասնակցել է Մարտակերտի Չափար, Գետավան, Մոխրաթաղ, Գյուլաթառ, Վաղուհաս բնակավայրերի պաշտպանության մարտերին:

Ահա ևս մի հերոս, մի հայրենասեր հայորդի, որ իր կյանքը զոհեց հանուն այսօրվա, հանուն վաղվա պայծառ ապագայի, որտեղով պիտի քայլեն նրա դուստրերն ու որդին և հպարտանան իրենց հայրիկով:

Աբրահամ Բեջանյանը 2002-ին հետմահու պարգևատրվել է «Արիության մեդալով»:

**ԼԻԼԻԹ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

**ՊԻԵՌ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**

1959-1982: Նահատակվել է Ֆրանսիայում, 3 հուլիս 1982-ին: Պատանի տարիքից նվիրվելով Նորագույն զինյալ ազատագրական պայքարին՝ իր խիզախությամբ, հանդգնությամբ և համեստությամբ խորհրդանիշ դարձավ սփյուռքահայ երիտասարդության համար: Պիեռը Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի զինվորական պատասխանատուն էր Եվրոպայում, որտեղ նա հասցրել էր արդեն կատարել տասնյակ զինվորական գործողություններ: Զոհվեց ռումբի վաղաժամ պայթյունից:



**ՎԱՉԵ ՏԱՂԼՅԱՆ**

1964-1983: Նահատակվել է Լիսաբոնում, 28 հուլիս 1983-ին «Հայոց ցեղասպանության արդարադատության մարտիկներ» կազմակերպության խմբակի կազմում տեղի թուրքական դեսպանատան գրավման ժամանակ:

Երկար տարիներ անխոս աշխատելով և ռազմական դաստիարակություն ստանալով ՀԱՀԳԲ-ի շարքերում՝ նա կարողացավ զուսպ և գործունյա մարդու խորհրդանիշ դառնալ:



Զոհրաբ Սարգսյան

# ՕԳՈՍՏՈՍԻ 7. ՆՈՐԱԳՈՒՅՆ ԶԻՆՅԱԼ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՕՐ



Լևոն Էքմէքճյան

ՀԱՀԳ Բանակը միասնության հիմքում դրեց Հայաստանի ազատագրության համար համազգային պայքարը, այսինքն՝ ազգի նպատակի միասնությունը, միակամությունը: Նա ձգտում էր պայքարը հայ համայնքից հանել դուրս, որ ոչ թե հայը հայի դեմ կռվեր, այլ բոլոր հայերը միավորվեին ընդհանուր թշնամու դեմ: Եվ որքան էլ անհավատալի լինի ՀԱՀԳ Բանակի 1975-1981թթ. գործունեությունը այդ բնագավառում, որոշակի բեկում ծնեց:

**ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

«Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն. Նահատակներ հավերժության», Երևան – 2005, էջ 114

## Ի՞նչ կուչել...

...Ու սգալ մի մահ, որ լի՛ է կեանքով, որ ապրողներից զորե՞ղ է ապրում: Եւ դժուար պահին՝ թալիսմանի պէս նորից իր վերջին նամակը բանալ, կանգնել բացճակատ՝ աշխարհին ի տես եւ ուժեր առած՝ նորից բարձրանալ:

29 Յունուար 1983-ին Անգարայի մէջ կախաղան հանուած նահատակ հերոս Լեւոն Էքմէքճեանի յիշատակը անմահացնելով, 16 Յունիս 1983-ին ՀԱՀԳԲ-ն իրականացուց Կոստանդնապոլսոյ «Փակ Շուկայ»-ի գործողութիւնը: Նահատակ հերոս Մկրտիչ Մատարեան յաջողութեամբ իրականացուած գրոհի առընթեր, պատանդներ վերցնելով կը բանակցի թուրք պաշտոնատարներու հետ: Այդ ընթացքին հերոս Մատարեան, պայթեցնելով իր վերջին ձեռնառումբը, իր հետ միատեղ կը սպաննէ երեք թուրք պաշտոնատարներ եւ պատանդներ:

# ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀՈՒ ՍԻՐՏՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԾՏԱՊԵՍ ԿԼԻՆԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

Բանաստեղծությունը նվիրված է ՀԱՀԳԲ-ի անդամ Լեվոն Էքմեքճյանի հիշատակին, որը կախաղան հանվեց Թուրքիայում 29 հունվար 1983-ին

**Գիշերային ռեքուիէմ**

*...Կ՝ անձրեւէ, տղաս... աշունը թաց է,*
*Ուրկից յայտնուեց կախաղանը այս.*
*Գիշերը ամբողջ աչքերս բաց են,*
*Քեզ որտե՞ղ տարան, ի՞նչ արին տղաս:*

*Անխռով անցաւ մեր ողջ ցերեկը,*
*Մինչ այնտեղ՝ ճոճուող քո մարմինն էր սառ...*
*Մեզ համա՛ր էիր որոնում ելքը,*
*Մոլորուած, մոլի սակայն մեզ համար:*

*Այդ դու՛ չմեռար, մենք ենք մեռածը,*
*Մենք՝ մեղկութեան մէջ հարբացած սերունդ.*
*Կ՝անձրեւէ, տղաս... Աշունը թաց է,*
*Թաց՝ աչքերուն պէս խեղճ, խաբուած սերունդ...*

**Սիլվա Կապուտիկյան**
*«Գարուն» ամսագիր, 11.1987թ., էջ 16*

---

*Նրանք ընկել են մարտում*
*Հանուն մեծ ուխտի՝*
*Տեսնել Արարատը*
*Անբիծ ու հզոր:*
*Նրանց շիրիմին*
*Չպետք է լացել,*
*Այլ արիանալ*
*Հրաբորբ ոգով,*
*Նրանց վերքերը*
*Արի հավատով սպիացնել:*
*Եվ ո՞վ է ասել,*
*Թե լռում են նրանք...*
*Մարտական խոսքով*
*Խոսում են մեզ հետ,*
*Եվ խրոխտ քայլքով*
*Գնում են՝ ահա՜...*
*Նրանց երթն արդար*
*Կանգառներ չունի,*
*Չունի հոգնաբեկ,*
*Թուլական ավարտ,*
*Նրանց երթը տոկուն՝*
*Ազգի արյան կանչ,*
*Պիտի հավերժի*
*Մինչև Արարա՜տ:*
*...Եվ հեշտ է այնքան*
*Կյանքում այս առտնին*
*Լինել չընդվզած,*
*Ապրել քե՛զ համար,*
*Բայց հերոս է նա,*
*Ով ապրել գիտի,*
*Եվ կռվել գիտի*
*Այդպես անձնուրաց.*
*Հանուն իր երկրի,*
*Արյան իր կանչի,*
*Հանուն սուրբ ուխտի*
*Մեծ Արարատի...*
*Շիրիմներ չեն, այլ՝*
*Մարդկային մի դաս,*
*Լուսավոր մի դաս,*
*Մեզ պատգամած:*
*Նրանք ընկել են*
*Հանուն մեծ ուխտի՝*
*Տեսնել Արարատը*
*Անբիծ ու հզոր:*
*Շիրիմին նրանց*
*Չպետք է լացել,*
*Այլ արիանալ*
*Առնական ոգով:*

**Բեյրութ, 17.07.2006 թ.**

**ԿԱՄԻԼԱ**

**ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ**

# ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ՝ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՎԵՐԱԴԱՐՁ

***«Ազգի մարդ է նա, ով ազնիվ է աշխատում»,**- ասում է ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ակադեմիկոս, ՀՀ նախագահի կողմից «Անանիա Շիրակացի» շքանշանով պարգևատրված Դավիթ Սեդրակյանը:*

**- Պարոն Սեդրակյան, մի փոքր պատմեք Ձեր մասին:**

- 1956 թվին ոսկե մեդալով ավարտել եմ Երևանի Մաքսիմ Գորկու անվան դպրոցը: Հետո ընդունվել եմ Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտել եմ 1961-ին: Նույն թվին մեկնել եմ Մոսկվա և ընդունվել ԽՍՀՄ ԳԱ Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայի բաժինը: 1962-ին, պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն, ավարտել եմ ասպիրանտուրան: Վերադարձել եմ Երևան և աշխատանքի անցել ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում մինչև 1977-ը: 1972-ին՝ 33 տարեկան հասակում, պաշտպանել եմ դոկտորական ատենախոսություն: 1975-ին ստացել եմ պրոֆեսորի աստիճան: 1977-86թթ. եղել եմ համալսարանի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ: 1986-ին Վիկտոր Համբարձումյանն ինձ հրավիրեց աշխատելու ակադեմիայում՝ որպես ՀԽՍՀ ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար: 4 տարի անց ընտրվել եմ փոխնախագահ և մինչև 1993-ը եղել եմ Վ. Համբարձումյանի տեղակալը: 1993-ին, երբ իշխանությունների դրդմամբ Վիկտոր Համազասպիչը հրաժարական տվեց, ես փոխարինեցի նրան մոտ մեկ ամիս: Հետո ընտրություն եղավ, և ակադեմիայի նախագահ ընտրվեց Ֆադեյ Սարգսյանը: Դրանից հետո՝ 1993-ին, վերադարձա համալսարան և մինչ օրս ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչն եմ: Ես նաև «Աստղաֆիզիկա» ամսագրի խմբագիրն եմ, որը հիմնադրել է Վ. Համբարձումյանը 1965-ին և մինչև 1988թ. նա էր ամսագրի խմբագիրը: Հետո խմբագիր դարձավ հայտնի աստղագետ Լ. Միրզոյանը, իսկ 1999-ից մինչև հիմա՝ ես եմ: Ամերիկացիներն այս ամսագիրը թարգմանաբար վերահրատարակում են անգլերեն լեզվով և մեզ վաճառքից տոկոս են տալիս: Տարին 4 համար է լույս տեսնում: Ամսագրի նյութերի 20-25 տոկոսը ապահովում են Բյուրականի աստղադիտարանը և ԵՊՀ-ն միասին, իսկ մնացածը դրսից է:

**- Պարոն Սեդրակյան, ի՞նչ գիտական աշխատություններ եք հեղինակել:**

- Իմ դիպլոմային աշխատանքը նվիրված էր նոր տիպի աստղերին՝ նետրոնային աստղերին: Դրանք տիեզերքի ամենափոքր աստղերն են: Նրանց մասսան հավասար է արևի մասսային, բայց նրանք շատ փոքր են: Եթե արևը 1 մլն կմ է, ապա նետրոնային աստղը 10 կմ է: Այս աստղի խտությունը հասնում է ատոմային միջուկի խտությանը: Ենթադրվում է, որ սովորական աստղը, շատ տաքանալով, պայթում է, արտաքին մասը դուրս է գցում, իսկ կենտրոնական մասը սեղմվում է նետրոնային աստղի կամ պուլսարի: Նման աստղի պայթյուն չինացիները դիտել են 1054-ին և գրանցել: Նրանք գրել են, որ երկնքի որոշակի տեղում ուժեղ լույս արձակվեց, և աստղ առաջացավ, որը ցերեկը արևի հետ երևում էր: Իմ դիպլոմային աշխատանքը այս աստղերի մասին էր, որն իմ ղեկավար՝ տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի հետ համատեղ հրատարակեցինք 1961-ին: Մոսկվայում սովորելու ընթացքում սկսեցի զբաղվել ճառագայթման տեսությամբ, թեկնածուական ատենախոսություն գրեցի «Դիֆրակցիոն ճառագայթում» թեմայով: Այս թեման միանգամայն տարբերվում էր աստղաֆիզիկայից: Արևից Երկրի վրա մասնիկներ են ընկնում, որոնք կոչվում են կոսմիկական ճառագայթներ: Պարզելու համար, թե դրանք ինչ մասնիկներ են, գրանցում են նրանց ճառագայթումը: Այդ նպատակով ճառագայթման տարբեր ձևեր են հայտնաբերվել: Իմ աշխատությունը վերաբերում էր դիֆրակցիոն ճառագայթմանը: Հետո, երբ վերադարձա Երևան, թողեցի այդ հետազոտությունը: Մոսկվայում այդ ճառագայթման վրա մեծ խումբ էր աշխատում: Սկսեցի ուսումնասիրել, թե ինչպես են պտտվում նետրոնային աստղերը: 1972-ին այս ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվեցին իմ դոկտորական ատենախոսությունում, որը կոչվում էր «Պտտվող երկնային մարմինների տեսություն»: Կիրառելով էյնշտեյնի ընդհանուր հարաբերականության տեսությունը՝ ես իմ գործընկեր է. Չուբարյանի հետ առաջինը լուծեցինք այդ աստղերի պտույտի խնդիրը: Մեզ հետ զուգահեռ 1968-70թթ. ամերիկացիները ևս լուծել էին այս խնդիրը, բայց մենք տարբեր մեթոդներով էինք առաջնորդվել: 1968թ. անգլիացի Հյուիշն առաջին անգամ ռադիոդիտակի միջոցով հայտնաբերեց պուլսար նետրոնային աստղ: Այսօր արդեն հայտնաբերված է 1700 պուլսար: Պուլսարները պտտվող նետրոնային աստղեր են, որոնք օժտված են հզոր մագնիսական դաշտերով:

1972-ից սկսեցի ուսումնասիրել, թե ինչպես են հզոր մագնիսական դաշտեր առաջանում նետրոնային աստղերում: 1972-86թթ. զբաղվեցի այդ աստղերի մագնիսական դաշտերի գեներացիայի խնդրով և հայտնաբերեցի դրանց առաջացման պատճառը: Բանն այն է, որ այդ աստղերի 99 տոկոսը բաղկացած է նետրոններից, 1 տոկոսը՝ պրոտոններից, դրանք նետրոնի նման ծանր միջուկային մասնիկներ են, և էլեկտրոններից: Նետրոններն ու պրոտոնները լիցքավորված են: Ինչպես ցույց տվեցի, նրանք շարժվում են միմյանց նկատմամբ: Դա էլեկտրական հոսանք է առաջացնում, իսկ հոսանքը գեներացնում է մագնիսական դաշտ: Բացի այդ, նետրոնները գտնվում են գերհոսելի և գերհաղորդիչ վիճակներում:

Պարզվեց, որ նետրոնային աստղերում նետրոններն ու պրոտոնները գերհոսելի և գերհաղորդիչ վիճակում են, հետևաբար, 1972-82թթ. կիրառեցի գերհոսելիության և գերհաղորդականության տեսությունները՝ նետրոնային աստղերում մագնիսական դաշտի գեներացիայի մեխանիզմի հայտնաբերման համար: Ցույց տվեցի, որ երբ աստղը պտտվում է, առաջանում են նետրոնային մրրիկներ՝ տորնադոներ: Նետրոնները պտտվում են՝ պտտեցնելով նաև պրոտոններին, բայց էլեկտրոնները չեն պտտվում: Դրա հետևանքով հոսանք է առաջանում, և տորնադոյի կենտրոնում մագնիսական դաշտ է գոյանում:

**- Արդյոք այսօր տեսնու՞մ եք Ձեր գործի արժանավոր շարունակողներին:**

- Այո՛, իհարկե: Իմ աշակերտներից մեկը՝ Կարեն Շահաբազյանը դոկտորական ատենախոսություն պաշտպանեց մագնիսական դաշտերի գեներացիայի թեմայով: Մենք միասին ենք ուսումնասիրել նետրոնային աստղի մագնիսական դաշտի առաջացման պատճառները: Իմ մյուս՝ ամենաերիտասարդ աշակերտներից մեկի՝ Մեխակ Հայրապետյանի հետ սկսեցինք ուսումնասիրել նետրոնային աստղի մեկ այլ երևույթ: Ընդհանրապես, պուլսարների պտույտը դանդաղում է որոշակի տեմպով: Երկու երեք տարին մեկ հանկարծ պուլսարի անկյունային արագությունը մեծանում է և ապա ռելաքսացվում դանդաղման նույն տեմպով: Մեխակի հետ սկսեցինք ուսումնասիրել այս երևույթի պատճառը և կարողացանք տալ այս երևույ-



թի բացատրության տեսությունը: Իմ տղան նույպես զբաղվում է աստղաֆիզիկայով: 1990-ականների այս երևույթը սկսել եմ ուսումնասիրել որդուս՝ Արմեն Սեդրակյանի հետ: Բայց հետո նա գնաց Գերմանիա, ու ես այս աշխատանքը շարունակեցի Մեխակի հետ: Մեխակը թեկնածուական ատենախոսություն պաշտպանեց: Այժմ այդ գործը ավարտված ենք համարում: Ի դեպ, ամերիկացիները նույնպես ունեին այս երևույթի բացատրությունը, սակայն մենք ապացուցեցինք, որ նրանց տեսությունը սխալ է: Հիմա ցանկանում ենք զբաղվել պուլսարների ռադիոճառագայթման երևույթի հետազոտմամբ: Ենթադրվում է, որ նետրոնային աստղի մակերևույթի վրա կա ռադիոաղբյուր, որն անընդհատ ճառագայթում է ռադիոալիքներ: Հիմա մենք՝ կփորձենք բացատրել ռադիոճառագայթումը, որովհետև այդ երևույթը դեռ չի բացատրվել, չնայած շատերն են զբաղվել այդ խնդրով:

Զբաղվում եմ նաև նանո ստրուկտուրաների տեսությամբ, որը պինդ մարմնի ֆիզիկայի ժամանակակից բաժիններից մեկն է: Այդ գծով իմ աշակերտ՝ Աշոտ Խաչատրյանը, երկու տարի առաջ՝ 35 տարեկան հասակում պաշտպանեց դոկտորական ատենախոսություն: Նա այժմ ՀՊՃՀ-ի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչն է:

**- Ձեր աշխատությունները միջազգային գիտնականների կողմից որևէ արձագանքի արժանացե՞լ են:**

- Մեզ մոտ այդպես չի լինում: Եթե դու լավ ամսագրում տպագրում ես քո աշխատության արդյունքները, ապա այն անպայման կարդում են: Ես մագնիսական դաշտի գեներացիայի ուսումնասիրության արդյունքները տպագրել եմ սովետական հայտնի «Էքսպերիմենտալ և տեսական ֆիզիկա» ամսագրում: Կարող եմ ասել, որ ամերիկացիները «թխեցին» իմ այդ հոդվածը, իհարկե, որոշ բացթողումներով: Հետո նրանք գրել էին, որ երբ ավարտել են իրենց աշխատանքը, տեսել են, որ այդ մասին արդեն հրատարակված հոդված կա: Նշենք, որ նրանք իրենց հոդվածը հրատարակել էին 1984-ին, այնինչ մեր հոդվածը մենք տպագրել էինք 1981-ին: Իհարկե, հետո ես նրանց հետ հանդիպեցի Ամերիկայում և զրուցեցինք այդ աշխատանքի մասին, մի խոսքով… Գիտնականի համար այդքան կարևոր չէ այդ ամենը, կարևորն աշխատելն է ու արդյունքի հասնելը:

**- Պարոն Սեդրակյան, մեր երկրի զարգացման համար ի՞նչ լուծում կառաջարկեիք:**

- Մեր ազգի ամենակարևոր խնդիրն արտագաղթը կանխելն է: Այն տարածքը, որ մենք ազատագրել ենք, որպեսզի արդյունավետ գործի, և մեր երկիրը իսկական երկիր դառնա, ապա առնվազն 8 մլն մարդ է պետք, որ այդտեղ ապրի: Հիմա ապրում է 4-5 անգամ պակաս: Նշված տարածքում մարդկանց թիվն այնքան քիչ է, որ զարգացումը հնարավոր չէ: Հետևաբար, կարևորն այն է, որ մենք այստեղ հավաքվենք, քանի որ հայտնի է, թե ինչ-որ տարածքում որոշակի քանակով մարդ է պետք, որպեսզի մրցակցություն լինի, որպեսզի երկիրը զարգացում ապրի: Եթե քանակ չեղավ, մրցակցություն չի լինի, հետևաբար, որակ էլ չի լինի: Դրա համար կարծում եմ, որ մեր ազգի համար առաջին խնդիրը, որի մասին շատ քիչ կամ գրեթե չեն խոսում, հայերին իրենց հայրենիք ետ բերելն է: Մենք էլ ուրիշ խնդիր չունենք: Եթե այդ խնդիրը լուծենք, մեր ազգը կհարատևի: Այդ ո՞ր ազգը կդիմանա, որ անընդհատ կադրեր պատրաստի ու նրանք անընդհատ երկրից դուրս գնան: Այդ ներուժը պետք է տեղում մնա, որ վերարտադրվի: Կարծում եմ, որ սխալ է մարդկանց այսքան հեշտ բաց թողնելը, որ երկրից հեռանան:

**- Պարոն Սեդրակյան, որպես գիտնական, որևէ աջակցություն ստանու՞մ եք մեր պետությունից:**

- Պետությունը թեմատիկ ֆինանսավորում է կատարում, ու ինձ պետության կողմից հասնում է ամսական ընդամենը 15.000 դրամ: Ես մի քանի արտասահմանյան գրանտ եմ շահել, որոնցով իրականացնում եմ իմ գիտական խմբի աշխատանքները: Անձամբ ես նաև հայկական պետական գրանտ եմ շահել, որից ամսական ստանում եմ 60.000 դրամ: Դա, իրոք, օգնություն է մեր կառավարության կողմից, բայց այն երեք տարով է միայն: Այսինքն՝ շարունակական լուրջ ֆինանսավորում պետության կողմից չկա: Իսկ Հայաստանն առանց գիտության և առանց որակի ոչ մի բան է...: Այդպիսի շատ երկրներ կան, բայց մենք նրանց նման չպետք է լինենք: Ես ուզում եմ, որ գիտական ներուժը վերականգնվի և մարդիկ մնան Հայաստանում, մտավորականությունը վերադառնա հայրենիք:

**ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ**

## ՋՈՒԹԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Վենետիկի «Հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրումի կենտրոն»-ի երաժշտական բաժնի նախաձեռնությամբ օրերս Հայաստանում էր ջութակներ պատրաստող իտալացի վարպետ Ֆրանչեսկո Տրավիսին՝ լարային գործիքների պահպանման և վերականգնման արհեստանոց հիմնելու հնարավորությունները քննարկելու նպատակով:

Վարպետի այցելությունը հնարավոր է եղել իրականացնել շնորհիվ «Իտալիայի բարեկամները» ընկերության, որի առաքելությունն է ամրապնդել Իտալիայի և Հայաստանի մշակութային կապերը: Ֆ. Տրավիսին աշխարհահռչակ Կրեմոնա դպրոցի շրջանավարտներից է և այսօր Վենետիկում միակ ջութակ պատրաստողը: Իր երկարամյա ծառայության համար նա քանիցս մեծ գնահատանքի է արժանացել եվրոպական երաժշտական կենտրոնների կողմից:

«Բազմաթիվ արժեքավոր և հինավուրց ջութակներ են օգտագործվում Հայաստանում: Ցավոք, դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանման գործը լավ հիմքերի վրա չեն: Ես ուրախ կլինեմ վերադառնալ այդ հրաշալի երկիրը և հաստատել մշտական գործող մի արհեստանոց»,- ասել է վարպետը և հավաստիացրել, որ ծրագիրը հետագայում նյութական օժանդակություն կստանա միջազգային արվեստի կազմակերպություններից:

Ծրագրի իրականացմանը աջակցել էին «Իտալիայի բարեկամներ» ընկերությունը, Հայաստանում Իտալիայի դեսպանը, Մաեստրո Արամ Ղևոնդյան, Սալվի Հարությունյան-Ղազարյանը, Հրաչ Գասպարը և Սոնա Հարությունյանը

**(«ԱԶԳ», 20, 07, 2006թ.):**

# ԲԱՐՈՅԱՊԵՏ ԿԻՐԹ ԼԻՆԵԼ Է ՊԵՏՔ

## Մեր հյուրը քանդակագործ Ռուբեն Նալբանդյանն է

**- Պարոն Նալբանդյան, որտեղի՞ց են Ձեր արմատները:**

- Ծնողներս Շիրակի դաշտավայրի Ախուրյանի Այգաբաց գյուղից 1955-ին տեղափոխվել են Էջմիածնի Արշալույս գյուղ, որտեղ էլ 1959-ին ծնվել եմ ես: Պապս, որ բնիկ գյուղացի էր, ֆայտոնի անիվներ էր սարքում և գինու տակառների հմուտ վարպետ էր: Սերն արվեստի նկատմամբ մեզ գեներով է փոխանցվում. երկու եղբայրներս և որդիս նույնպես քանդակագործ են: Դեռևս պատանի հասակից մեծ հակում ունեի արվեստի՝ նկարելու, քանդակելու, փորագրելու նկատմամբ:

**- Ի՞նչ ուղիով է ընթացել Ձեր ուսումնառությունն ու ստեղծագործական կյանքը:**

- Դպրոցն ավարտել եմ բարձր առաջադիմությամբ: Այդ տարիներին գյուղերում գեղագիտական խմբակներ չկային. դրանք կենտրոնացված էին շրջաններում ու քաղաքներում: Ընտանիքիս նյութական պայմանները չէին ներում, որ ես գյուղից դուրս հաճախեի այդ խմբակներին: Դպրոցն ավարտելով և ընդառաջ գնալով ծնողներիս ցանկությանը՝ ընդունվեցի Պոլիտեխնիկական ինստիտուտի ավտո-ճանապարհային բաժին: Ընդունելության քննություններին պատրաստվելու ընթացքում անգամ թաքուն քանդակում էի: Դա նկատելով՝ ծնողներս անընդհատ առաջիկա քննություններս էին հիշեցնում: Քանդակելու սերն ու ցանկությունը ինձանում անսահման էր:

Մեկ ամիս էր, ինչ ուսանող էի, երբ եկավ բանակ մեկնելուս ժամանակը: Թողեցի ուսումս և մեկնեցի բանակ՝ Հունգարիա: Ձինծառայությունից հետո վերադարձա տուն և շատ չանցած մեկնեցի Լենինգրադ՝ ուսումս շարունակելու: Ընդունվեցի Մուխինի անվան գեղարվեստի ինստիտուտի կիրառական արվեստի ապակու բաժին: Հետևելով ծնողներիս կանչին՝ երկու տարի անց վերադարձա Հայաստան. մայրս կարոտից հաճախ էր հիվանդանում...: Հիմա ապրում եմ մորս հետ՝ ականջալուր նրա խորհուրդներին: Երբ վերադարձա, հայրս արդեն գտել էր վարպետ-քանդակագործների այն խումբը, որոնց պիտի աշակերտեի: Աշակերտեցի երկու-երեք տարի: Արդեն տարերքիս մեջ էի. գիտակցում էի, որ կարիքներս ինքնուրույն հոգալու ժամանակն է: Մտա իմ սիրած աշխատանքի մեջ, սիրեցի քարը: Հետո ընդգրկվեցի Մարզահամերգային համալիրի ճակատային հարթաքանդակի հեղինակների չորս հոգանոց խմբի մեջ, մասնակցել եմ Արմեն Տիգրանյանի, Օրբելի եղբայրների արձաններին կերտման աշխատանքներին:

**- Ցուցահանդեսները Ձեր գործունեության մեջ, և օտար արվեստագետների գնահատանքն ու արձագանքը:**

- Երևանում և Էջմիածնում մասնակցել եմ խմբակային ցուցահանդեսների, անհատական՝ չեմ ունեցել: Առաջին խաչքարը ստեղծել եմ 1987-ին: 1988-ի երկրաշարժին մեզ օգնության ձեռք մեկնած ժողովուրդներին շնորհակալություն հայտնելու միտք

հղացա. մի շարք քաղաքների խաչքար նվիրեցի: Արցախյան հերոսամարտում ընկած մեր մարտիկների անուններով անվանակոչված դպրոցների բակերում կիսանդրիներ եմ կերտել՝ հանուն նրանց վառ հիշատակի:

Եվրոպայում մի քանի միջազգային գիտական խորհրդակցությունների եմ մասնակցել: Բելգրադում (15 երկրների մասնակցությամբ) քանդակագործների մրցույթին ընտրեցի մարմարից խաչքարը, այն նոր ուղղություն էր աբստրակտով հեղեղված Եվրոպայի համար: Իմ խաչի զորությունը մեծ էր, այն օգնեց, որ եվրոպացին ճանաչի հային՝ այն ազգին, որը լինելով փոքրաթիվ, հոգևոր մեծ արժեք ունի: Ես հաղթեցի՝ արժանանալով բարձր գնահատանքի ու ջերմ ընդունելության: Ինձ հրավիրեցին Բելգրադի ակադեմիայում զարդանախշերի ու խաչքարագործության բաժին բացելու: Հայկական խաչքարի շնորհիվ օտարազգին պատկերացում է կազմում հայ ժողովրդի արվեստի ու նկարագրի, դարավոր անցյալի մասին: Ցանկանում եմ, որ Հայաստանից դուրս հանվող խաչքարը, անպայման, մասնագետների խորհրդի հավանությանն արժանանա: Հայ մշակույթի իրական դիմագիծն անխախտ պահելու համար դա շատ կարևոր է:

Շատերի մոտ կարծիք կա, թե խաչքար դնում են միայն գերեզմանոցում: Հիշեցնեմ, որ հնում մեր պապերը եկեղեցի, կամուրջ, գյուղ, քաղաք կառուցելիս, մինչև անգամ զույգ ամուսնացնելիս խաչքար էին դնում:

**- Եռաբլուրում՝ Արցախյան ազատամարտում ընկած մարտիկների Պանթեոնին կից, տեղադրվեց ՀԱՀԳԲ-ի նահատակների հիշատակին նվիրված հուշակոթող, որի ճարտարապետը Սաշուր Քալաշյանն է, քանդակագործը՝ Դուք: Ինչպե՞ս ստեղծվեց այն:**

- Արտասահմանյան այցելություններիցս մեկի ժամանակ՝ Հարավսլավիայում բախտ վիճակվեց ծանոթանալ ՀԱՀԳԲ-ի տղաների հետ: Շփվելով նրանց հետ՝ շատ բան իմացա ու հասկացա մի կազմակերպության մասին, որն արտասահմանյան մի շարք երկրներում ու քաղաքներում միտինգներ, բողոքի ակցիաներ էր կազմակերպում և վճռորոշ ու ազդեցիկ քայլեր անում՝ Հայկական հարցի արդարացի լուծման պահանջով: ՀԱՀԳԲ-ն ընդհատակյա մեծ աշխատանքներ էր տարել այդ ուղղությամբ և պայքարի ճանապարհին տվել էր նահատակներ: Այդ տղաներն ուզում էին Հայաստանում հուշարձան տեղադրել՝ ի հիշատակ իրենց նահատակ-ընկերների: Իսկ ինչո՞ւ ո՛չ: Այլևս վճռված էր՝ ՀԱՀԳԲ-ի 39 նահատակ-մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձան պետք է տեղադրեինք Մայր հողում՝ Եռաբլուրի բարձունքում: Ճարտարապետական մի քանի գծագրերից ընտրվեց Սաշուր Քալաշյանի աշխատանքը, որի քանդակային աշխատանքը ես արեցի: Մինչ աշխատանքս սկսելը հնարավորինս ուսումնասիրեցի ՀԱՀԳԲ-ի գործունեությունը, կարդացի Գուրգեն Յանիկյանի «Նպատակ և ճշմարտություն» գիրքը, ծանոթացա Հայաստանում հաստատված, ազատագրական պայքարի բո-

վով անցած ՀԱՀԳԲ-ի մարտիկների հետ: Այս հուշարձանն ինձ էլ ավելի հայրենասեր ու հայրենանվեր դարձրեց:

Անցյալ տարի Փարիզում տեղադրվեց Զորավար Անդրանիկի հուշարձանը, որի պատվիրատուն Արաբկիրի թաղապետարանն էր, ես՝ քանդակագործը: Ոգևորությունս, անշուշտ, շատ մեծ էր: Բարի ու արդյունավետ ծրագիր ստացվեց ֆրանսիայի մեր հայրենակիցների համար, որի համար շատ ուրախ եմ:

**- Ի՞նչն է գերիշխում Ձեր քանդակներում, որն է Ձեր ամենասիրելի աշխատանքը:**

- Քրիստոնեության 1700-ամյակին շատ արվեստագետներ էին սպասում՝ յուրաքանչյուրը յուրովի էր նախապատրաստվում այդ տոնակատարությանը: Ինչպես ամեն մի քրիստոնյա արվեստագետ, ես էլ էի ուզում մի նոր բան ավելացնել. որոշեցի ստեղծել խաչքարերի մի շարք՝ հայոց այբուբենի տառերի տեսքով: Քանի որ Մեսրոպ Մաշտոցը հայոց տառերը ստեղծել է, օգտվելով հոգևոր թեմաներից (Ա-ն՝ Արարիչ, Բ-ն՝ Բարձրյալ, Գ-ն՝ Գրիգոր Լուսավորիչ և այլն), հետագա անելիքս արդեն պատկերացնում էի: Խաչքարափունջն էլ դարձավ իմ ամենասիրելի աշխատանքը: Մեր լեզուն ու հավատքը հարատև պահեցին մեր ժողովրդի ոգին: Չնայած որ մեր հավատքը պատմության շատ խաչմերուկներում հայ ժողովրդին բնաջնջման վտանգի եզրին է կանգնեցրել, բայց այնքան զորավոր է եղել հոգևոր ուժը, որ հայոց ազգը դարերով անաղարտ պահեց իր ոգին:

**- Հայաստանի անկախությունը արվեստագետ-քանդակագործի ներաշխարհում ի՞նչ փոխեց:**

- Ժողովրդի մեջ արթնացավ կրոնի զգացումը, հավատքը՝ դեպի խաչքար, եկեղեցաշինություն, որը 70 տարի լճացել էր և պիտի մի օր պոռթկար: Մեր քանդակագործներից շատերն այժմ զբաղվում են խաչքար կերտելու ազգանվեր գործով՝ անկախ առիթից ու իրադրությունից: Գտնում եմ, որ ամեն մի քանդակագործ պիտի ստեղծի իր գերդաստանի խորհրդանիշ խաչքարը: Այն, որ Արցախը, Զավախքը, Նախիջևանը հայկական հողեր են, ամրագրված է մեծ տերությունների կողմից վավերացված փաստաթղթերում նաև: Այսօր, երբ օտարները փորձում են կասկածի տակ դնել այդ, մեր հազարամյա խաչքարերն ու եկեղեցիները անհերքելի վկայությունն են հայկականության: Չեմ կարող չհիշել ազերիների կողմից Ջուղայի խաչքարերի ջարդը: Ջուղայում 13.000 խաչքար է եղել, մնացել էր 2-3 հազարը, երբ ազերիները ջարդում էին, ես ասում էի՝ դուք ջարդեք, ես էլի՛ կսարքեմ...:

Հայն էլ, ինչպես աշխարհի ամեն մի մարդ, ձգտում է ազատության, անկախության: Ազատությունը գալիս է տանից, շարունակվում՝ հայրենիքով, տարածվում՝ աշխարհով մեկ: Անկախությունը հայ արվեստագետի մտահորիզոնը բացեց: Այսօր արվեստի պետական կառույցների վերակարգավորման անհրաժեշտություն կա:



Արվեստագետն իր աշխատանքում պետք է լինի ազատ, պատվիրատուն միայն գաղափարը պիտի տա՝ չմիջամտելով հոգևորին: Աշխատանքը պիտի լինի անյպիսին, որ նայողը մտորի, ապրի, պրպտի...: Ուզում եմ, որ մեր մշակույթը ունենա պետական, ազգային մոտեցում, և վերահսկողությունը լինի ի շահ արվեստագետի:

Դժբախտաբար, անկախությունն ու ազատությունը Հայաստանում իշխանավորների կողմից չարաշահվում են: Այսօր նրանց օղակները գործում են ուժգին և բացասական ազդեցություն են թողնում ոչ միայն բնակչության հասարակ խավի, այլև՝ արվեստագետների վրա: Հիմա ոչ թե գեղարվեստի խորհուրդն է որոշում, որ մի քանդակ պետք է տեղադրվի, այլ՝ վերնախավը: Այս կարգի խնդիրները մեզանում առկա են և դրանց մասին պետք է մտածել:

**- Ինչպե՞ս են ստեղծվում Ձեր աշխատանքները:**

- Երբ նայում եմ քարին, ուզում եմ վախեցնել. եթե կանգնես որևէ բանի առաջ և ինքդ վախենաս, ապա ոչինչ չես կարող ստեղծել: Քարն ինքնին թելադրում է անելիքս: Տառերի կերտման ժամանակ, երբ նայում էի քարին, մտովի պատկերացնում էի, թե որ տառն է և ինչպիսին պիտի լինի: Տառերն էսքիզներ չունեին, դրանք մտքումս էին...: Հնուց եկած բան է, քարից ավելորդ մասն ես հեռացնում, մնացածը մնում է քեզ: Առհասարակ, ոչ մի քանդակ առանց կավե նախատիպի չի քանդակվում:

**- Ի՞նչ մտահոգություն ունեք այսօր:**

- ՀՀ-ում արվեստի մի քանի բարձրագույն հաստատություններ կան, որոնք ամեն տարի նկարիչ, քանդակագործ, գոբելենագործ մասնագետներ են տալիս: Այսօր (ինչպես նախկինում) Հայաստանի գյուղերում չկան արվեստի խմբակներ, անգամ դպրոցական դասաժամեր: Մեր գյուղի դպրոցն ունի 650 աշակերտ, արդյոք նրանց մեջ շնորհաշատ երեխաներ չկա՞ն, որ սիրում են նկարչությունն ու քանդակագործությունը և ցանկանում են զբաղվել արվեստով: Իհարկե կան: Իսկ մեր կրթության պետական ծրագիրը դրա հնարավորությունը չի տալիս: Ուզում եմ, որ հայ երեխայի մեջ դաստիարակվի գեղագիտությունը, նա զգա իր շրջապատը, բնության գույնն ու հրաշքը, ձայնն ու խորհուրդը: Ուզում եմ, որ երեխան բնություն ու հեքիաթ նկարի, որ իր հոգու բարության կտավը ինքը հեղինակի: Դիմել եմ ՀՀ կրթության նախարարի տեղակալին՝ գոնե մեր գյուղի դպրոցում անվարձահատույց դասեր տալու առաջարկով: Մերժել են, ասելով, թե ինչպես 21 ժամ հատկացնեն, եթե այդ ծրագիրը ընդհանրապես հանված է...: Այստեղ արդեն անհասկանալի է, էլ ինչո՞ւ է Մանկավարժական համալսարանը այդքան արվեստագետ-մանկավարժներ տալիս: Սա է իմ ամենամեծ մտահոգությունը: Պետք է մատաղ սերունդն արվեստի հետ շփվի, որ հոգևորից զատ, նաև բարոյապես կիրթ լինի:

**ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱՂՅԱՆ**

*Շապիկին հայոց այբուբենի «Ս» տառն է, քանդակագործ և հեղինակ՝ Ռուբեն Նալբանդյան:*

# ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ. ԱՊՐԵՑ..., ՈՐ ԱՊՐԻ..., ՈՐ ԱՊՐԵՑՆԻ...

# ՀՈԳՈՒ ԵՎ ԳՈՒՅՆԵՐԻ ՍԻՄՖՈՆԻԱ

Երևակայությունը նկարում է, բանականությունը՝ համեմատում, ճաշակը՝ ընտրում, տաղանդը՝ կատարում: Իսկ երևակայությունը հոգու աչքն է: Երևակայությունն է, որ զգայուն մարդուն դարձնում է արվեստագետ: Նրանցից է նաև երիտասարդ նկարչուհի Մինա Անանյանը: Նա գերազանցությամբ ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, այնուհետև՝ Գեղարվեստի ակադեմիան: Նկարիչների միության անդամ է, անհատական 3 ցուցահանդեսների հեղինակ, տասնյակ կոլեկտիվ ցուցահանդեսների մասնակից: Ունի 100-ից ավելի աշխատանքներ, որոնց մի մասը՝ հաստոցային գրաֆիկայով: Մանկական և գեղարվեստական շատ գրքեր ձևավորվում, շնչավորվում են Մինայի նկարներով...:

Մինայի նկարչական աշխարհը զարմանալիորեն ուրախ է ու լուսավոր, տաք ու պայծառ, ջերմ ու անկեղծ...: Բոլոր կտավները շնչում են բարությամբ, վարակիչ լավատեսությամբ և, ամենակարևորը, ինքնատիպ են ու յուրօրինակ: Խաղաղություն և հանգստություն է հորդում նրա բոլոր գեղանկարներից. ասես հոսող մեղեդի և կյանքի գունավոր բանաստեղծություն լինեն դրանք: Զարմանալիորեն կենդանի, գունեղ ու անկեղծ իրար են միահյուսվում իրականությունն ու երևակայությունը: Նրա արվեստում հաջողությամբ համատեղվում են գեղանկարչությունն ու դասական ավանգարդիստական աշխարհընկալումը:

**«Իմ աշխատանքներից մեկը, որ վերնագրել եմ «Սիրտը», շատ եմ սիրում: Սիրում եմ նկարել միայնության մեջ: Նկարելն ինձ օգնում է դիմանալ կյանքի ծանր պահերին. վերացնում է տագնապի և միայնության պարիսպը, որի ներսում հաճախ փակված եմ զգում ինձ: Օգնում է ծերբազատվել իմ մեջ կուտակված լիցքերից, տպավորություններից, որոնք առաջանում են ներքին և արտաքին աշխարհների բախումներից: Նկարն իմ լավագույն զրուցակիցն է. երբեք ինձ չի նեղացնում: Նկարելն ինձ համար նոր աշխարհների հայտնագործում է, կարող է՝ արդեն հայտնագործված, բայց միշտ՝ նորից հայտնագործվող»:**

Մինան ունի գեղեցիկ բնանկարների շարք՝ նվիրված Իջևանի բնաշխարհին, նաև՝ հրաշալի դիմանկարներ, որոնց մեջ առանձնանում են «Արշիլ Գորկին» և «Գրիգոր Նարեկացին»: Մարդն ապրում է սրտով: «Արշիլ Գորկի» նկարում, կիսված սիրտը՝ մի մասը՝ ներքև, մի մասը Արշիլ Գորկու հետ է, որովհետև նա, լինելով դրսում, նաև մերն է, և շուտով մենք այստեղ կունենանք մեծ նկարչի սրահը՝ իր ստեղծագործություններով: Մինան շատ հետաքրքիր ձևով է նրան պատկերել: Նա մեծ սեր է տածում դեպի այդ արվեստագետը:

Խիստ յուրօրինակ է նաև Նարեկացու դիմանկարը, որն ասես մագաղաթի մեծ թերթի վրա պատկերված լինի»:

«Դիմանկար անելիս՝ միայն դեմքի արտահայտությունը քիչ է,- իր աշխատանքների մասին պարզաբանումներ է անում Մինան: - Ուզում եմ կտավներումս խորհրդանիշերի խորհուրդը դնել. հայրիկի դեպքում ընտրել եմ ծառը՝ որպես ազգային արմատ, Արշիլ Գորկու դեպքում՝ սիրտը, Հարություն Շմավոնյանի դեպքում՝ գիրը: Միայն իմ դիմանկարի համար է, որ խորհրդանիշ չեմ ուզում պարտադրել»:

Իրարից անասելի տարբեր, բայց և իրար նման են Մինայի բոլոր կտավները. «Կուռքեր», «Երկվություն», «Փշրված պատրանքներ», «Պատուհանից ներս», «Հանգիստ կամ գիշեր», «Սիրտը՝ ներկապնակի վրա», «Նախախնամություն», «Հավատ»:

**«Միշտ անկեղծ եմ կտավի առաջ,- խոստովանում է Մինան: - Նկարում փորձում եմ ցույց տալ մարդու թուլությունը, հոգնությունը, նաև՝ բավարարվածությունը, հպարտությունը: Կյանքում որոշ գույներ չեմ սիրում, բայց նկարչության մեջ չսիրած գույներ չունեմ:**

**Ամենավերջին աշխատանքիս հետ կապվածությունն ավելի ուժեղ է լինում: Նկարելիս չեմ կարողանում մտածել նրանից բաժանվելու, վաճառելու հավանականության մասին, բայց միևնույն ժամանակ ուզում եմ, որ այն ճանաչվի և իր տեղը գտնի նաև ուրիշների կյանքում»:**

Տոհմիկ, ավանդապահ ընտանիքի հավաքական խտացումն է Մինան: Սիրում է բոլոր Մեծերին: Շատ է սիրում կարդալ, նախընտրում է պոեզիա, փիլիսոփայություն, փոփոխություն, դիզայն, համակարգչային տեխնիկա: Չի կարողանում անտարբեր անցնել հնությունների և հատկապես քարի ու փայտի որևէ հետաքրքիր կտորի կողքով: Սիրում է հագնել իր կարած հագուստները...

**«Իմ հարստությունը իմ ծնողներն են,- ասում է նկարչուհին: - Նրանք ամեն ինչ արել են, որ ես ինձ վստահ զգամ, ազատ լինեմ: Նրանց շնորհիվ է, որ ես զբաղվում եմ իմ սիրած գործով: Մինչև հիմա էլ նրանք իմ անփոխարինելի օգնականներն ու ամենաաչառու գնահատողներն են»:**



Դժվար է բաժանվել Մինայի գողտրիկ, տաքուկ անկյունից. մի լուսե աշխարհ, ուր ծայրեծայր ծփում է հույսը, սերը, հավատը: Եվ թող Աստված զորավիգ ու պահապան լինի նրան, իսկ հոգում և ճանապարհին՝ մի՛շտ եղիցի լույս ...

**ՆՎԱՐԴ ԲՈՐՅԱՆ**

# ԱՇՈՒՂ ՋԻՎԱՆԻ-160

Ջիվանին (Սերովբե Լևոնյան) ամենից լավ ինքն էր գնահատել իր դերն ու նշանակությունը, նա իրեն և իր նմաններին «անթև թռչնակ» է համարել, որի սեպուհ պարտականությունն է եղել՝ լինել հարազատ ժողովրդի մեջ, ճշմարիտ խոսքով և հուզաթաթավ երգով սթափեցնել նրան հուսահատություն բերող թմրությունից, ոգևորել, թույլ չտալ, որ մարի լավ ապագայի հույսը:

19-րդ դարասկզբի երկրորդ տասնամյակի վերջին տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով հայկական շատ նահանգներ իրար ետևից սկսեցին դատարկվել: Ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար հարյուր հազարավոր սահմանն անցնողների մեջ էր Բենկոյենց Գասպարի բազմանդամ ընտանիքը, որը մահվան սարսափի տակ թողել էր իր պապական տունն ու տեղը՝ հայրենի Բասենը, և հանգրվան էր գտել պատմական Հայաստանի Գուգարաց աշխարհի գավառներից մեկի՝ Ախալքալաքի շրջանի Կարծախ գյուղում: Այդ ընտանիքում 1846թ. ծնվում է Բենկոյենց Ստեփանի չորրորդ զավակը՝ փոքրիկ Սերովբեն, ով հայ իրականության մեջ հայտնի դարձավ Ջիվանի անունով:

Վաղ մանկությունից Սերովբեն տարվեց երգով ու նվագով: Այդ հակումը նրա մեջ էլ ավելի բորբոքվեց աշուղ Սիայու և ձմեռները գյուղ եկող ուրիշ աշուղների ազդեցությամբ:

Սիային, նկատելով Սերովբեի արտակարգ ուշիմությունը, երգեր ու եղանակներ հորինելու ձիրքը, ցանկություն է հայտնում նրան իր մոտ աշակետ վերցնելու: Հենց աշակերտելու ժամանակ Սերովբեն երբեմն գերազանցում էր ուսուցչին: Նա անվանի վարպետների մոտ երգեր հորինողի, ուշիմ և սրամիտ աշուղի համբավ էր ձեռք բերել: Ջիվանու համար Կարծախի գյուղական միջավայրն արդեն նեղ էր: Նրա միտքը ձգտում էր դեպի հեռավոր հորիզոններ, սակայն տեղի ունեցավ նրա կյանքի համար ճակատագրական նշանակություն ունեցող մի անսպասելի դեպք: Դա 1864-ին հորեղբոր հետ Թիֆլիս և այնտեղից էլ՝ Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) կատարած առաջին ճանապարհորդությունն էր:

Ջիվանին Կարծախ այցելած թափառական աշուղներից շատ բան էր լսել նաև Ալեքսանդրապոլի և նրա անվանի աշուղների մասին: Թիֆլիսից հետո, իհարկե, Ալեքպոլը արդեն չէր կարող զարմացնել, բայց նրան ձգում էր այնտեղ ապրող հռչակավոր աշուղների համբավը:

Անդրկովկասի այդ մտավոր կենտրոնը, որտեղ հավաքվել էր ժամանակի հայ մտավորականությունը, Ջիվանու հոգևոր ուժերի և ստեղծագործական կարողությունների աճման աղբյուր դարձավ:

Երբ արդեն հաստատվել էր Ալեքսանդրապոլում, 1872-ին Ջիվանին ամուսնանում է սրճարանատեր Հովհաննես Տալյանի աղջկա՝ Աշխենի հետ և այդ օրվանից Ալեքսանդրապոլը դառնում է նրա երկրորդ ծննդավայրը: Այդ ամուսնությունից նրանք ունենում են վեց երեխա, որոնց թվում և արվեստի վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանը:

Ջիվանին ջերմորեն տարածում էր ժողովրդական երգն ու խոսքը, նրանց եղանակներն ու մեղեդին: Ժողովրդական ու աշուղական բանավոր երգերն ու եղանակները մոռացության կորստից փրկելու գործում նույնպես մեծ էր նրա ծառայությունը: Ամենակարճ ժամանակում Ջիվանին լայն ճանաչում գտավ և ազգային բանաստեղծ-երգչի հռչակ վաստակեց: Նրան գիտեին ու նրա գործունեությամբ հետաքրքրվում էին Անդրկովկասում և նրա սահմաններից դուրս ապրող հայերը:

1895-ին Ջիվանին ընտանիքով տեղափոխվեց Թիֆլիս՝ վերջնականապես այնտեղ բնակվելու: Շատ բան էր փոխվել քաղաքում, և կերպարանափոխված Թիֆլիսն իր նոր սովորություններով, վարք ու բարքով Ջիվանու տեսածին քիչ էր նման: Էլ չկար վաքսունական թվականների ուրախ ու զվարթ կյանքը:

Ջիվանու քնարի ամենահնչեղ լարը հայրենասիրությունն է: Հայրենիքին ու ժողովրդին նվիրված նրա երգերի մեջ արտահայտված է այդ ժամանակահատվածում բոլորին հուզող մի կարևոր հարց՝ հայ ժողովրդի գոյության, նրա ֆիզիկական ոչնչացումից փրկվելու և ազգային ինքնուրույն կյանքով ապրելու հարցը: Նրա համար ատելի էին ոչ միայն օտար ստրկացնողները, այլև թշնամու լուծը հանդուրժողները, փառասեր մորթապաշտները: Ջիվանին երազում էր և հույս ուներ հայ ժողովրդին ազգային ու սոցիալական ճնշումից ազատ տեսնել, փոխված տեսնել իր հայրենիքի ոսոխների հագցրած «Կրակե շապիկը, նոր, արժանավայել «պատմուճանով»:

1909-ին աշուղ Ջիվանին հեռացավ կյանքից՝ թողնելով հոգևոր մեծ ժառանգություն:

***Ամիս ճնճղուկը բազեի ճանկից***
***Ուզում է որս խլել, խելքի՛ աշեցեք.***
***Կարծես ֆանֆրացել է գլխից ու գանգից,***
***Պատերազմ է մտել, խելքի՛ աշեցեք:***
***Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,***
***Ապարեզը համբակներուն են թողած.***
***Ջիվանն էլ կաղ իշով կարավան մտած***
***Բանաստեղծ է դարձել, խելքի՛ աշեցեք:***

# ՋԱՎԱԽՔՈՒՄ ՆՈՐ ՊՈԵՏՆԵՐ ԿԾՆՎԵՆ

Ջավախքի Գրողների նորաստեղծ միությունը, որը մեկ տարի է ինչ ստեղծվել է, տեղակայված է Ախալքալաք քաղաքում: Եվ միայն վերջերս է լուծվել միության գրասենյակի խնդիրը, տեղ է հատկացվել Ախալքալաքի նախկին շրջանային «Քարոզ» թերթի տպարանի երկրորդ հարկում:

Ախալքալաքի հայ գրողների միության նախագահ Եգոր Մովսիսյանի խոսքերով գրողների միության «Ձայն հարության» պաշտոնաթերթում, որը լույս է տեսել ընդամենը 5 համար և դադարեցվել է միջոցների բացակայության պատճառով, կոնկրետ հասցե չուներ, պարզապես նշված էր՝ քաղաք Ախալքալաք:

Ջավախքի գրողների միությունը նոր տարածքում կսկսի ակտիվ համագործակցել Հայաստանի և Վրաստանի գրողների միությունների հետ:

Դեռևս 1990-ական թվականներին Հայ գրողների միության անդամ Հովհաննես Առաքելյանի գլխավորությամբ Ջավախքում տեղի ունեցավ հիմնադիր ժողով, որի արդյունքում ջավախքցիները միավորվեցին և դարձան Հայ գրողների միության Ախալքալաքի մասնաճյուղ: Հետագայում, ՀՀ Գրողների միությունում տարակարծության մեջ ընկան (քանի որ ջավախքահայ գրողները չէին հարում որևէ կուսակցության) և վիճաբանությունից հեռու մնալու համար երկար ժամանակ լռություն պահպանեցին:

Հայ գրողների վերջին համագումարում երկու կողմերը եկել են ընդհանուր հայտարարի և Ջավախքի գրողների միությունը դիմել է Ջավախքի արդարադատության մարմիններին ու գրանցվել՝ որպես Ջավախքի հայ գրողների միություն անկախ կազմակերպություն:

Այժմ համագործակցում են բոլոր կողմերի հետ՝ անկախ մշակութային և քաղաքական հայացքներից:

Ջավախք. Փարվանա լիճը Փոկա գյուղի ափին

Վերջերս էլ Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվել են համագործակցել: Ջավախքի հայ գրողների միությունը չի զբաղվում միայն ստեղծագործական աշխատանքով, այլ, գտնվելով քաղաքական սև ու մութ ամպերի ազդեցության տակ, բոլոր օղակներով փորձում է լուծել հայապահպանության խնդիրներ, ինչը հատուկ կետով ամրագրված է միության ծրագրում: Նրանց նպատակներից է Ջավախքի յուրաքանչյուր դպրոցում ունենալ Ջավախքի հայ գրողների միության «Պատանի բանասեր» պատի թերթը, որը կլրացնի հայ ժողովրդի պատմության, հայ գրականության և հայեցի դաստիարակության խնդիրները:

Ակնկալվում է Հայաստանի գրողների միության և Սփյուռքահայ գրողների, նաև մշակույթի առանձին կառույցների աջակցությունը Հայաստանում գրասենյակ ունենալու խնդրում: Այդ գրասենյակի միջոցով կապեր կհաստատվեն նաև Հայաստանում սովորող ջավախքցի ուսանողների հետ:

Ջավախքցի ստեղծագործողի անունն ու աշխատանքը այսօր հայտնի ու հասու չէ Հայաստանի և Սփյուռքի ընթերցողին: Հուսանք, որ առաջիկայում՝ Հայաստանի գրողների միության հետ փոխհամագործակցության արդյունքում, Ջավախքի գրողները հայ գրականության ասպարեզ կելնեն:

Ջավախքի հայ գրողների միությունը շուտով կունենա իր գրադարանը, որին կաջակցի Հայաստանի ազգային գրադարանի նախագահ Դավիթ Սարգսյանը:

Վերջերս պարզվեց, որ դպրոցահասակ երեխաներից սկսած մինչև 82 տարեկան ծերերը Ջավախքում ստեղծագործում են: Քաղաքական այս բարդ իրադրության մեջ անգամ մարդիկ չեն դադարում ստեղծագործել: Մեծանուն Վահան Տերյանը ժամանակին ասել է՝ «Մի՞թե վերջին պոետն եմ ես»: Միանշանակ կարող ենք ասել, որ Ջավախքում նոր պոետներ կծնվեն, ապագա Տերյաններ, Մկրչտիչ Սարգսյաններ...

**ԼԻԼԻԹ ՄԱԿԱՐՅԱՆ**

## «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՋԱՎԱԽՔ»

Վերջերս Ջավախքի Ախալքալաք քաղաքի մշակույթի տանը կայացավ «Միասնական Ջավախք» ժողովրդական դաշինք հասարակական կազմակերպության հիմնադիր համագումարը:

Ախալքալաք և Նինոծմինդա քաղաքների քաղաքապետերի, Ջավախքի Երիտասարդական մշակութային միության և տարածաշրջանի քաղաքական գործիչների հիմնադրած դաշինքի գործունեության նպատակներից է՝ ստեղծել հասարակական ուժ, համախմբել և պաշտպանել հայ համայնքի շահերը, նվազեցնել կամ դադարեցնել արտագաղթը: Պայքարել լիարժեք հայեցի կրթվելու և հայերենը վրացերենին հավասար գործածելու համար: Դաշինքը նպատակ ունի նաև պետական կարգավիճակ տալ Հայ առաքելական եկեղեցուն Վրաստանում և Ջավախքում, նպաստելով պատմամշակութային հուշարձանների պահպանմանը: Ինչպես նաև նպաստել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, հոգևոր արժեքների զարգացմանը:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեն Ինտերֆակսին տված հարցազրույցում ասել է. «Վրաստանի իշխանությունները չեն պատկերացնում Ջավախքի ինքնավարության կարգավիճակ: Իսկ «Միասնական Ջավախք» դաշինքի պահանջները անիրագործելի են՝ հատկապես այդ տարածաշրջանում հայոց լեզվին պետական կարգավիճակ տալը»:

Ինչևէ «Միասնական Ջավախք» դաշինքի անդրանիկ համագումարում քննարկվեցին տարածաշրջանի բնակչության հուզող բոլոր խնդիրները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով վրացերենի հետ զուգահեռ հայեցի կրթություն ստանալու իրավունքների հիմնախնդրին: Համագումարին մասնակցեցին Նինոծմինդայի, Ծալկայի, Ախալքալաքի, Ախալցխայի և Ասպինձայի շրջանների հայաբնակ համայնքների պատվիրակությունները: Թեժ քննարկումներից, ելույթներից և առաջարկություններից հետո, համագումարի ավարտին ընտրվեցին «Միասնական Ջավախք» դաշինքի ոչ թե մեկ այլ 13 համանախագահներ տարածաշրջանի հայ համայնքներից՝ Ծալկայից, Նինոծմինայից և Ախալքալաքի շրջաններից:

# ՄԻ ՔԻՉ ՊՂՊԵՂ՝ ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ՄԵՋ

(Չափի զգացողությունը անհրաժեշտ է անգամ մայրական սիրո դրսևորման մեջ)

**ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԵՌՅԱԿ**

Հավանաբար, յուրաքանչյուր կնոջ համար իր երեխայի ծնունդը չափազանց կարևոր, եթե չասենք շրջադարձային, երևույթ է: Կինը հրճվանք է զգում՝ իր կրծքի տակ նոր «մարդուկին» կրելիս, երջանիկ է լինում նրան կերակրելիս: Իսկ այն միտքը, որ նոր էակը նրա սիրո ու հոգատարության կարիքն է զգում, պարզապես վերահիմաստավորում է իր կյանքն ու անգամ ի զորու է արժեքների վերագնահատման հանգեցնել:

Մայրական սիրո վեհացման ու գովերգման մեջ նոր խոսք ասելը ոչ միայն ավելորդ է, այլև՝ անհնար: Եվ այս կապակցությամբ խոսել մայրական սիրո ավելցուկի կամ, առավել ևս, բացասական ներգործության մասին փոքրինչ ռիսկային է:

Իրերի խորքային քննությունն ու վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ այսօր մեր շրջապատում հանդիպող բազում բացասական երևույթներ մայրական սիրո ավելցուկի հետևանք են: Առաջին հերթին դա արտահայտվում է կանացիության չբացահայտվածության մեջ: Սիրո հիմնական հոսքն ուղղվում է երեխային, այլ ոչ՝ ամուսնուն:

Համարվում է, որ երեխայի ծնունդը ամրացնում է ընտանիքը: Անշուշտ, ավելի վառ է արտահայտվում պատասխանատվությունը ընտանիքի նկատմամբ, հատկապես՝ տղամարդկանց մոտ, սակայն սերը, որոշ ընտանիքներում, կարող է անգամ նվազել: Մայրը ավելի շատ ժամանակ ու ուշադրություն է դարձնում երեխային, իսկ ամուսնուն՝ հետին պլան մղում: Նրա բնական հոգնածությունը, բարդ կենցաղային խնդիրները, սիրո նոր առարկայի ի հայտ գալը նկատելիորեն նվազեցնում են ձգտումը դեպի տղամարդը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հենց այդ ժամանակ են հաճախ բարդանում հարաբերություններն ամուսինների (ինչու չէ նաև ընտանիքի մյուս անդամների) միջև, առաջանում են սիրային եռանկյունիներ, իսկ վատթարագույն դեպքերում լինում են նաև ամուսնալուծություններ:

Մայրական սիրո ավելցուկի բացասական կողմը կարող է իրեն զգացնել տալ անգամ հղիության շրջանում, քանի որ հղիությունն ինքը դառնում է մայրական սիրո աճի նշանակալի մի փուլ: Եվ դա բնական է, սակայն եթե մայրը կենտրոնանում է միմիայն սաղմի վրա և հետին պլան է մղում տղամարդուն կամ ընդհանրապես նրա նկատմամբ սեր չի տածում, ապա, մոր արգանդում արդեն երեխան բարդություններով կարող է ձևավորվել: Երբեմն կանայք երեխա են ունենում «իրենց համար»՝ տղամարդու հետ առանց սիրո կապի մեջ մտնելու, միայն երեխա ունենալու նպատակով: Սա արդեն իսկ կանխորոշում է երեխայի ճակատագիրը: Եթե ծննդաբերությունը բարդ է ընթանում, առաջանում են պաթոլոգիկ երևույթներ, ապա դա, ըստ այս երևույթը ուսումնասիրող մասնագետների, նշանակում է, որ ծնողների փոխհարաբերություններում ինչ-ինչ բարդություններ կան: Երեխան հիվանդոտ է, անհանգիստ, ուրեմն պատճառները պետք է որոնել ամուսինների հարաբերություններում:

Հաճախ կարելի է տեսնել, որ երկրորդ երեխան ծնվում է առաջնեկից նվազ ու թույլ: Սրա հիմնական պատճառը առաջնեկի ծննդից հետո տղամարդու և կնոջ միջև սիրո նվազումն է: Այսինքն՝ երկրորդ երեխան ծնվում է սիրո փոքրացած դաշտում: Որպես կանոն, ավելի թույլ երեխայի նկատմամբ մայրն էլ ավելի ուշադիր է լինում, արտահայտում է չափազանցված հոգատարություն և սեր: Միաժամանակ նա նվազեցնում է սիրո ուշադրությունը ամուսնու նկատմամբ:

Երբ մայրը երեխայի նկատմամբ չափազանցված սիրով իրեն և տղամարդուն երկրորդ պլան է մղում, խնդիրներն անխուսափելի են դառնում: Չդիտարկենք ողբերգական դեպքեր, պարզապես նշենք, որ չափազանցված հոգատարությունը՝ ի վնաս միջամուսնական սիրո, կարող է տխուր ավարտ ունենալ նաև երեխայի համար: Այսպես, 5-ամյա մի երեխա, լինելով ծանր հիվանդ, մեկ օր դիմեց մորը՝ ասելով. «Մայրիկ, սիրիր հայրիկին ինձանից շատ, թե չէ ես կմահանամ»: Տարակուսած, անգամ մի փոքր զայրացած մայրը հարցրեց աղջկան. «Ի՞նչ ես խոսում: Քեզ ո՞վ է այդպիսի բան ասել»: Մանուկը շշնջաց. «Ես գիտեմ»:

Խնդիրները սկսվում են, երբ երեխային հատկացվում է ավելի շատ ուշադրություն, քան նա դրա կարիքն ունի: Սակայն, ո՞վ կարող է հստակ «չափել», թե որքա՞ն է անհրաժեշտ: Չէ՞ որ ոչ մի աղջկա չեն ուսուցանում թե ինչպես և որքան է պետք սիրել ամուսնուն կամ զավակին: Չեն ասում, որ դա չափազանց կարևոր է: Հիմնականում, աղջիկը օրինակ է վերցնում իր ծնողներից՝ կրկնօրինակելով նրանց կյանքը:

*Երբ սերը երեխայի նկատմամբ իր ուժգնությամբ գերազանցում է ամուսնու նկատմամբ սիրուն, միշտ չէ, որ փոխհարաբերությունները նկատելիորեն վատթարանում են: Հաճախ ամեն ինչ «նորմալ է»: Չգիտես ինչու համարվում է, որ եթե ընտանիքում ամեն ինչ «նորմալ է», ապա դա լավ ընտանիք է: Իսկ եթե նրանց հաջողվել է նաև պահպանել սերը՝ ուրեմն ամեն ինչ գերազանց է: Մինչդեռ իսկական ընտանիքում տեղի է ունենում անընդհատ հոգևոր աճ, սիրո, երջանկության, փոխհամաձայնության մեծացում: Ոչ ոք և ոչ մի տեղ չի ուսանում, որ ընտանիքը ստեղծվում է ոչ միայն սերունդի շարունակության նպատակով, այլ նաև անձերի բացահայտման համար:*

Անշուշտ, հիվանդ երեխան կրկնակի ուշադրություն ու հոգատարություն է պահանջում: Սակայն երբեք այն չպետք է իրականացվի ի վնաս ամուսնու և սեփական անձի: Անհրաժեշտ է գիտակցել պարզ մի ճշմարտություն. եթե ինչ-որ բանի սղություն կա, ապա պարզապես պետք է ճիշտ բաշխել ռեսուրսները: Այսինքն, եթե սերը մարդու մեջ լիովին է բացահայտված, ապա այն բոլորին կբավարարի և ոչ մի վերաբաշխման կարիք էլ չի լինի: Իսկ եթե առկա է սիրո ոչ լիովին բաշխում, ապա վարվեք հետևյալ կերպ. սկզբից սիրեք ձեզ (հիշեք Աստվածաշնչյան խոսքերը՝ սիրեք դիմացինին, ինչպես ձեր անձը) և ձեր կեսին (այր և կին՝ մեկ մարմին) հետո երեխաներին, հետո ծնողներին և այդպես շարունակ: Այս ճանապարհը լավագույ-

→

# Փ Շ Ա Տ Ե Ն Ի

Մի կտոր փայտի վրա մի կտոր
ալյուր են կպցրել, վրան
կարմիր շապիկ հագցրել,
անունը դրել փշատ:
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Այս զրույցից հին զրույց ոչ ոք չի լսել: Ջրաղացպանը պիտի նաշիհ պատրաստեր, որը Հայոց ամենագովական ալյուրն էր: Դե, ամենքդ էլ գիտեք, որ ամենալավը պատերին նստող մանր ալրափոշին է: Բայց այդ փոշին հենց այնպես չէր կորչում:

Մի անգամ ջրաղացպանի սիրտը միրգ ուզեց: Բայց որտեղից միրգ: Ջրաղացի շրջակայքում ոչ մի մրգատու ծառ չկար: Ինքն էլ հեռու գնալ չէր կարող. աղունը՝ շատ, գործն՝ անընդմեջ: Այդ գիշեր նա երազում տեսավ Անահիտ աստվածուհուն, որն ասաց. «Քո նաշիհի փոշուց ես մի ծառ ստեղծեցի, որի պտղի մեջ և՛ միրգ ու մրգահյութ կա, և՛ հաց ու ալյուր, և՛ մեղր ու գազպեն, և՛ միս ու արգանակ: Հենց դուրս գաս բակ, իսկույն կտեսնես այդ ծառը: Կճանաչես. ջրաղացպանի քուրձ կա հագին»:

Ջրաղացպանը զարմացավ, երբ հաջորդ առավոտյան, բակում՝ հենց ջրի ափին, տեսավ ալրոտ ծառը:

Ասում են՝ այդպես ծնունդ առավ Հայոց աշխարհի առաջին փշատենին: Բայց շուտով աղունավորները նրա կորիզները տարան իրենց հետ և տնկեցին առվակների, գետակների ափերին ու ճամփեզրերին:

Հոտավետ ու մեղրատու, մինչև քառասուն տարի ապրող փշատենին տարածվեց ամեն տեղ, Հայոց աշխարհը դարձավ փշատաբույր: Փշատը բոլորին էլ դուր եկավ: Այն ոչ միայն բերանն է քաղցրացնում, այլև՝ հոգին: Մանկությունդ ինչ-որ տեղ այն չի լինի, եթե դունչդ չալրոտվի փշատով:

Մեր նախնիները փշատի ալյուրը խառնում էին ցորենի նաշիհին, ընտիր հաց թխում ու տալիս Նավասարդյան տոնախմբությունների մրցումներում հաղթողներին: Ինչքա~ն համեղ էր լինում այն խաշիլը, որին փշատի ալյուր էին խառնում: Երկար չեն մնա սուջուխի շարանները, եթե դրանք պատված չլինեն փշատի ալյուրով: Հենց փշատն էլ կարելի է չորացնել ու պահել տարիներով:

## Ինչո՞ւ են ցած կռանում փշատենու ճյուղերը

Բուրավետ են փշատենու նարնջադեղնաթույր ծաղիկները: Արծաթափայլ տերևներով այս ծառը հիշեցնում է հին հայոց ջրաղացի ալրոտ պատերն ու ջրաղացպանի քուրձը:

Մի անգամ Հայոց սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկը իր սիրելի Վահագն աստծուն հանդիպելու համար դուրս եկավ Աստղկաբերդից և ճամփա ընկավ դեպի Արմավիր: Բայց Արարատյան դաշտի ամայի մի վայրով անցնելիս՝ մոլորվեց: Հենց այդ ժամանակ հեռվից, փոշի հանելով, դեպի աստվածուհին է գալիս ավազակների մի ասպախումբ: Թշնամու աչքից թաքնվելու համար Աստղիկը մտնում է կողքի փշատենու տակ, որն անմիջապես կռացնում է իր ճյուղերը և ծածկում նրան:

Ասում են, աստվածուհու ցանկությամբ, այդ պահից փշատենու վեր պարզած ճյուղերը ցած են կռանում՝ ստեղծելով ալրային մառախուղի խորհրդավոր պատրանք: Միաժամանակ, հայոց բուրավետ ծառը ամենից շատ սկսում են տնկել բնակավայրերն իրար հետ կապող ճամփեզրերին: Այնպես որ, փշատենին Հայոց աշխարհում նաև անխոս ուղեկցող է: Փշատենու շարքերը մարդուն տանում են դեպի գյուղ կամ քաղաք:

**ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**1980թ., Երևան**

## ՆՅՈՒԹԱԿԱՆԱՑՎԱԾ «ԾՈՎ, ԵՐԱԶԱՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՏՐԱՆՔՆԵՐ» ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Օգոստոսի 2-16-ը Գյումրիում մեկնարկեց արվեստի 5-րդ բիենալեն: Գյումրիի բիենալեն, որ առաջին անգամ կազմակերպվել է 1998-ին, նպատակ ունի Երևանում կենտրոնացված արվեստի միջոցառումները ապակենտրոնացնել, նաև մարզային համայնքներում աշխույժ մշակութային կյանք արթնացնել: Բիենալեն գնալով ավելի է մեծացնում իր շրջանակները, ներգրավելով ոչ միայն ավելի շատ երկրների անհատ մասնակիցների, այլև մշակութային կենտրոնների:

«Այսպիսի ֆորում գոյություն չունի ոչ տարածաշրջանում, ոչ էլ ԱՊՀ երկրներում: Մոսկվան միայն այս տարի է բիենալե կազմակերպել»,- ասում է արվեստագետ Ազատ Սարգսյանը: Այս տարի բիենալեն կրում է «Ծով, երազանքներ և պատրանքներ» խորագիրը, մասնագետների՝ արվեստի քննադատ Նազարեթ Կարոյանի, արվեստագետ Ազատ Սարգսյանի և Արփի Թոքմաջյանի հավաստմամբ, այն խորհրդանշում է հայերի նյութականացված երազը ծովերի նկատմամբ և, ընդհանրապես, տարբեր ազգությունների ներկայացուցիչ-մասնակիցների երազանքները:

Բիենալեին մասնակցում են 20 երկրների արվեստագետներ: Մինչև ցուցադրությունը բիենալեի մասնակիցները աշխատում էին Սևանի ափին (**«Ազգ», 01. 08. 2006թ.**):

**ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳԱՐՅԱՆ**

նը չէ, սակայն այն ավելի քիչ խնդիրներ է առաջացնում:

Անհրաժեշտ է հասկանալ, որ երեխան կարիք ունի ոչ միայն իր անձի նկատմամբ անմիջական սիրո, այլ ծնողների միջև սիրո, ընտանիքում սիրո ուժգին դաշտի առկայության: Որքան շատ է այն, այնքան ավելի բնական է ընթանում երեխայի զարգացումը, նա մեծանում է ջերմության ու ջրի բավարար քանակությամբ ապրող ծառի պես:

Ամփոփենք. մայրական սերը, և ծնողական սերը ընդհանրապես, նպատակ պետք է ունենա ոչ թե իրենով մեկուսացնել երեխային ողջ աշխարհից (անգամ եթե այդ մեկուսացումը պաշտպանության ու խնամքի անուն է կրում), այլ դաստիարակել ինքնուրույն անձնավորություն (բառի դրական իմաստով)՝ ընդունակ սեփական ուժերով առաջ գնալու և կյանքում առաջացող խնդիրները լուծելու:

**ՆԱՐԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
**Հոգեբան**

# «ՀԱՅ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԴԱՇՏԸ»

## 1. 1924 ԹՎԱԿԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐԹԼԵՆԴԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

1924 թվականի մայիսի 8-ը թե՛ ամերիկահայության եւ թե՛ ողջ հայ գաղթականության համար հավետ հիշատակելի և անմոռաց մի թվական պիտի մնա, որովհետև այդ օրը մի դատավարություն սկսվեց: Այն պետք է վերջնականապես որոշեր անչափ կարևոր մի հարց. հայերը կարո՞ղ են Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիություն ստանալ, և ովքեր արդեն քաղաքացիության իրավունք ստացել էին, կարո՞ղ են պահպանել: Փորթլենդի (Օրեհոնի նահանգ) օկրուգային դատարանում անցկացվող դատավարությունը պաշտոնական անվանում ուներ՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ ընդդեմ Թադոս Օ. Գարթոզյանի»: Այսինքն՝ պարզ էր, որ մեղադրողը (Plaintiff) նույն ինքը՝ Միացյալ Նահանգների կառավարությունն է, իսկ ամբաստանյալը (Defendant) թեև երևութապես առանձին մի անհատ էր՝ Թադոս Գարթոզյան անվանումով, իրականում հայ ազգն էր, որ բնակություն էր հաստատել ԱՄՆ-ում:

Դատավարությունը սկսվեց մայիսի 8-ին՝ հինգշաբթի օրը՝ առավոտյան ժամը 10-ին: Նախագահում էր դաշտային (ֆեդերալ) դատավոր Ջորջ Ս. Ի. Վուլուրբինը: Կառավարության կողմից հանդես էին գալիս Միացյալ Նահանգների օկրուգային դատախազ Ջոն Ս. Գոքը, Միացյալ Նահանգների օկրուգային փաստաբանի օգնական Սթերնսը, քաղաքացիական պաշտոնական տեղական հարցաքննիչ Վ. Ու. Թամլինսոնը: Ամբաստանյալի շահերը պաշտպանում էր փաստաբան Ջորջ Ուիլսի Մըքգեմենթը:

Դատախազը նախ մի գրություն կարդաց, որը պնդում էր, թե ըստ ճանաչված ցեղաբանների, մարդաբանների և ուրիշ հեղինակավոր գիտնականների, նաև՝ Ամերիկայի պատմության վաղ շրջանի նշանավոր մարդկանց տեսության, հայերն ասիական ծագում ունեցող ժողովուրդ են, ամերիկյան Սահմանադրության տրամադրած «սպիտակ ազատ անձերի» սահմանից դուրս են գտնվում, ինչ իմաստ, որ ունեին այդ բառերը ԱՄՆ-ի Սահմանադրության ընդունման ժամանակ՝ 1790-ին: Հետևաբար հայերը չեն կարող օրինական քաղաքացի դառնալ: Իսկ նրանք, ովքեր ստացել են քաղաքացիության իրավունք, կարող են զրկվել դրանից, ինչպես դա եղավ վերջերս ճապոնացիների և հնդկացիների պարագայում: Վ. Ու. Թամլինսոնը ոչինչ չուներ ավելացնելու, բացի Ջորջ Գոքի ասածները հաստատել:

Ի պաշտպանություն ամբաստանյալի՝ մանրամասն և համոզիչ ճառ արտասանեց փաստաբան Ջորջ Մըքգեմենթը: Նա պնդեց, որ հայերը, մասամբ լինելով Ասիայի մի մասի բնակիչներ, բառի նեղ իմաստով ասիական ժողովուրդ չեն, թե պատմականորեն ու գիտականորեն եվրոպական ժողովրդի «խնամիներ» են, կովկասյան ժողովուրդ, որ հանգիստ կարող են տեղավորվել ամերիկյան նախահայրերի ըմբռնած և 1790-ին հաստատագրված «սպիտակ անձանց» սահմաններում: Անարդար քայլ պիտի լինի նրանց քաղաքացիական իրավունքից զրկելը, առավել ևս նրանց, ովքեր ունեն այդ քաղաքացիության իրավունքը, ովքեր վաղուց արդեն աշխատանք և ունեցվածք ունեն այս երկրում: Իր հավաստիացումները հաստատելու համար փաստաբանն առաջարկեց լսել վկաներին և կարդալ նրանց գրավոր ցուցմունքները:

Որպես վկա՝ առաջինը հանդես եկավ Սեյլիմ քաղաքի բնակիչ, ծնունդով Կեսարացի Մարկոս Պ. Բարունակյանը, ով երկար տարիներ արդեն ԱՄՆ-ի քաղաքացի էր, ամուսնացել էր ամերիկուհի մի կնոջ հետ և Օրեհունի օկրուգային կիրակնօրյա վարժարանների տեսուչն էր: Նրան հաջորդեց Բաթ Մարտին Ֆերեշեթյանը՝ ծնունդով Արաբկիրից, ամերիկյան քաղաքացի, միադավան եկեղեցուն հարող մի կղերական, որի կինը ևս բնիկ ամերիկուհի էր: Ապա ըստ իրենց կարգի, ներկայացան դոկտոր Ջորջ Գ. Արմենը՝ Փորթլենդի ճանաչված բժիշկ, որի կինը նույնպես ամերիկուհի էր, Վաշինգտոն նահանգի Կեշմիր քաղաքի քաղցրավենիքի «Էփլլեթ» ֆիրմայի տնօրեն Ա. Լ. Դերձակյանը՝ բնիկ մարաշցի, ինքը արդեն Սիեթլ քաղաքի բնակիչ Գորդոն Լութիերը, նույն քաղաքից՝ միսիս Օթիս Ֆլոյդ Լեմսոնը, հանգուցյալ Հակոբ Թաշչյանի դուստրը ամերիկացի ճանաչված վիրաբույժի կինը, ինքը Թադոս Օ. Գարոզյանը իր երկու դուստրերը՝ օրիորդ Հեյզելն ու Օրին, Թադոսի եղբայր Արամ Գարթոզյանը: Նրանք հայտարարեցին, որ ամերիկացիներն ամենուր իրենց անվարան և անխտիր ընդունել են որպես «սպիտակ անձեր», որը հաստատվում է ոչ միայն իրենց արտաքին նկարագրությամբ, այլև ընտանիքի, ապրելակերպի, սովորույթների, մշակույթի եվրոպական ու ամերիկյան չափանիշներին համապատասխանությամբ:

Հետո ներկայացվեցին ամերիկածին մի քանի ամերիկացիներ, գաղտնի ընկերակցությունների և եղբայրությունների ներկայացուցիչներ, ովքեր հավաստեցին, թե զուտ «սպիտակ անձեր» պահանջող իրենց կազմակերպություններում շատ հայեր կան: Վկայություններ տվեցին Ու. Ա. Գայթը («Նայթս Օրթեր ավ Մուսի»), Լ. Ի. Կարտերը («Ինթիպենդընթ Օրթեր ավ Ատ Ֆելոզի»), Ք. Ք. Բրեթլին («Փորթլենդ Լաճ ավ Էլքսի», նաև՝ «Ոիթմեն ավ դը Ուերլթի»), Ուիլյամ Մ. Քեյքը («Նայթս ավ Փիթիասի»), Ջեյմս Ֆ. Ռոբինինսոնը («Մեսօնիք Գրենտ Լաճ ավ Օրեհոն»): Նրանք միահամուռ հայտարարեցին, որ «ճերմակ անձի» չափանիշների չհամապատասխանող որևէ անձ իրենց կազմակերպությունների անդամ լինել բնավ չէր կարող:

Ամերիկյան Փորթի միսիոներներից բժիշկ, դոկտոր Հ. Լ. Էնդերվուրդը, իր բազմամյա փորձառությունը հաշվի առնելով, շատ հստակ վկայեց, որ հայերն իրենց հայրենիքում ամենուր շատերի, այդ թվում նաև եվրոպացիների կողմից ճանաչվում են «ճերմակ ցեղ», թե Հայաստանի շատ գավառներում կապույտ աչքերը և բաց գույնի մազերը բավական տարածված են, թե ընտանեկան զարգացած կյանքով են ապրում: Այս իմաստով վկաների բազմության մեջ արժեր մատնացույց անել միսիս Լեմսոնին, որն իր հրապուրիչ անձով և ամերիկյան շրջանակների հետ իր լայն ծանոթություններով ու փոխշահավետ հարաբերություններով դատարանի վրա խոր տպավորություն գործեց: Եթե խնդիրը երդվյալ դատավորների (ժյուրի) մասնակցությամբ վճռելիք բան լիներ, ապա միսիս Լեմսոնի հարցաքննությունից հետո վստահորեն կարելի կլիներ ասել, որ դատավարությունն ի նպաստ հայերի պիտի վերջանար:

Բոլորից հետո ելույթ ունեցավ Վարդան Մալկլոմը, ով Նյու Յորքի հանձնախմբի կողմից պատրաստված ուսումնասիրությունից ներկայացրեց ընդարձակ մի ծանոթություն Եվրոպայում հաստատված հայ գաղութերի և Միացյալ Նահանգներում ապրող հայության մասին, ինչպես նաև՝ հայերի եվրոպական ծագման վերաբերյալ անցկացված հարցախույզի արդյունքները: Նյու Յորքի հանձնախմբի (որի անդամներն ամերիկածին ամերիկացիներ են) ուսումնասիրությունները հստակ երաշխավորում են, որ հայերը կարող են արագ ամերիկանացվել:

Դատարանին ներկայացվեցին Մինասյանի ԱՄՆ-ի քաղաքացիության վկայագիրը ստացված 1859 թվականին, Քրիստափոր Սերոբյանի վկայագիրը, որ տրվել էր 1850 թվականին, Նյու Հեյվընում, Գրմիշընը ավ Նեչըրէլիզեյ-

→

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍ. «ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՋԱՏԱԳՈՎԸ»

«Հայոց ցեղասպանություն», «Հայկական հարց», «Հայոց դատ». ամեն հայ անընդհատ ու անընդմեջ լսում ու արտասանում է այս բառերը: Իսկ մեծ երկրների քաղաքականության մեջ միշտ էլ գործել է մի նշանաբան, «Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր»: Բայց այդ տերություններում էլ մարդիկ են լինում, ովքեր անցնում են ոչ թե «դրության տիրոջ» կողմը, այլ՝ տուժողի ու ճշմարիտի. «Իմ առջև խնդիր չեմ դրել ստանձնել մեղադրողի, պաշտպանի կամ դատավորի դերը»,- ասում էր հայ ժողովրդի մեծ բարեկամ, ճշմարտության ջատագով Հովհաննես Լեփսիուսը: Նա ծնվել է 1868թ. դեկտեմբերի 15-ին, Բեռլինում: Հայրը Բեռլինի համալսարանի պրոֆեսոր ու գիտությունների ակադեմիայի անդամ էր, իսկ մայրը՝ աստվածապաշտ կին, ում փափագը իր վեցերորդ զավակին՝ Յովհաննեսին քահանա տեսնելն էր:

Լեփսիուսը, դպրոցն ավարտելով, ուսումնասիրում է աստվածաբանություն և փիլիսոփայություն, 1884թ. նշանակվում Երուսաղեմի դպրոցի ուսուցիչ: Այդ տարիներին միսիայի քահանա Ցելլերի ընտանիքի հետ շփումները շուտով վեր են ածվում բարեկամության. Լեփսիուսը ամուսնանում է Ցելլերի աղջկա՝ Մարգարետի հետ: 1886թ. վերադառնում է հայրենիք և ձեռնադրվում Ֆրիզդորֆի քահանա:

1895թ. դիվանագիտական հրապարակումից իմանում է Թուրքիայում սկսված հայկական կոտորածների մասին: Եվ 1896թ. Ջեյմս Գրինֆիլդի հետ ճանապարհորդում է Թուրքիայում՝ որպես գորգագործ: Նա իր իսկ աչքերով է տեսնում անգթաբար մորթվող ու կոտորվող հայերին և փորձում է օգնության ձեռք մեկնել: Հարավ-Գերմանական ընկերության 9.000 ֆրանկով Բալասում և Ուրֆայում հիմնադրում է երկու որբանոց: Այնուհետև փորձում է գերմանական հասարակության «աչքերը բացել», բայց «ձայն բարբառոյ յանապատի...»:

Բնականաբար, Լեփսիուսին հանդիպող խոչընդոտները քիչ և հեշտ հաղթահարելի չէին: Եվ նա ինչ-որ տեղ պետք է «դուրս գար» սեփական երկրի դեմ, քանզի Գերմանիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական շահերը թույլ չէին տա, որ «դավաճանեին» «եղբայր Թուրքիային»:

«Ես կարծում եմ ծառայած կլինեմ ճշմարտությանը, եթե սահմանափակվեմ այնքանով, որ թողնեմ՝ փաստագրական նյութերն իրենք խոսեն»,- ասում էր Լեփսիուսը: Փաստերը, դժբախտաբար կամ բարեբախտաբար, և՛ խուսում էին, և՛ քիչ չէին:

Փաստորեն, 33 տարեկանում Լեփսիուսն ապրում ու մաքառում էր հանուն ճշմարտության, ուներ իր կյանքի նպատակն ու խնդիրը: Հանուն այդ նպատակի ու խնդրի էլ նվիրաբերում է մնացած գործերն ու ցմահ պայքարում: 1896թ. օգոստոսին նա հրապարակում է «Հայաստանը և Եվրոպան: Մեղադրանք մեծ տերություններին, կոչ քրիստոնեական Գերմանիային» վավերագիրը, որը թարգմանվում է անգլերեն և ֆրանսերեն: 1899թ. հիմնադրում է անվտանգության յոթ կայան: Ուրֆայում կառուցում է հիվանդանոց, գորգագործական ֆաբրիկա, հիմնադրում է երկու ամսագիր՝ «Das reich Christi» և «Der christisch Orient»:

1899թ. ապրիլից մինչև դեկտեմբեր Լեփսիուսը Հյուսիսային Կովկասով հասնում է Երևան, հետո՝ Ուրֆա: Կ. Պոլսում, Լոնդոնում և Փարիզում հանդես է գալիս որպես դիվանագիտական միջնորդ, 1913-14թթ. Գերմանիայում հիմնում է Գերմանա-հայկական միությունը: 1908թ. կնոջ և տասներկու երեխաների հետ տեղափոխվում է Պոտսդամ:

Առաջին համաշխարհային պատերազմի քողի տակ թուրքերը փորձեցին հագեցնել իրենց անհագ ծարավը. «Ուզեցին մեկ հայ թողնել, և այն էլ թանգարանում» (Պարույր Սևակ):

1915թ. հոկտեմբերի 7-ին Գերմանիան հրապարակում է ցուցմունք, որտեղ գրված էր. «Հայկական սարսափի մասին պետք է ասել հետևյալը՝ հայերը խիստ կերպով գրգռել են Թուրքիային»: Սակայն 1916թ. Լեփսիուսը հրատարակում է «Հաղորդագրություն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» 20.000 օրինակով: Բեռլինում Լեփսիուսին համարում են «անվստահելի անձ» և թուրք դեսպան Խակիի դրդմամբ որոշում նրան զկել գործելու թույլտվությունից՝ մերժելով բոլոր վիզաները: Նա մեկնում է Իռլանդիա, կապ պաշտպանում անգլիական պետական գործիչ, հայերի պաշտպան Բրայսի հետ: 1919թ. Լեփսիուսը հրատարակում է «Գերմանիան և Հայասատանը 1914-1918թթ.», որը փարիզահայերին է հասցնում նրա մտերիմ բարեկամ, Գերմանա-հայկական ընկերության անդամ, հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: 1921թ., երբ կայանում է Ս. Թեհլիրյանի դատավարությունը, Լեփսիուսը հանդես է գալիս, որպես փորձագետ՝ իր ճառով նպաստելով Ս. Թեհլիրյանի ազատ արձակման դատավճռին:

1925թ. ամռանը աշխատանքի բռվում հյուծված ու անառողջ Լեփսիուսը մեկնում է Տելան՝ բուժվելու, որտեղ և 1926թ. փետրվարի 3-ին կնքում է իր մահկանացուն: Երկնային կյանքի է գնում՝ իր հետ տանելով ճշմարտությանը ծառայելու իր նվիրվածությունը, երկրային կյանքում կիսատ թողնելով հայ-գերմանական ակադեմիայի ստեղծումը:

**ԱՐՓԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

---

շրջ կազմակերպության ներկայացուցիչ Ռայմոնդ Ֆ. Քրիստեգի նամակը, որը հավաստում էր, թե իր կազմակերպության բյուրոն երբեք չի մերժել հայերի անդամակցությունը…

Ջորջ Մըքգեմենթն ի վերջո անչափ կշռադատված ու փաստարկված մի ուղերձ հղեց դատարանին, որում ամփոփեց ներկայացված ապացույցների արժեքն ու կշիռը և, ակնարկելով Կոնգրեսում կատարված քննարկումները, հայտարարեց, որ Միացյալ Նահանգների Սահմանադրության ստեղծողների մտքով անգամ չէր կարող անցնել եվրոպական ազգ համարվող հայերին մերժել ԱՄՆ-ի քաղաքացիության հարցը քննելիս: Ի տարբերություն ծայրագույն Արևելքի ժողովուրդի դեմ դրված արգելքի, հայը նույնիսկ իր հայրենիքում էականորեն տարբերվել է թուրք, քուրդ և մահմեդական բնակչությունից ոչ միայն իր քրիստոնեական հավատքի պատճառով, այլև իր մեջ ոչինչ ասիական չունեցող իր կենցաղով ու վարքուբարքով:

Մինչ օկրուգային դատարանի վճռի հետ ծանոթանալն արժե ուսումնասիրել դատավարության պաշտոնական արձանագրությունը: Նշենք, որ դատավարության ժամանակ հարցաքննվել են գիտնականներ, բժիշկներ, ուսանողներ, որոնց պատասխանները գալիս են ժխտելու «սոված հայերի» մասին առասպելը, որը շատ էր խանգարում հայերին՝ ԱՄՆ-ի քաղաքացիություն ստանալիս: Դատարանը ցանկանում էր հավաստիանալ, որ հայերը եվրոպական արժեքներ կրող մարդիկ են և հույս կարող են ունենալ՝ այս երկիրի քաղաքացիություն ստանալու համար դիմումներ գրելիս:

**ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ**

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ. ԱՐԱՐԱՏ

Խաչատուր Աբովյանը Հ. Պետերմանին Դորպատից Բեռլին գրած իր նամակներից մեկում (Խ. Աբովյան, Երկերի Լիակատար Ժողովածու, հ. 10, էջ 177-178) գրում է. «...Չեք ձանձրանա, եթե ես մեր բարեկամության սկիզբը դնեմ՝ մի հայկազուն պատանի բարեկամի ստեղծագործություն մատուցելով: Պարոն Պարրոտի ճանապարհորդությունը, որին նաև ես գործակից եղա, մի նորահրաշ դեպք էր, որ շատերի սրտերի համար էր ցանկալի հաղորդակցվելու իր գրավչությամբ: Ես չեմ կարող Ձեզ պատմել, թե այն ինձ ինչպիսի ուրախություն պատճառեց, բայց հիմա ցավով եմ լսում, թե եվրոպացիներից շատերն են տարակուսում դրա մասին: Ինձ հայտնի է, թե որքան խակ է իմ միտքը և որքան է սա ընդդեմ համեստության, իմ գրվածքները անձամբ հրապարակելը, սակայն այդ տարակույսը փարատելու համար եմ ուղարկում հետևյալ ոտանավորը Արարատ լեռան ճանապարհորդության մասին»: «Արարատ ճանապարհորդության մեր գնալուց մի ամիս հետո գրեցի սա 1829թ. Երևանում, տակավին չիմանալով բանաստեղծություն գրելու կանոնները»:

## Արարատ լեռան ճանապարհորդության վերհուշը

1

Հանդարտաշրշյուն մարմանդ հողմաբեր մեղմ զեփյուռի օրով,
Ելա շրջելու սուրբ Մասեաց լեռան ես ծոցով.
Պատկերը ցնծալի այս կաթոգին բարձունքների երկնային
Հափշտակությամբ էր գրավում մարմինս ու հոգուս ջղերն անձկագին:

2

Խոնջացած, հոգնած անհարթ ելևէջներից այս ճանապարհի,
Հանգիստ էի փնտրում ուղևորս օտար՝ անծանոթ տեղին:
Մտա այս լեռան ժայռոտ բլուրներից մեկի մի անձավ,
Մտա սփոփելու գիշերվա քնով տրտմությունս ցավալի դառնաղետ ուղուց:

3

Դեռ չէին բացվել արծաթածույլ թևերի ծալքերն արեգակի,
Դեռ չէր պարզվել խավարչտին մեգը գիշերի:
Հազիվ, կորեկոր սևեռահայաց՝ տեսնելու հույսով,
Այնտեղ գետնամած, դիակի նման, մեկնված էի անշշունջ:

4

Մտնելով սքանչելի այս վայրը սուրհանդակը բևեռային աստղի,
Գոռում էր, մռնչում, որոտով զարկում երեսին ժայռի:
Առաջանալով մոլեգին այրմամբ դժնդակ թափով ամեհի խոռոչներ ու ծերպ,
Քանդում, կործանում էր ծյունաշեն հարկի ամրություն, պատվար:

5

Ու հարվածելով այդ զվարթագին չքնախագեղ լանջին,
Կոծում էր, տարուբերվում այնտեղ, սասանվելով ճայթում հեծեծագին:
Անդին այգն արհավիրքներով, և լուսաբերն ահով, տեղն այն պատեցին.
Անկողնումս քարե ո՛չ քուն էր աչքերիս գալիս, ո՛չ՝ հանգիստ սրտիս:

6

Ո՜վ Մասիս, Մասի՛ս, զարհուրած հեկեկում էի այնտեղ բեկբեկուն.
Ե՞ս եմ մեղավոր, որ վրաս խոյացան արհավիրքները քո:
Պատասխան չեղավ: Եվ ես ցավագնած արևելք դարձա,
Դարձա ողբաձայն, պատռող գոչմամբ ուժգին հառաչման:

7

Ո՞ւր ես առավոտ, ո՞ւր քաղցր արշալույս, արև գերարփի
Ո՞ւր եք բարերար, խավարահալած ծնունդներ երկնի:
Ելեք՝ այս անձկալի մթից խորտակված հոգուս դուք՝ կազդուրիչներ,
Իջեք՝ այս վիհը թակարդող, ուր ահասարսուռ ոսկրերս են մաշվում:

8

Ասացի ու այնտեղ ընկա կիսամեռ՝ բլրի խոռոչում,
Ուր օթևանս էր, մահաբեր գիշերս անցկացնելու:
Տիրեց լռություն, պապանձվեց որոտ, շառաչներն ամպրոպի
Գլխավերևով, թիկունքովս, մեկ՝ թևատակերով, ոտքերիս տակով շողարձակելով հյուլեներ անցան:

9

Անձավի մուտքից տարածվեց վրաս քնքուշ ջերմություն,
Մարմնիս փարելով, մեղմով կենդանացնում էր մարմինս ընդարմացած ցրտից:
Փափուկ շոշափմամբ մերթ՝ ոտք, մերթ՝ գլուխ, մերթ դաստակները ձեռքի,
Տրորելով զորացնում էր, մղելով դեպ աշտանակը սուրբ լեռան գագաթի:

*(Շարունակելի)*

**Թարգմանությունը ԱՐԱ ՁՈՒՐԱԲՅԱՆԻ**

# ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ ԿԱՐԱՎԱՆԱՊԵՏԻ ՃԱՆԱՉՄԱՄԲ

## Ա) ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ (1872 Կ.Պոլիս-1954 Փարիզ)

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՃԱՆԱՉՈՒՄ ԱՅԼ ԿԵՐՊ ԵՒ ԿԱՄՈՒՐՋ ՄԱՐԴՈՒ ԵՒ ԱՍՏՑՈ ՄԷՋ ՔԱՆ ՑԵՂԸ: ՑԵՂԸ... ՈՒՂԻՆ Է: ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ - ԴԱ ԵՐԿՈՒՆՔ Է ԱՐՄԵՆԱԿԱՆ ՑԵՂԻ ՈԳՈՒ: Հայկ Ասատրյան, Հատընտիր, Երևան, 2002, էջ 53

«...Բարոյապես մեռցնելու համար անտաղանդներն ու սնոտիները, գեղեցկութեանց մուրճ կը շարժուի արդարութեան հարուածներով...»: Կոստան Զարեանին ուղղված Սիամանթոյի նամակից. գրված 1914-ին Ժնեւից: Տե՛ս, ավելի մանրամասն «Արեւմտահայ գրողների նամակների», «Գրական ժառանգություն», գիրք 6-րդ, պրակ 1-ին, Երևան, 1972, ԵՊՀ հրտ., էջ 298:

Կրթություն ստանալով նախ Կ.Պոլսի «Մաքրուհեան» դպրոցում եւ «Կեդրոնական Վարժարանում», Ա. Չօպանեանը աշակերտել է իր ժամանակի մի շարք ականավոր ՀԱՅ գրական - մշակութային գործիչների՝ այդ թվում, առաջին հերթին, Արեւմտահայ մտածումի կրողներից Եղիա Տէմիրճիպաշեանին:

Լինելով մեզանում ազգային արժեքների պատմամշակութային սկզբունքների բնազանցական կրող - հետեւորդ - առաջադրողներից, Չօպանեանը նորովի եւ յուրովի է մոտեցել ՀԱՅ մշակույթին եւ, մասնավորապես, գրականությանը՝ հնարավորություններ ստեղծելով մեր հին ու նոր գրական դեմքերից շատերին դիտելու համաշխարհային լույսի (փորձ) ներքո:

Երբեմն մարդկանց տաղանդը, կամքի ուժը... բոլորովին տարբեր շնորհները, «յամառութիւնը, անձանձիր հետաքրքրութիւն, մեծ բաներ կատարելու տարօրինակ խանդ, աշխատանքի այլապաշտ տարփանք մը... պատճառներ են որպէսզի այս հատկութիւնները զ'մեզ (ՀԱՅԻՆ) հանեն մեր միջինէն ու առաջնորդեն բարձր վարիչ դիրքերու»,-[1] այսպես է նաեւ հասկացել Ա. Չօպանեանին «ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» տաս հատորյակի հեղինակ Յ. Օշականը եւ շարունակել գրեթե նույն ոգով,- ՀԱՅԻ անցեալը տեսնելու իր կերպը զատվելով պատմաբանասիրական չոր, քիչ մը շատ գիտուն մեթոդներից, որոնք իր ժամանակին եւ մինչ օրս լինելով մշակութաբանական դրսեւորումներ՝ «գլխավորաբար Վիեննական Մխիթարեաններու հասկացողութեան մէջ» դպրոց կը կազմեն: Այս տեսակետից Մխիթարեաններու ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ եւ Չօպանեանի ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ինչ-որ նույնութեան եզրեր ունեն՝ իրենց գոյութեամբ ո՛չ միայն սոսկ հիացման առարկա լինելով՝ ազգային մյուս գործիչների համար (Տ. Չրաքեան, Դ. Վարուժան, Կ. Զարեան, Վ. Թէքէեան...), այլեւ իր գոյությամբ դարձել է դպրոց, ուր դարբնվել ու դարբնվելու է ՀԱՅ ՀՈԳՈՒ որոնմամբ գիտակցման խորհուրդը, այդ խորհուրդը կրողների ՀԱՅՔԵԱՆ հոգին կամ առավել որոշակի ՀԱՅԿԱԿԱՆԻ ինքնագիտակցումը՝ որպես այդպիսին: Համոզվելու համար օշականական դիրքորոշման ողջ ստույգության ու ճշգրտության մեջ, նախ դիմենք Չօպանեանի սերնդակիցներին եւ առաջին հերթին այն մտավորականին, որ ունեցել է բուռն գիտավեճեր Ա. Չօպանեանի հետ[2]:

1912 թ-ի հունիսի 12/25 Սելամսզից Սկիւտար ուղղված նամակում Տիրան Չրաքեանը գրում է. «Ազնիվ պարոն Չօպանեան.

Հաճույքով եւ երախտագիտութեամբ ընդունած եմ Ձեր վերջին երկը՝ «ՀԱՅ ԷՋԵՐ»-ը...

Ո՛չ միայն իբրեւ բարեկամ, ո՛չ միայն իբրեւ Ձեր տաղանդին ու գործունեութեանը հիացող, պարտ էի փութալ Ձեզի շնորհակալ ըլլալու, այլեւ իբրեւ ՀԱՅ[3]: Ձեր նոր այդ գործով անգամ մը ալ կը հայտնեք, թէ լավագոյներէն եք անոնց, որ սրտագին նուիրած են իրենց կարողութիւնն ազգային գիտակցութեան ու արժանապատվութեան զորացմանն ու պայծառացումին: Այս նպատակով կամ վախճանով մեր մեջ ց'այսօր կատարուած աշխատութեանց պետք եղածին պես տեղեակ չ'ըլլալուս համար կը վարանիմ ըսել, թէ լավագոյնն իսկ եք ԴՈՒՔ այն ՀԱՅԵՐՈՒՆ, որ ազգն ինքզինքն եւ օտարներուն ծանոթացուցած են՝ անոր անցեալին ի լոյս բերելով ինչ-որ կ'րնա վկայել անոր սիրտին ու հանճարին: ԲԱՅՑ, հավատացեք, կը բաղձամ, որ ՁԵՐ «Ն. Քուչակի դիուան»-ով, «Նաղարշ Յովնաթան...» եւ այլ հատորներով ...«ՀԱՅ ԷՋԵՐ»-ով, "Les Trouver - es Armeniens", Chants pop. Armeniens", L' Armeninie" etc. գործեր-ով, ՁԵՐ «Պ. ԴՈՒՐԵԱՆ»-ով, ՁԵՐ Մ. Պէշիկթաշլեանին նուիրուած երկերով, ինչ դժուար բան ՁԵՐ գործերը ցուցակագրել, այսինքն՝ ՁԵՐ ազգանուեր աշխատութեանց ակնածալի շարքով, եւ մանաւանդ զայն մեծապես արժեվորող այն բարձր կարողութեամբ, որ թափանցելու, տեսնելու եւ գնահատելու ՁԵՐ հեղինակութիւնն է, ստոյգ, անվիճելի եւ հարկադրիչ. կը բաղձամ, ի սրտէ, որ բոլոր ատոնցմով ԴՈՒՔ իսկ եղած ըլլաք ՄԵՐ (այսինքն՝ ՀԱՅԻ) ինքնաճանաչութիւնն ու ինքնահարգութիւնն աճեցնող, ազնուացնող ՀԱՅԵՐՈՒՆ ՄԵԾԱԳՈՅՆԸ:

Ամեն պարագային մէջ, մեր ժամանակակիցներուն մէջ այս մասին ՁԵԶԻ յետ համեմատելի մեկը չեմ գտներ: Այս ոգիով խոսած եմ յաճախ գրական դասերու ատեն կամ ուրիշ առիթներով եւ կը յուսամ, թե ՁԵԶ յանդեպ ինքզինքիս թույլատրած յապաղումներս քաւուած եմ այդ կերպով կամ կ'րնամ քաւիլ...

Մնաք բարեավ. ՁԵՐ ազնիւ, ՁԵՐ ԱԶԳԱՍԷՐ, տաղանդին կը մաղթեմ միշտ ավելի ուժ, որպեսզի ՄԵՐ ՄՏԱՎՈՐ հարստութիւնն օժտել շարունակեք ԱՆՀԱՏԱԿԱՆ - ՁԵՐԱՅԻՆ եւ միեւնոյն ատեն ազգային յիշատակարաններով...»[4]:

**ՎԱՐԴԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

**ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Տե՛ս, Օշական Յ., Համապատկեր Արեւմտահայ գրականութեան, տաս հատորով, Երեւսաղեմ 1952,Հ. 5, էջ 305,

2. Դեռեւս «Պէրպէրեան Վարժարանում» սովորելու տարիներին պատանի՝ տասնվեց տարեկան Չրաքեանը բուռն գիտավեճ է ծավալել ո՛չ միայն իր վարժապետների այլեւ շրջանավարտ Ա. Չօպանեանի հետ՝ տպագրելով «Բանաստեղծութեան Վախճանը» հոդուածը՝ ընդդեմ շրջանավարտ Ա. Չօպանեանի. տե՛ս այդ մասին Չրաքեան Տ. երկեր, Երեւան 1981, էջ 5, 312: ...իսկ այն ժամանակ, երբ Ա. Չօպանեանը ՀԱՅ մտավոր փաղանգին է ներկայացրել իր նախագիծը՝ «Կեդրոնական Վարժարան»-ը Համալսարանի վերածելու ծրագիրը, որպես առջնակարգ եւ հմուտ վարժապետի որպես ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ներկա կողմնակից, Ա. Չօպանեանը իր գործընկեր-կոլեգաների թվում ցանկացել է տեսնել հատկապես նույն Չրաքեանին. տե՛ս. այդ մասին ավելի մանրամասը «Հայաստանի Կոչնակ» Նիւ Եորք 1939, 18-39 համարներում, մաս 2-րդ, էջ 691-692:

3. Այստեղ, այսօրինակ արտասանվող ՀԱՅ բառի հետ ունենալով հայրենապաշտական ձեւի անմիջական գիտակցում, ընթերցողին խորհուրդ է տրվում եւ կամ էլ առաջարկվում է ո՛չ միայն բուն գովեստի իմաստի հետ հարաբերուել, այլեւ փորձել մուտք գործել արտասանութեան մոդուլիացիայի, մտքի կշռույթի մեջ, ուր թաքնված ձեւում շատ ավելի բան է ասվում:

4. Տե՛ս, Արեւմտահայ գրողների նամակների, ԵՊՀ-ի Գրական ժառանգութիւն, հրատ. պրակ 1, Երեւան 1972, էջ 281-281:

# ԾԱՆՈԹԱՑԵՔ.

## ՀԱՅ ՄՏՔԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ, Հ Ա Լ Ե Պ

Հայ Մտքի Բարեկամներս (կրճատ՝ ՀԲՄ) տարիներէ ի վեր սովորութիւն դարձուցած ենք, ձմռան ամիսներուն, ամէն երեքշաբթի օր, հաւաքուիլ կլոր սեղանի շուրջ, զրուցելու եւ քննարկելու ընդհանրապէս հայութիւնը եւ մասնաւորապէս հալէպահայութիւնը յուզող ազգային հարցեր: Խորապէս համոզուած ըլլալով մարդկային մտքին անսահման հնարաւորութիւններուն եւ յատկապէս հայ մտքի ուժեղ կարողութիւններուն, մտքի երեկոյներու ընդմէջէն կը փորձենք ձերբազատել հայ միտքը կաղապարումներէ, անոնց տեղ արմատաւորելու առողջ ազգային մտածելակերպ ու հոգի:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏԸ

ՀՄԲ-ի մտային աշխատանքներու ոլորտներն են՝ ազգային պատկանելիութեան, հայեցակարգի, գաղափարախօսութեան հիմնահարցերը:

Առ այդ, վերոյիշեալ հարցերու ազգային եւ միջազգային ըմբռնումներու եւսահմանումներու լոյսին տակ կազմակերպուած մտքի երեկոյներու ընթացքին, կը քննարկուին աշխարհաստեղծման, ազգերու առաջացման, հայ ազգի կազմաւորման, ազգային պատկանելիութեան ազդակներուն (հող, հայրենիք, պետութիւն, լեզու, մշակոյթ, եկեղեցի, բարքեր, սովորոյթիւններ...) համաշխարհայնացման գործընթացներուն, ազգային տնտեսական հզօրացման հնարաւորութիւններուն վերաբերող նիւթեր:

Նոյն նպատակներով կը կազմակերպուին հանդիպումներ, հայրենի, սփիւռքահայ եւ օտարազգի հիւրերուն հետ, որոնք քաղաքս կ'այցելեն, կ'ըլլան տարբեր առիթներով:

Աշխատանքային երրորդ ոլորտը կը կազմէ՝ մտքի երեկոներու ընթացքին քննարկուած նիւթերուն, հաւաքումը, մշակումը եւ մամուլի միջոցով հանրութեան մատուցումը:

Դէպի ապագայ ՀՄԲ-ը նպատակ կը հետապնդէ կապեր հաստատել այլ հայկական գաղթօճախներուն մէջ գործող նման օրինակ խմբակներուն հետ, եթէ կան:

## ՄԵՆՔ ԿԸ ՀԱՒԱՏԱՆՔ

1. Աշխարհի բոլոր հայերն ունին մէկ ազգային պատկանելիութիւն:

2. Հայաստանը մեր հայրենիքն է, իր պատմական հողային ամբողջական տարածքով:

3. Սփիւռքի հայերը, տարագիր հայեր են:

4. Սփիւռքահայ համահայկական կեդրոնական խորհուրդի մը անհրաժեշտութեան:

5. Ազգային գաղափարախօսութեան մը կարեւորութեան՝ որպէս գոյատեւման միջոց:

6. Հայ ընտանիքին կարեւոր դերին՝ որպէս հիմնական բջիջն ազգային ոգիով դաստիարակութեան:

7. Ազգային մշակոյթի զարգացման եւ արժէքներու բացայայտման:

8. Հայ ազգի տնտեսական հզօրացման կարեւորութեան:

9. Հայերէն լեզուի եւ լեզուամտածողութեան տարածման, միասնական ուղղագրութեան կարեւորութեան:

10. Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ յետագայ դերին:

11. Հայ մտքի զօրութեան:

All rights reserved to normidk 2005
E-mail: info@normidk.com

# ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԻՎԱՅՐ ՇՐՋՈՒՄՆ ՈՒ ԽԵՂԱԲԵԿՈՒՄԸ ՄԵՐ ՕՐԵՐԻ «ՊՈԵԶԻԱՅՈՒՄ»

**2.** Կա՞րելի է հանգ թխել, հանգավորել խաչը հաչի ու հաչոցի հետ՝ գրելով. «Խաչ էր, և գիշերի ու շների երախում հաչոց ու հաչ էր» (Էդ. Միլիտոնյան, «Նոր թվարկություն», էջ 91):

Ընթերցող, սիրելիս, հավատա, թախծում եմ, որ երիտասարդ գրողների ժողովածուներում վերոհիշյալ ազգաթքանք «մտքերը» սփռված են առատորեն: Ահա թե ինչու, առիթից օգվելով, մի քանի խոսք էլ ասեմ «Գրական թերթի» անաստված նախկին խմբագրի՝ պարոն Նորայր Ադալյանի մասին, որն այդ ամենի դեմ ոչ միայն ոչ մի տող չի գրում, այլև թերթի էջերը առատաձեռնորեն նվիրաբերում էր դրանց հեղինակների գովաբանելուն:

Դատապարտելի է «անցյալի դժգույն ստվերների հետ ազատությունը կերած» այսօրվա գրչակիրների լեզվաջարդ վերաբերմունքը: Չեն ուզում հասկանալ, որ ազատությունը, խոսքի ազատությունը, մայրենի լեզվի նկատմամբ, լեզուն տակնուվրա, քարուքանդ անելու ազատություն չէ:

Նախալեզուն մեր ազգի պարծանքներից է, նախալեզու ունենալով էլ է հայ ազգը բացառիկ: Ինչո՞ւ է պոետը գրել. «Դղյակում հաչում էր նախալեզուն հասկացող շունը, նրա ցավը չէր կիսում պահլավերեն սովորած ձին, բելուջերենով խոսում էր ջորին» (Էդ. Միլիտոնյան, «Արևի ժամացույց», էջ 9):

Այսքան լեզվիմաց, լեզվագետ կենդանիների գոյությունը իրազեկող գրողին հարց տանք՝ ինչո՞ւ ինքը և շատ բանաստեղծներ, այդքան արգահատելի վերաբերմունք ունեն լեզվի նկատմամբ, այդպես անողոքաբար խեղաթյուրում են այն:

Բառապաշարը լեզվի հենքն է, հիմքն ու ողնաշարը: Հնչյունահիմաստային նվազագույն մասնիկը լինելով հանդերձ, բառը մեծագույն նշանակություն ունի լեզվում: Խոնարհումի երախտահատուցման է արժանի մեր արցյալի գրողների վերաբերմունքը հայերենի բառապաշարի, ամեն մի բառի նկատմամբ: Նաև դրանով է հիմնավորվում անհերքելի այն փաստը, որ անցյալի ողջ գրաքննության մեջ ոչ տեղին, սխալ իմաստով գործածված բառ չեք գտնի:

«Մի բառը մի աշխարհ արժի»,- ասել է Թումանյանը:

Ազատությունը, խոսքի ազատությունը գլխիվայր ըմբռնելու աղետալի հետևանքներից է աշխարհա... շնով փոխարինելը և գրել. «Բառը՝ այդ խեղճ ահագին շունը, լսո՞ւմ եք, հաչում է, երբ բակ եք մտնում, լսո՞ւմ եք, կաղկանձում է, երբ ելնում եք բակից» (Էդ. Միլիտոնյան, «Հիշատակի զանգեր», էջ 44):

Ազատությունը ըմբոշխնած մի այլ գրող էլ մրոտում է. «Խելակորույս քամին հիշում, կաղկանձում է ոսկե բառեր» (Հովիկ Հովեյան, «Թափառական ամառներ», էջ 26):

Անհանդուրժելի են նաև բառի մասին հետևյալ տողերը. «Բառը սպի է թղթի վրա, ժանիքով բացված վերքի սպի, ծովի ժանիքով և ավազի հողմի ժանիքով ու ասուպի» (Էդ. Միլիտոնյան, «Արևի ժամացույց», էջ 109):

Բառի նկատմամբ արգահատելի վերաբերմունքի անխուսափելի հետևանք է երկու տողում մի քանի բառի ու բառակապակցության սխալ գործածելը: Բանաստեղծը որտե՞ղ է տեսել ծովի ժանիք, ավազի ժանիք, կամ էլ՝ հողմի, ասուպի ժանիքները:

Լեզվամտածողության բացակայություն և բառիմաստի անթույլատրելի անտեսում է վկայում «Քաղցկեղ մութ ուռուցքը» անհամատեղելի է «վսեմ ու վեհի» հետ. «Եվ ծվատ պատկերները աչքերիդ թվում են խաղք ու ցուցք, ինչ վսեմ ու վեհ էր քաղցկեղի մութ ուռուցք» (Էդ. Միլիտոնյան, «Նոր թվարկություն», էջ 83):

Գրողը սխալ է օգտագործում նույնիսկ ջուր, հուր բառերը՝ գրելով. «Հայրս՝ ջուր, մայրս՝ հուր, միացան, ծնվեցի ես» (Էդ. Միլիտոնյան, «Նոր թվարկություն», էջ 85): Ջուրը հրին միանա, ոչինչ էլ չի ծնվի, պարզապես հուրը կհանգչի:

Բառը ոչ տեղին, սխալ իմաստով գործածելու նկատմամբ, խիստ վերաբերմունքն են վկայում ռուս գրականության ռահվիրայի հետևյալ խոսքերը. «Եթե ես թագավոր լինեի, ճիպոտի հարյուր հարված կհասցնեի այն գրողին, որը մի բառը սխալ կգործածեր» (Մաքսիմ Գորկի):

Դե եկ, լեզվաբան ու մի խենթանա տպագրված տեսնելով բառի մասին հետևյալ արգահատելի մտքերը. «Նա ճեղքել էր բառը և նրա միջուկային շողերով խաղում էր էյնշտեյի բեղերի ու թարթիչների հետ» («Նոր թվարկություն»), կամ «Բանաստեղծը սեղմում է բռունցքը և աչքերից հոսում են բառերը: Բանաստեղծը սեղմում է կոպերը և ձեռքերից հոսում են բառերը: Նա ոչ մի բառ չգիտեր ծնվելուց առաջ և ոչ մի բառ չգիտեր մեռնելուց հետո» («Հիշատակի զանգեր»):

Սանձազերծ մի անձ էլ գրել է. «Բառը կանգնեցրի Բաղրամյան պողոտայի վրա, մեքենաները եկան, տարան նրան, չարչարեցին, ստորացրին, հղիացրին» (Արփի Ոսկանյան, «Ծիկ», էջ 109):

Հարգամեծար ընթերցող, ներողամիտ եղիր, ցանկանում եմ անմեղսունակությունը հավաստող տողերի հեղինակին դիմելով, ձայնել. «Բառի փոխարեն, դո՛ւ կանգնեիր Բաղրամյան պողոտայում»:

Նույն գրչակիրը խոսքի ազատությունը նույնացրել է մարդակերության հետ, գրելով. «Դու կարող ես ուտեստներ պատրաստել իմ օրգաններից».... Կարծում եմ, որ լյարդս տապակած վիճակում, պետք է, որ համով լինի, չմոռանաս սոխառածը» (Արփի Ոսկանյան, «Ծիկ», էջ 9):

Խոսքի ազատության տենչալի հասկացությունը գլխիվայր շրջելն ու հիմնովին խաթարված ընկալելու անխուսափելի հետևանքն է նաև այն, որ վերջին տարիների «պոեզիան» ողողված է անմիտ, անիմաստ, տգեղ, բարոյական չափանիշները ոտքի տակ տվող հանգերով:

«Մենք խրվել ենք էս կյանքի մեջ, էս պաղի ու էս տաքի մեջ, բիբլիական էս ծովի մեջ, պապենական էս քաքի մեջ» (Արմեն Շեկոյան, «Անտիպոեզիա», էջ 44): «Մուշեղի պորտը» ոտանավորում կարդում ենք «Այնտեղ մոլորված հատիկը գարու ասում է՝ տատիկ դու ե՞րբ ես գալու» (Էդ. Միլիտոնյան, «Ընտանեկան համերգ», էջ 26) կամ՝ «Շունը առևտուր է անում շունկայում, շների շուկան այդպես է կոչվում: Մուկը առևտուր է անում մունկայում, մկների շուկան այդպես է կոչվում» (նույնը): Դատապարտման է արժանի ոտանավորը հանգավորել հայերենի բառապաշարում երբևէ գոյություն չունեցող, լեզվի բառակազմական ավանդույթներին խորթ, ինքնաստեղծ «շունկա», «մունկա» բառերով: Այդ ի՞նչ սեր է պորտի նկատմամբ, որ մի այլ տեղ էլ նա գրել է. «Արևը լծված շոգ ամռան սայլին, գնում է, պորտը զարկելով սարին»: Արևի պորտը ո՞րն է:

**ՍԻՐՈՒԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ-ԹԱՓԱԼՑՅԱՆ**
**Բանասիրական գիտությունների թեկնածու**

# «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

«Սասունցի Դավիթ» դյուցազնավեպն իր սկզբնավորման պահից մինչև ներկայիս վերջնական տեսքով ձևավորվելը իր մեջ ընդգրկել է շատ կարևոր պատմական դեպքեր ու իրադարձություններ, որոնք այս կամ այն կերպ ազդել են ազգի ճակատագրի վրա և տեղ են գտել նրանում այնպես, ինչպես դրանք ընկալել ու պատկերացրել են բանասացները, հաճախ էլ ժանրին բնորոշ ձևով, փաստերն ու կերպարները ներկայացնելով այնպես, ինչպես իրենք կցանկանային, որ լինեին: Առհասարակ, պատմական եղելություններն ինչքան հեռու անցյալում են կատարվում, այնքան շատ են աղավաղվում դրանց արձագանքները դյուցազնավեպերում, որոնք մեծ չափով կախված են լինում ոչ միայն պատմիչների հիշողությունից, այլև կրում են ոչ հեռու անցյալի իրադարձությունների ազդեցությունը, երբ ավելի թարմ տպավորությունները խամրեցնում են անցյալի շատ ավելի կարևոր դեպքերի հիշողությունը: Նման դեպքերում պատմիչները հաճախ են մտցնում իրենց շտկումները՝ հարմարեցնելով դյուցազնավեպի բովանդակությունը իրենց ժամանակի հայտնի դեպքերին ու պատկերացումներին: Մյուս կողմից՝ երբեմն աղավաղվում են նաև առանձին դրվագների ժամանակային, հաջորդական ու պատճառական կապերը:

Որքան հայտնի է պատմությունից, դյուցազնավեպի «Սասունցի Դավիթ» անվանումը և մյուս հերոսների անուններն ու կերպարները ծագել են արաբական զավթիչների դեմ 9-րդ դարում Սասունի ժողովրդական հուժկու ապստամբության ղեկավարների ու հերոսների կերպարներից (Չենով Օհան - Խութեցի Հովնան՝ ապստամբության ղեկավար, Դավիթ՝ պատանի զինվոր, որը նետահարեց արաբների զորավար Յուսուֆին և այլն): Փաստորեն, «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպը հիմնականում ձևավորվել ու ներկայիս տեսքն է ստացել այդ դեպքերի ազդեցության տակ, հիմնված լինելով հեռավոր անցյալում կատարված իրադարձությունների վրա, որոնք տարբեր ուղիներով ու միջոցներով հասել են մինչև տվյալ ժամանակաշրջանը:

Դյուցազնավեպում Սանասար-Բաղդասար առաջին ճյուղը սկսվում է Հայաստանի վրա Բաղդադի խալիֆի հարձակումով և հայոց Գագիկ թագավորի հետ հաշտություն կնքելով՝ վերջինիս դուստր Ծովինարին խալիֆին կնության տալու պայմանով: Ստացվում է, որ կարծես պատերազմ սկսելու պատճառը միայն դա է, և նույնիսկ խալիֆը համաձայնել է մեկ տարի չկենակցել նրա հետ: Այս ճյուղի ենթատեքստում նկատելի են պատմական խոր արմատներ:

Դյուցազնավեպն ուսումնասիրողները միահամուռ գտնում են, որ Սանասար-Բաղդասար ճյուղի հերոսների կերպարներում առկա են Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդիների կերպարները, որոնք իրենց հորը սպանելուց հետո ապաստան էին գտել Արարտայի (Ուրարտու) թագավոր՝ Ռուսայի (հավանաբար

Արուշան) կողմից, և նրանից ստանալով ընդարձակ տարածքներ, նույն թվում նաև Սասունը, սկզբնավորել էին Արծրունի նախարարական տոհմը: Պատմությունից հայտնի է, որ այդ դեպքը տեղի է ունեցել Ք.ա. 7-րդ դարում (այդ մասին հիշատակված է նաև Աստվածաշնչում): Թվում է, թե դյուցազնավեպի առաջին ճյուղը սկիզբ է առնում այդ ժամանակներից, սակայն վերլուծությունը այլ իրողություններ է բացահայտում:

Ակներև է, որ Բաղդադի խալիֆի հարձակումը կապ չունի արաբական արշավանքների հետ, որոնց ժամանակ հիմնական զորատեսակը հեծելազորն էր: Ըստ պատումի՝ պարտված խալիֆը փախչում է ուղտով, այսինքն, հնարավոր է, որ այդ ժամանակ առհասարակ հեծելազոր չի եղել և հարձակվող զորքը եղել է հետևակ: Մյուս կողմից Բաղդադի խալիֆը՝ ինքը, մահմեդական կրոնական ղեկավար էր, իսկ իսլամը կուռքերին շատ ավելի ատելությամբ է վերաբերվում, քան քրիստոնյաները, հետևաբար նա չէր կարող հանդուրժել կուռքերին ու կռքապետին, որոնց պաշտամունքի մասին հիշատակվում է դյուցազնավեպում: Վերջապես տարօրինակ է, որ Ծովինարը, իր զավակներին Հայաստան ճանապարհելիս, նրանց ուղարկում է դեպի արևելք, մինչդեռ Բաղդադի նկատմամբ այն գտնվում էր հյուսիսում: Համեմատելով հայտնի պատմական դեպքերի հետ՝ ակնառու է, որ առաջին ճյուղի պատումները իրենց վրա կրել են ինչպես 8-10-րդ դարերի արաբական հարձակումների, այնպես էլ շատ ավելի հին դարերում տեղի ունեցած իրադարձությունների կնիքը:

Տվյալ պարագայում անմիջապես ուշադրություն է գրավում հաջորդ ճյուղերում որպես թշնամական երկիր մշտապես հիշատակվող Մըսրը (Բաղդադը այլևս չի հիշատակվում): Ինչպես հայտնի է, հնում, ինչպես հիմա Մերձավոր Արևելքի շատ լեզուներում, «Մըսր» անվանում էին Եգիպտոսին: Իսկ Հայաստանի և Եգիպտոսի միջև պատերազմները և դյուցազնավեպում նկարագրված սերտ շփումները տեղի են ունեցել Ք.ա. 20-12-րդ դարերում, երբ Հայաստանը կոչվում էր Միտանի (գերիշխող Ամատունի նախարարական տոհմի անունով, այսինքն՝ Մովսես Խորենացու կողմից «Պատմություն հայոց» երկում հիշատակված հայկազյան թագավորների ժամանակներում) և նրա սահմանների մեջ էր մտնում նաև ներկայիս Պաղեստինի տարածքը՝ մինչև Սինայի թերակղզին (հավանաբար այդ տարածքների մասին էր ակնարկում Մովսես որենացին, երբ նշում էր, որ Տիգրան Մեծը կարողացավ միավորել համարյա բոլոր հայկական տարածքները), իսկ դա նշանակում է, որ նա սահմանակից է եղել Եգիպտոսին արևելքից, և հասկանալի է դառնում Ծովինարի պատգամը իր զավակներին, որ իրենց պապի՝ Գագիկ թագավորի երկիրը (այսինքն՝ Հայաստան) հասնելու համար պետք է գնալ միշտ դեպի արևելք: Նկատենք, որ հետա-

գայում Հայաստանը Եգիպտոսի հետ ոչ միայն շփումներ չի ունեցել, այլև սահմանակից չի եղել առհասարակ: Մյուս կողմից Եգիպտոսում քրմապետը (կռքապետը) մեծ ազդեցություն ուներ երկիրը կառավարելու գործում:

Միտանիի ու Եգիպտոսի այն ժամանակվա փոխհարաբերությունների մասին հայտնի են դարձել եգիպտական փարավոնների հայտնաբերված արխիվներից: Եգիպտոսում, փարավոնին վերագրելով աստվածային ծագում, միաժամանակ նրա իշխանությունը համարում էին օրինական, եթե նա ամուսնացել է այնպիսի արքայադստեր հետ, որի մայրական գծով բոլոր հնագույն նախնիները եղել են արքայադուստր-թագուհիներ: Այդ տեսակետից, հավանաբար, ամենավստահելի համարվում էին հայ արքայադուստրերը, և սովորաբար փարավոններն ամուսնանում էին նրանց հետ: Հնարավոր է նաև, որ նման սովորույթի պատճառն այն էր, որ որոշ պատմաբանների կարծիքով Եգիպտոսի պետականությունը կազմավորվել է Ք.ա. 3-րդ հազարամյակի սկզբում Հայկական լեռնաշխարհից դեպի Նեղոսի հովիտը արիների արշավանքների շնորհիվ, և այնտեղ հաստատված փարավոնների դինաստիաներն ունեին արիական ծագում: Նման ձևով նրանք ձգտում էին պահպանել իրենց այրունակցական կապը հայկական դինաստիաների հետ: Նման փոխհարաբերության մասին է հուշում նաև Մեծ Միերի մեկնումը Մսր և այնտեղ՝ նրանից, Փոքր Մելիքի ծնունդը, որն ըստ դյուցազնավեպի, փաստորեն, հանդիսանում էր Սասունցի Դավթի եղբայրը:

Այսինքն՝ իր դստերը կնության տալուց հայոց թագավորի հրաժարումը Եգիպտոսի փարավոնի համար կարող էր ճակատագրական լինել, և նրա կողմից պատերազմելն ու ստորացուցիչ հաշտությանը համաձայնվելը բացատրելի է:

«Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի մյուս ճյուղերում ևս առկա են դրվագներ, որոնք վերաբերում են առնվազն Ք.ա. 19-17-րդ դարերին: Օրինակ, հայտնի է, որ ներկայիս երկաթե դարը սկզբնավորվել է այդ ժամանակներում հյուքսոսների (կամ հայքոսների) արշավանքների շնորհիվ և այդ իմաստով արևմտաեվրոպական շատ հետազոտողներ այդ գործընթացն անվանել են մարդկային քաղաքակրթության զարգացման պատմության մեջ «հյուքսոսային հեղափոխություն»: Այդ արշավանքը սկսվել է Հայկական լեռնաշխարհից Ք.ա. 1710 թվին, որի ընթացքում հյուքսոսները հեծելազորով ու մարտակառքերով հարձակվել ու ջախջախել են հին աշխարհի ամենահզոր եգիպտական հետևակը, գրավել եգիպտոսի հյուսիսը և 130 տարի տիրապետելով, նրանք այնտեղ կառուցել են քաղաքներ ու ամրոցներ (Ավարիս մայրաքաղաքը, Շարահեն ամրոցը և այլն), կատարել բազմաթիվ բարենորոգումներ՝ կառավարման, տոմարագիտության, մաթեմատիկայի ու գիտության այլ ճյուղերում, նույնիսկ փորձել են եգիպտական հիերոգլիֆները փոխարինել սեփական տառերով: Արդյունքում եգիպտացիները (և բնականաբար նաև ամբողջ Մերձավոր Արևելքը), նրանցից սովորելով երկաթյա զենք ու զրահի, հեծելազորի ու մարտակառքերի, օգտագործումը, նրանց դուրս մղեցին Եգիպտոսից, հիմնահատակ կործանեցին նրանց քաղաքներն ու ամրոցները և նույնիսկ նրանց 130 տարվա տիրապետության ժամանակամիջոցը ջնջեցին իրենց տարեգրությունից՝ հրաժարվելով նաև բարենորոգումներից:

Նշվածից հետևում է, որ առաջին ճյուղում կատարված դեպքերը տեղի են ունեցել բրոնզե դարից երկաթե դարին անցնելու ընթացքում, ընդ որում դյուցազնավեպի սկզբի իրադարձությունները տեղի են ունեցել դեռևս բրոնզե դարում, այսինքն, նախքան հյուքսոսների արշավանքները: Այդ մասին է հուշում նաև Պղնձե քաղաքի մասին պատմությունը և հատկապես այն, որ այնտեղ Սանասարը օգտագործում է գուրզը: Հետագայում, Մսրա Մելիքը ևս Դավթի հետ մենամարտում է գուրզով: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել թրի և գուրզի օգտագործման առանձնահատկությունների վրա: Բրոնզի դարում, բնականաբար, զենքերի հիմնական տեսակները պետք է լինեին բրոնզից և ձուլված, քանի որ բրոնզից պատրաստված իրերը հնարավոր չէ պատրաստել ջերմամշակումով ու կռելով: Իսկ ձուլելով բրոնզից զրահներ ստանալը հնարավոր չէ: Նույնիսկ, եթե թուրը պատրաստեին բրոնզից, այն լավ չէր սրվի, իսկ հարվածելիս էլ շուտ կկոտրվեր, այսինքն՝ բրոնզե դարում մենամարտելու համար միակ զենքը բրոնզե գուրզն էր: Հայաստանում սովորել էին ոչ միայն վարժեցնել ձիերին, այլև ջերմամշակման միջոցով երկաթից կռել պողպատե թուր, զենք ու զրահ: Որ Թուր Կեծակին պողպատից էր, վկայում է անունը (այն նշանակում է՝ «կայծեր հանող թուր», իսկ կայծեր արձակվում է միայն պողպատը՝ պողպատին կամ ժեռ քարերին հարվածելիս): Սանասարի կողմից պողպատե զենք ու զրահը ծովի հատակից ստանալու դրվագում ակներևաբար գաղտնագրված է երկաթե առարկաները պողպատի վերածելու եղանակը՝ շիկացած վիճակում ջրի մեջ մտցնելով մխելու միջոցով:

Պողպատե զենք ու զրահով զինված, Քուռկիկ Ջալալին հեծած Սասունցի Դավթի կողմից Մսրա զորքին ջախջախելը բնավ էլ անհավատալի չէ, մանավանդ, որ թշնամու վրա թիկունքից հարձակվում էին մի բուռ հեծյալ սասունցի քաջեր՝ Քեռի Թորոսի առաջնորդությամբ:

Դյուցազնավեպը բրոնզե դարից սկսած՝ մինչև առաջին անգամ գրի առնվելը, ընդգրկում է 3800-4000 տարվա ժամանակահատված, և նրանում նկարագրված իրադարձությունները դիտվել են՝ որպես Հայաստանում կատարված, Միտանի հնագույն հայկական պետության ու եգիպտոսի փոխհարաբերությունները՝ որպես Հայաստանի ու Եգիպտոսի միջև փոխհարաբերություններ: Հայկական լեռնաշխարհում հայ էթնոսից բացի դյուցազնավեպն ստեղծողները և սերնդից սերունդ փոխանցողները այլ էթնոսների մասին պատկերացում չեն ունեցել, քանզի այդպիսիք չեն եղել, և այնտեղ ներխուժած օտար զավթիչների դեմ պայքարել են հայազգի հերոսները:

**ԷԴՄՈՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ**
**Արիական հետազոտությունների կենտրոն**

# ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայկական կերպարվեստի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի մոնումենտալ գեղանկարչությունը: Կերպարվեստի այս ճյուղը, թե գեղագիտական և թե նյութի առումով, անխախտելիորեն կապված է ճարտարապետական կառույցի հետ, և կազմում է վերջինիս անբաժանելի մասը: Մոնումենտալ գեղանկարչության ավանդույթները Հայաստանում գալիս են դարերի խորքից: Մեզ են հասել Գեղամա, Սյունյաց, Վարդենիսի, Տապանասարի, Արագածի և մի շարք այլ ժայռապատկերներ՝ թվագրված 3-1-ին հազարամյակներին:

Մոնումենտալ գեղանկարչությունը Հայաստանում հազարամյակներ առաջ համարվել է արվեստի յուրօրինակ արտահայտչամիջոց, որին խթան է հանդիսացել նաև այն հանգամանքը, որ Հայաստանը, լինելով լեռնային երկիր, հարուստ է եղել բնական ներկանյութերով:

Հնագույն որմնանկարներ են գտնվել Արարատի (Ուրարտու) թագավորության ժամանակներից:

Այս որմնանկարները (մ.թ.ա. 9-6դ.) հանդիսացել են պալատների ձևավորման մի ինքնուրույն ձև և լայն տարածում են գտել ուրարտական պետության մեջ: Որմնանկարներ են գտնվել ինչպես պաշտամունքային, այնպես էլ աշխարհիկ կառույցներում:

Էրեբունի (Երևան) ամրոցում գտնված որմնանկարները մեզ են հասել հատվածաբար, այնուամենայնիվ հնարավոր է պատկերացում կազմել, թե կոմպոզիցիոն ինչ կառուցվածք է ունեցել որմնակարը ի սկզբանե՝ հիմք ընդունելով բաղկացուցիչ տարրերի կրկնությունը:

Որմնանկարների այս նախատիպում պահպանվել է գույների թարմությունը և հնչեղությունը:

301-ին Հայաստանում պետական կրոն է հաստատվում քրիստոնեությունը: Այս շրջանում հիմնահատակ ոչնչացվում են հեթանոսական կառույցներն ու կուռքերը, որոնց տեղերում կառուցում են նոր հավատքի տաճարներ ու սիմվոլներ: Քրիստոնեությունը ընդունելուց հետո մասնակիորեն պահպանված ամենահին որմնանկարը կատարված է 4-րդ դարում: Այն դեկորատիվ ծաղկային կոմպոզիցիա է, և այստեղ զգացվում է հելենիզմից նոր դարաշրջան թևակոխելու դրոշմը:

4-5-րդ դարերից մեզ են հասել Քասախի, Երերուքի, Տեկորի բազիլիք եկեղեցիներից փոքր հատվածներ: Թե մանրանկարչությունը և թե որմնանկարչությունը կրել են գեղարվեստական ձևավորման ֆունկցիա: Ամենահին ձեռագիր նկարազարդված մատյանը դա էջմիածնի Ավետարանն է (6-րդ դար), իսկ մյուսը 887 թվականին արված Մլկե թագուհու ավետարանն է:

Մոնումենտալ գեղանկարչությունն ու մանրանկարչությունը թե ոճի և թե կատարման տեխնիկայի առումով ունեն շատ ընդհանուր գծեր:

Այս երկու ուղղությունները զարգացել են զուգորդաբար, իսկ բնության քայքայիչ ազդեցությունը ավելի շատ զգացվում է մոնումենտալ գեղանկարչության վրա, քանի որ, երբ ճարտարապետական որոշ կոնստրուկցիաներ կորցնում են իրենց ֆունկցիան, ապա քայքայման առաջին ծանր հարվածը հասցվում է որմնանկարչությանը:

Չնայած այս ամենին՝ 7-րդ դարից զարմանահրաշ որմնանկարչական նմուշներ են պահպանվել Լմբատավանքում, Կոշում, Թալինում, Արուճում, Կարմրավորում: Այս հուշարձանները կատարման ժամանակագրական առումով մոտ են իրար, այնուամենայնիվ, կատարման տեխնիկայի ու ոճի առումով նրանք բավականին տարբեր են: Ինչպես նշում է Լ. Ա. Դուռնովոյը, 7-րդ դարում Հայաստանը ունեցել է ինքնուրույն որմնանկարչական դպրոցներ:

Բագրատունիների կողմից պետականության վերականգնումից հետո (885թ.) երկրում աշխուժանում է մշակութային կյանքը: Ստեղծվում են մշակութային այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ Ախթամարի Սբ. Խաչ, Հաղպատի Սբ. Նշան, Տաթևի և Գնդեվանքի որմնանկարները:

10-13-րդ դարերը Հայաստանի համար համարվում է արվեստի բուռն զարգացման ժամանակաշրջան, ստեղծվում են Ախթալայի, Քոբայրի, Առաքելոցի, Կիրանցի զարմանահրաշ որմնանկարները, որոնք ունեն ամբողջական պահպանվածություն:

Բավականին լավ են պահպանված 17-19-րդ դարերի որմնանկարները: Այս շրջանը հատկանշվում է որպես գեղարվեստական արժեքների վերափոխումների ժամանակաշրջան: Որմանկարչության հիմնավոր սկզբունքները վերաձևավորվում են, առաջ է մղվում ինտերիերի բուսական մոտիվներով զարդարման սկզբունքը, իսկ ֆիգուրալ կոմպոզիցիաները իրենց չափով մոտենում են հաստոցային գեղանկարչությանը: Ստեղծվում են որմնանկարչական դպրոցներ Ագուլիսում, Շոռոթում, Աստապատում: Եթե նկարիչ Հովնաթանյան սերունդը համարվում է որպես հաստոցային գեղանկարչության փայլուն կատարող, ապա Հովնաթանյան սերունդը որպես որմնանկարիչներ ուսումնասիրված չէ: Այս շրջանից ամբողջական տեսքով մեզ են հասել Մեղրիի, Քանաքեռի, Գնդեվազի, Նորագավիթի, Մուղնիի եկեղեցիների որմնանակարները:

**ԱՐԺԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
**Որմնանկարների վերականգնման և պահպանման գլխավոր մասնագետ**

# ՍԱԳՐԱ ԲԵՐԴ

Սագրա բերդի (Սակռաբերդ, Սակրաբերդ) մասին հայ մատենագիրներից հիշատակում է Ղազար Փարպեցին (Պատմութիւն Հայոց, Կէ), որից կարելի է ենթադրել միայն, որ բերդը Ուրծա իշխանի ամրոցն էր: Հայսմ՝ կարելի է ենթադրել, թե այն գտնվել է հիշյալ տարածքում:

Ղևոնդ Ալիշանը ենթադրում է, թե բերդը հետագայում Երևանի նահանգի Երևան գավառում հիշատակված Հասանկալա ավերակ բերդն է: Ալիշանը, սակայն, հակված է այն զետեղել հին Ուրծաձոր գյուղի (որը ձորագավառի գլխավոր կենտրոնն էր) մոտակայքում, ինչը Մ. Հովհաննիսյանին տեղիք է տվել ենթադրելու, թե այն համընկնում է այժմյան Վերին կամ Մեծ Վեդիի հետ, որն անընդունելի է: Հավանական տեղադրություններից է նախկին Արարատի շրջանի Ղարաբաղլար (հետագայում ապաբնակեցված) գյուղի մոտակայքը (Ս. Երեմյանը Ուրծաձոր գյուղը նույնացնում է Ղարաղալայի հետ): Սագրաբերդ գյուղի մասին հիշատակություն կա դեռ XV դարում՝ իր Ս. Ստեփանոս եկեղեցով, ուր գտնվում էր և Ուրծա անապատը կամ վանքը՝ Արջառերեկը (ըստ՝ 1491թ. Յայսմավուրք հիշատակարանի):

Սագրաբերդի իշխանները՝ Ուրծեայք նախարարական տոհմը, հայկական ծագում ունի: Հայոց պատմության մեջ հիշատակված են տոհմի իշխաններից միայն մի քանիսը: Այսպես՝ Վարդանանց կռիվների ժամանակ հիշատակվում է «իշխանն Ուրծայ՝ Ներսէհ», որը բաժանվում է ուխտապահ նախարարներից (հարում Վասակյան թևին): Այնուհետև Ղ. Փարպեցին, արդեն Վահանանց կռիվների ժամանակ, հիշատակում է Վարազներսեհի և Կողթեկի անունները. «Եւ սեպուհ մի Ուրծացի, որում անունն էր Վարազներսեհ, որդի Կողթեկայ իշխանին Ուրծայ, որ էր յերդմանն ընդ նախարարսն Հայոց, նենգեալ ուխտին սրբոյ՝ երթեալ աւերէր զշահաստանն Բռնավիժի, և առեալ զամենայն կարասի շահաստանին՝ դիմեալ ամրանայր ի բերդն, որ անուանեալ կոչի Սագրայ բերդ, որ էր բերդ ամուր իշխանութեանն իւրեանց»: Հայսմ՝ մեզ հայտնի են դառնում Սագրա բերդի երեք տերերի անունները՝ Ներսեհ, Կողթեկ և Վարազներսեհ: Ղ. Ալիշանը պատմական աղբյուրների և հիշատակարանների մեջ փնտրելով բերդի մասին լրացուցիչ տեղեկություններ՝ 784-85թթ. Արճեշի արաբա-հայկական կռիվների ժամանակ ընկած Ուրծա գյուղի իշխանի մասին հիշատակությանն է հանդիպում: Հետաքրքիր է այն, որ Եղիշե պատմիչը Ուրծը (և Արծը) հիշատակում է որպես առանձին իշխանություն (ներ):

Այս ամենից զատ ուրիշ, ավելի ստույգ տեղեկություններ ցայժմ չկան և, ինչպես Ղ. Ալիշանն է նկատում, Սագրաբերդը լինելով Ուրծյան տոհմի ամուր ապաստանավայրերից, համենայնդեպս, տեղագրական ոչ մի ճշտման չի արժանացել ոչ մի աշխարհագրի և կամ ճամփորդի կողմից:

ՍՄԲԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՏԱՐՕՆ-ՄՈՒՇ

**Մեսրոպ Արք. Աշճեանի 1997թ. ուխտագնացութենէն**

Ամենածանրը Մուշն էր: Տղայ մը տեսայ: Ինծի համար Գեղամն է մշեցի, կամ Գեղամ Գեւոնեանը կրնայ ըսել՝ ես մշեցի եմ: Այդ քիւրտի լակոտը ինչո՞ւ պիտի կրնայ ըսել՝ ես մշեցի եմ: Գացինք ոստիկանատուն: Ոստիկանը շատ ազնիւ ընդունեցաւ: Խնդրեցինք, բացատրեցինք, որ շաբաթ օրը պէտք է Սբ. Կարապետ վանքը երթանք: Ես ծրագիր ունէի: Իրեն չըսի, թէ ինչ: Չեմ գիտեր հասկցա՞ւ, որ հայ ենք: Բայց պատի ցուցանակին տեսանք թերթի մը յայտարարութիւնը, ուր կ՚ըսուէր՝ ՓՔՔ-ն եւ հայերը միացան Թուրքիոյ դէմ: Վանք երթալու համար վալիին պէտք է միջամտէր: Գացինք վալիին տունը: Տունը չէր, յետոյ հեռաձայնով մեզ գտաւ, ըսաւ «երկու երեք օր ժամանակ տուէք, որ ճամբայ բանամ»: Տխրեցայ՝ կ՚ուզեմ երթալ Սբ. Կարապետ վանքը եւ չեմ կրնար: Մեր բանաստեղծի խօսքը ըսի՝ «Իրեն տէ՞ր կը կարծէ»: Բայց իրենք էին տէրը:

Մշոյ դաշտ գացինք: Ճամբան հանեցի «Մշոյ Սբ. Կարապետ» ընկերակցութեան կանոնագիրը: Չեմ գիտեր ընթերցողները գիտե՞ն, ես իբրեւ քրիստոնէութեան 1700-ամեակի գործադիր-վարիչ՝ ուխտագնացութեան յանձնախումբին ներկայացուցի եւ բարեբախտաբար ընդունուեցաւ, որ Մշոյ Սուրբ Կարապետը ըլլայ մեր հովանաւոր սուրբը կատարելիք բոլոր ուխտագնացութիւններու ատեն: Այդ անունով ալ ուխտաւորի անցագիր պատրաստեցի: Այդ անցագրի վրայ դրուած է Սբ. Կարապետ վանքի կնիքը, ուր գրուած է, որ այդ անցագիրը կը տրուի ուխտաւորներուն, եւ ամէն մէկ ուխտաւոր՝ ուր որ այցելէ, ուխտատեղիի եպիսկոպոսը պէտք է կնքէ անցագիրը: Կանոնադրութիւնն ալ գրած էի, սակայն չէի հրապարակած: Ուրեմն Յունիս 7-ն էր, տխուր-տխուր կ՚երթայինք Մշոյ դաշտը: Յայտարարեցի, որ այսօր Մուշի մէջ պիտի հիմնեմ «Մշոյ Սբ. Կարապետ» Միութիւնը: Եւ հետս եղողները ստորագրեցին որպէս վկայ: Անցագիրը ձեռքս նկարուեցայ: Ես ինձմով ուրախացայ: Թերեւս խնդան, սակայն ինծի համար խորհրդանշական բաներ էին:

Աղոթքի մրմունջ
Առաքելոց վանքի ավերակներում

Ուրեմն՝ «Մշոյ Սուլթան Սբ. Կարապետ» ընկերակցութիւնը պաշտօնապէս ստեղծուած է Մուշ, 1997, Յունիս 7-ին:

**Մուշ - Պիթլիս.** *1912-1913 Կ. Պոլսոյ պատրիարքարանին կազմած եւ օսմանեան կառավարութեան ներկայացուցած նախնական ցուցակներուն համաձայն, Բաղէշի կամ Պիթլիսի նահանգը ունէր 108 եկեղեցի եւ վանքեր: 1916-ին Մուշ մտնող ռուսական զօրքին հետ հայ կամաւորները կը յաջողին փրկել Սբ. Կարապետ վանքին գանձերը եւ զանոնք 4 եզաքարշ կառքերով կը փոխադրեն Էջմիածին: Կը փրկուին նաեւ Առաքելոց վանքի եբենոսէ դուռը եւ «Մշոյ Ճառընտիր» մագաղաթէ ձեռագիրը, որոնք կը փոխադրուին Երեւանի հայկական թանգարան: Տարօնը եղած է հայ գրչութեան կարեւոր*

*կեդրոններէն մէկը. Ամրտոլու եւ Բաղէշի միւս վանքերը երբեմն, բայց մանաւանդ 1895-96 թուականներուն եւ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն կողոպուտի եւ աւերման ենթարկուեցան:*

**Սրբազանի 2000 թուականի ուխտագնացութենէն** Աւելորդ է ըսել՝ Մուշը, քաղաքը, դաշտը, աշխարհ մըն է ինք իր մէջ: Մշուշի մէջէն կու գայ Մուշը՝ Վահագնի աչքերէն հեռու պահելու համար Աստղիկ դիցուհին պարածածկող մշուշէն: «…էն Մշոյ դաշտ կ'ըսեն հինգ հարիւր գեղ էր. էն Մեղրագետ կ'ըսեն հիվընդի դեղ էր»: Մշոյ դաշտին մէջ են մեր բազում սրբութիւնները՝ Սուրբ Կարապետ, Առաքելոց վանք, Սուրբ Յովհաննէսը: Բուն Մուշը Ծիրնկատար եւ Կորդուխ սարերու լանջին՝ 12 թաղերով քաղաք էր. եկեղեցի ու վանք, Առաջնորդարան: Առաջնորդարանը իր քարտուղարը ունէր, որ Մշոյ Գեղամն էր, Տատրակը, Գեղամ Տէր- Կարապետեանը: Գեղամին թոռն ալ իմ եղբայրն է, Բարիզ ծնած եւ մեծցած Գեղամ Գեւոնեանը, «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան հիմնադիրը: Գեղամը: Հիմա հետս է, կը պտտի, կը խօսի, կը զրուցէ, կը խանդավառէ:

Մշո Սբ. Առաքելոց վանքը 19-րդ դարում

Նոյն օրը կ'այցելենք Մշոյ Սուրբ Յովհաննու վանքը՝ Սուրբ Կարապետի ճիշտ դիմացը: Շիտակը շատ ծանօթ չէի այս վանքին, բայց ի վերջոյ, Մշոյ դաշտի երեք մեծագոյն վանքերէն մին էր: Եւ նոյն խանդավառութեամբ սկսանք մեր ճամբան՝ Մշոյ կեդրոնէն դէպի արեւմուտք: Մեր առջեւ Խորոնքն էր՝ Մովսէս Խորենացիի գիւղը:

**Խորոնք.** *Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարօն գաւառի գիւղերէն: Սբ. Կարապետ վանքի վանահայր Զէնոբ Գլակի համաձայն Խորոնքը Սբ. Կարապետի տասներկու դաստակերտներէն մէկն էր: Գլակ կ'ըսէ. «Խորնին ունի հազար ինը հարիւր վեց ծուխ, եօթ հարիւր հեծեալ եւ հազար եօթ հետեւակ»: 1880-ական թուականներուն ունէր 20 տուն, իսկ 1909 թուականին՝ 50 տուն հայ եւ 6 տուն քիւրտ բնակիչ, Սբ. Աստուածածին եկեղեցին եւ վարժարանը: Մինչեւ ցեղասպանութիւնը, բնակիչները կը զբաղէին հողագործութեամբ եւ անասնապահութեամբ:*

Չկեցանք, արդէն բան մըն ալ չէր երեւեր, բայց Հրայրի տեսախցիկին վրայ սկսայ կարդալ. «Թէպէտ եւ եմք ածու փոքր եւ յոյժ ընդ փոքու սահմանեալ… բազում գործս քաջութեամբ գտանին եւ ի մերումս աշխարհի», ու յետոյ՝ չկրցայ կրկնել Ողբը: Շատ դաժան էր, շատ իրական:

**Սբ. Յովհաննէս վանք.** *Կը գտնուի Մշոյ դաշտի հարաւ-արեւմտեան կողմը՝ Մուշէն 3-4 ժամ հեռու, Սիմ լերան փեշերուն, անտառախիտ դիրքի մը վրայ: Այս վանքը հիմնուած է Թադէոս Առաքեալի քարոզութեան ժամանակ: Յաճախ հանդիպող «Յաղագս Պատմութեան սուրբ եւ աստուածային իւղոյն» պատմութեան մէջ կ'ըսուի, թէ Թադէոս առաքեալ գալով Հայաստան այս իւղով օծելով բժշկած է Աբգարին, ապա Տաւրոսի լեռներուն մէջ կը գտնէ «վայելուչ տեղի ի հարաւային կողմն եւ էր անդ ծառ մի եղրդի եւ եդ անդ գիւղն աստուածային հրամանաւ…»: Ապա կ'ըսուի, որ Լուսաւորիչ լսելով՝ «հիմնարկեալ զեկեղեցի շինեաց յանուն սրբոյն Յովհաննու Կարապետին»: Այս վանքի գլխաւոր ուխտագնացութիւնները տեղի կ'ունենային Վարդավառին, Սբ. Աստուածածնին եւ Խաչվերացին:*

Բաւականին բարձրանալէ յետոյ ստիպուեցանք ինքնաշարժէն իջնել, եւ քիւրտ հովիւներու առաջնորդութեամբ բարձրանալ դէպի Կարմիր վանք: Բաօլօ Կունէօյի 1972թ. գրքին մէջ պատկեր մը կայ. եկեղեցին՝ իր բազում գմբէթներով կանգուն է դեռ. ո՞վ, ինչո՞ւ այդ իսկ տարիներուն որոշեց պայթեցնել, չեմ գիտեր: Հսկայ պատեր, զանգակատան մը մնացորդներ կը վկայէին թէ ինչքան մեծ էր:

Մշոյ երեք մեծ վանքերէն մին՝ Սուրբ Յովհաննէսը գրեթէ չէր զիջեր Սուրբ Կարապետին, թէեւ այս վերջնոյն հռչակը սփիւռքի մէջ ալ տարածուած է, հաւանաբար «Նանօր», Սուրբ Կարապետին նուիրուած երգերուն շնորհիւ: Վանքերն ալ, ըստ երեւոյթին, իրենց բաղդը, ճակատագիրը ունին: Հիմա՝ իմ վերադարձէս յետոյ, շատ աւելի բան գիտեմ այս վանքին մասին՝ ուր կը գտնուէր Մկրտիչի մասունքը. կոչուած էր Շիշ Իւղոյ վանք, քանի Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարդուղիմէոս այստեղ բերած եւ պահած են փիւնիկեան ձեռագործ կանաչ գոյնի շիշ մը՝ մէջը Քրիստոսի օրհնած իւղը: Այս վանքը կոչուած է նաեւ Արծուաբեր Սուրբ Նշան: Անոր ծառերուն վրայ էր, որ առատօրէն կ'իջնէր Մշոյ հռչակաւոր գազպէն, մեզի ծանօթ մանանան:

Մշո Սբ. Առաքելոց վանքն այսօր

**Մեսրոպ արք. Աշճյանի հուշերը տպագրության պատրաստեց ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ**